ՍՊԻՐԻԴՈՆ ՄԵԼԻՔՅԱՆ

Спиридон Меликян

II

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ
АЙПЕТРАТ
1953

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ

Спиридон Меликян

АРМЯНСКИЕ НАРОДНЫЕ ПЕСНИ И ПЛЯСКИ

Редакция
М. АГАЯНА

II

АЙПЕТРАТ
ЕРЕВАН
1952

ՍՊԻՐԻԴՈՆ ՄԵԼԻՔՅԱՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐ ԵՎ ՊԱՐԵՐ

Խմբագրությամբ
Մ. ԱՂԱՅԱՆԻ

II

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ
ԵՐԵՎԱՆ
1952

Ձևավորումը
նկարիչ՝ Կ. ՏԻՐԱՏՈՒՐՅԱՆԻ

Оформление художника
К. ТИРАТУРЯНА

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐՎԵՍՏՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՍԵԿՏՈՐ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
СЕКТОР ИСТОРИИ И ТЕОРИИ ИСКУССТВ

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԱՐՎԵՍՏՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՍԵԿՏՈՐԻ ԿՈՂՄԻՑ

Ներկա երկրորդ հատորով ավարտում ենք երաժշտագետ Սպիրիդոն Մելիքյանի ձայնագրած ժողովրդական երգերի ձեռագիր նյութերի հրապարակումը: Սակայն անհրաժեշտ ենք համարում նշել, որ ներկա հրատարակությամբ, իհարկե, չի սպառվում երաժշտագետ Սպ. Մելիքյանի երաժշտական ժառանգությունը: Ապագային թողնելով տպված և անտիպ ժողովրդական երգերի լիակատար ժողովածուի հրատարակությունը, մեր նպատակն է՝ երաժշտասեր հասարակայնությանը ծանոթացնել երաժշտագետի մինչև այժմ չհրատարակված, ժողովրդական երգերի լավագույն նմուշների հետ:

Այս հատորում զետեղված երգերը ձայնագրվել են Հայաստանում 1926—1927 թ. թ. և հանդիսանում են աշխատության 1949 թվին լույս տեսած առաջին հատորի շարունակությունը[1]): Այդ երգերը մեծ մասամբ հանդիսանում են XIX դարի ժողովրդական երաժշտական ստեղծագործության նմուշները և իրենց մեջ արտացոլում են հին կենցաղի սովորույթներն ու հասկացողությունները, որոնք Սովետական իշխանության տարիներին հետզհետե վերանալով տեղի են տալիս նոր կենցաղին և փոխհարաբերություններին: Նրանց մեջ մերթ-մերթ նկատելի են նոր կենցաղի առաջին արտահայտությունները:

Հրապարակվող երգերը կարևոր են ոչ միայն անցյալի երաժշտական կուլտուրայի պատմությունը հետազոտելու տեսակետից, այլև աչքի են ընկնում բարձր գեղարվեստական արժեքով և կարող են ծառայել որպես նյութ՝ երաժշտական նոր ստեղծագործությունների համար:

Հայ ժողովրդական բանահյուսության, մասնավորապես երաժշտական ֆոլկլորի հետազոտման հարցերով զբաղվողները անշուշտ կգնահատեն ականավոր երաժշտագետի երկարամյա քրտնաջան պրպտումների արդյունք հանդիսացող ներկա ժողովածուի հարուստ և բովանդակալից նյութերը—երգերը, պարերգերը, պարեղանակները:

Սպ. Մելիքյանը հավաքելուց և գրի առնելուց բացի, զբաղվել է իր հավաքած հազարի չափ երգերի տեսական ուսումնասիրությամբ և գրել է մի շարք աշխատություններ, որոնց մեջ հարցերի լուծմանը մոտեցել է միանգամայն ոչ ճիշտ երաժշտագիտության դիրքերից, կառչելով հին դոգմայական հայացքներին և հունա-բյուզանդական ազդեցությունների տեսակետին, դրանով իսկ, հակառակ իր ցանկության, ժխտելով հայկական երաժշտության ինքնուրույնությունը:

Ներկա ժողովածուի առաջին և երկրորդ հատորներում զետեղված երգերը, ինչպես և Կոմիտասի հավաքած բազմաթիվ երգերը և ուսումնասիրությունները հիմնովին հերքում են այդ սխալ տեսակետները և ցայտուն կերպով ընդգծում հայկական ժողովրդական երգի ազգային առանձնահատկությունները:

Ներկա հրատարակության երկու հատորներն իրենց գիտական ապարատով մի ընդհանրություն են ներկայացնում. առանց մեկի և մյուսի անհնար է ճիշտ ըմբռնել և գաղափար կազմել Սպ. Մելիքյանի հավաքած ու ձայնագրած ժողովրդական երգերի ամբողջության մասին:

Այս հատորը կազմված է հետևյալ բաժիններից.

1. Նոտային երաժշտական նյութեր, ձայնագրված երգեր՝ Սպ. Մելիքյանի.
2. Երգերի տեքստեր.
3. Պասպորտիզացիա և ծանոթագրություններ՝ Սպ. Մելիքյանի.
4. Խմբագրական ծանոթագրություններ և դիտողություններ՝ Մ. Աղայանի.
5. Բառարան:

Նոտային երաժշտական բաժինն իր հերթին բովանդակում է հետևյալ երգերը՝

1. Կիրովական—Ծաղկահովտի (Ղարաքիլիսա—Հաջի-Խալիլ).
2. Կոտայք—Ախտայի.
3. Նոր Բայազետի.

1) Տես Սպ. Մելիքյան, «Հայ ժողովրդական երգեր և պարեր» հ. I:

4. Սունփանավանի մանկատան.

5. Գուսանական.

6. Ազգրեջանական և քրդական երգեր ու պարերգեր:

Ընդամենը 260, առաջին հատորի երգերի հետ միասին՝ 533 երգ:

Ի տարբերություն առաջին հատորի, այստեղ գուսանական երգերը համախմբված են մի տեղ: Առանձին հատվածում են խմբված նաև ադրբեջանական և քրդական ժողովրդական երգերն ու պարերգերը:

Երգերի դասավորման մեջ, ինչպես առաջին, այնպես և այս հատորում նույն սխեմն է պահպանված, որպիսին տարբերվում է հեղինակային նախնական դասավորման սխեմից[1]: Սակայն բոլոր երգերի վերաբերյալ փակագծերի մեջ դրված են նաև հեղինակային համարները: Երգերից մի քանիսը նոր վերնագրերով են տպագրվում՝ փակագծում պահելով նրանց հեղինակային վերնագրերը:

Հատորի պասպորտիզացիան, որը հիմնականում կազմված է Սպ. Մելիքյանի կողմից և նրա թողած նյութերի հիման վրա, հնարավորություն է տալիս ծանոթանալ ձայնագրված երգերի վայրերին, երգողի ծննդավայրին, սոցիալական դրությանը, տարիքին, ապա՝ ումից է լսել երգողը, ո՛ր թվին և այլ հարցերին:

Ծանոթագրությունների բաժնում նշված են երգերի եղանակների և տեքստերի վարիանտները և նրանց աղբյուրները, ճշտված են չափը, տակտաբաժանումը, ֆրազները և այլն: Այս աշխատանքը կատարված է Արվեստների պատմության և տեսության սեկտորի ավագ գիտ. աշխատակից, Հայկական ՍՍՌ արվեստի վաստակավոր գործիչ բնկ. Մ. Ղ. Աղայանի կողմից:

Ժողովածուի առաջին և երկրորդ հատորների երաժշտական նյութերի նախնական խմբագրման աշխատանքներին մասնակցել է Հայկական ՍՍՌ և Ուզբեկական ՍՍՌ արվեստի վաստակավոր գործիչ Ք. Ս. Կուշնարյանը:

Ներկա հատորի երգերի տեքստերը տպագրության է պատրաստել և բառարանը կազմել է փիլոլոգիական գիտությունների թեկնածու Ա. Ղանալանյանը:

Հատորում տեղ գտած գուսանական և ադրբեջանական երգերի խոսքերը տրված են նաև հայերեն թարգմանությամբ, կատարված Գ. Թարվերդյանի (ադրբեջանական ու գուսանական երգեր) և Հ. Ջնդիի (քրդական երգեր) կողմից:

Ժողովածուի նյութերի նախապատրաստման և հրատարակության իրագործման աշխատանքներին գործոն մասնակցություն է ունեցել Մարենիկ Մելիքյանը:

---

1) Տես Սպ. Մելիքյանի «Հայ ժողովրդական երգի ժանրերը» ուսումնասիրությունը, Երևան 1930 թ.:

ОТ СЕКТОРА ИСТОРИИ И ТЕОРИИ ИСКУССТВ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Настоящим вторым томом заканчивается издание рукописных материалов народных песен, записанных Спиридоном Меликяном[1]).

Необходимо отметить, что это издание не исчерпывает музыкального наследия композитора. Опубликование его полного собрания сочинений—дело будущего. Наша цель—ознакомить с лучшими образцами народных песен, неопубликованных до сих пор. Помещенные в этом томе песни собраны и обработаны Спиридоном Меликяном в Советской Армении в 1926—27 годах. Большая часть опубликованных песен представляет собой образцы музыкального народного творчества XIX века. Эти песни отражают различные стороны народной жизни, быта, нравов и представлены различными жанрами: трудовые, лирические, обрядовые, гусанские, шуточные, плясовые и др.

Опубликованные песни интересны не только с точки зрения изучения истории музыкальной культуры прошлого, но представляют собой высокую художественную ценность и могут служить материалом для создания новых музыкальных произведений.

Изучающие армянское народное творчество, в частности музыкальный фольклор, безусловно оценят богатый материал сборника—его песни, песни-пляски, танцы—являющийся результатом долголетнего кропотливого исследования одного из крупнейших армянских музыковедов.

Спиридон Меликян не только собирал и обрабатывал народный фольклор. Он также занимался теоретическим изучением собранных песен, которых было около тысячи, и написал ряд трудов по истории и теории армянской музыки. Однако в своих теоретических трудах, следуя старым догматическим взглядам, он допускал серьёзные ошибки, придерживаясь точки зрения греко-византийских влияний, невольно отрицая самобытность армянской музыки. Песни, опубликованные в первом и втором томах настоящего сборника, как и многочисленные песни, труды и исследования Комитаса, в корне опровергают эту ошибочную точку зрения и блестяще демонстрируют национальные особенности армянской народной песни.

Оба тома настоящего издания, по подбору материала, представлют из себя одно целое. Рассматривая их в отдельности невозможно составить полное впечатление и представление о характере народных песен, собранных и обработанных композитором.

Настоящий том содержит следующие разделы:

1. Нотный материал—записи Сп. Меликяна.
2. Словесный материал—тексты песен.
3. Паспортизации и комментарии Сп. Меликяна.
4. Редакционные комментарии М. Агаяна.
5. Словарь.
6. Указатели—алфавитные на армянском и русском языках и общий указатель на армянском языке.

Нотный материал содержит песни:

1. Кировакана—Цахкаовита (Каракилиса—Хаджи-Халил),
2. Котайка—Ахта,
3. Нор Баязета,
4. Степанаванского детдома,
5. Гусанские,
6. Азербайджанские и курдские песни и плясовые.

---

[1]) I т. издан в 1949 г.

Всего 260 песен, а вместе с песнями первого тома — 533 песни. В отличие от первого тома гусанские песни здесь сгруппированы в одном отделе. Вместе собраны также азербайджанские, курдские народные песни и песни-пляски.

В систематизации песен как в первом, так и во втором томе сохранен один и тот же принцип, который отличается от прежнего авторского, хотя все песни имеют авторские номера, проставленные в скобках. Некоторые песни напечатаны под новым заголовком, авторские заголовки в таких случаях также указаны в скобках.

В примечаниях, которые в основном составлены Сп. Меликяном и по его материалам, указаны время и место записи песни, отмечено имя, возраст и социальное положение исполнителя.

В специальном отделе приведены варианты мелодий, текстов песен, их источники, обозначен ритм, такт и т. д.

Эта работа выполнена старшим научным сотрудником Сектора истории и теории искусств Академии наук Армянской ССР, заслуженным деятелем искусств Армянской ССР М. Л. Агаяном.

В предварительном редактировании музыкального материала первого и второго томов принимал участие заслуженный деятель искусств Армянской ССР и Узбекской ССР Х. С. Кушнарев.

Тексты песен настоящего тома подготовил к печати и составил к ним словарь кандидат филологических наук А. Ганаланян.

Тексты азербайджанских песен переведены на армянский язык Г. Тарвердяном. Курдские песни перевел А. Джинды.

В подготовке материалов сборника принимала участие Сатеник Меликян.

Սպիրիդոն Մելիքյան
Спиридон Меликян
(1931)

ՍՊԻՐԻԴՈՆ ՄԵԼԻՔՅԱՆ

СПИРИДОН МЕЛИКЯН

1880—1933



Սպիրիդոն Մելիքյանի ինքնագիրը
Автограф Спиридона Меликяна

ԿԻՐՈՎԱԿԱՆ
-ԾԱՂԿԱՀՈՎԻՏ
(ՂԱՐԱՔԻԼԻՍԱ-ՀԱՋԻ ԽԱԼԻԼ)

1 ՍԻՐՈՒՆ ՏՂԱ, ԵՐԿԻՆՔ ԿԸԼՆԵՄ



2. ՈՉԽԱՐՆ ԱՐԵԼ ԵՄ ՅՈԶԸ



3. ՅԱՄԱՆ ՆԱԶԼԻ ԸՌԱՆԳԸՍ

(Տաշի տաս, տաս քելըն)



4. ԷԼՆԵՄ ԱՅՆ ՍԱՐԸ



5. ԱԼԻՄԱՆ, ԱԼԻՄԱՆ



6. ՅԱՆԱՐ ՅԱՆԱՐ



7. ԾԱՌ ԾԱՂԿԵՑԱՎ
(Հարսանեկան)




Թագ - վոր ի՞նչ բե - րեմ քե Նը - մաՆ,
Քու կա - Նաչ ա-
- րե - վու Նը - մաՆ:
Այս խըՆ - կե - Նի Նոր ծաղ-կե - ցավ
Ծա - ղիկն է ա - րե - վուղ Նր - մաՆ:
Մեր թագ - վորն էր խաչ,
խա - չոց խաչ ու մաչ.
Մեր թագ - վո - րի ա - րեՆ էր կա - Նաչ:
Ծա - ռերՆ էր ծաղ - կած:
*) Var.
ա - րեՆ էր կա - Նաչ:

8 ՀՐԱԺԵՇՏԸ
(Հարսանեկան)



9. ԳԸՋՏԻ ՀԱՐՍ



10. ՕՐՈՐ



11. ՕՐՈՐ
(Ռուրի, ռուրի)



12. ՆԱՆԻԿ



13. ԼՈՒՐԻԿ



14. ՄԵՐ ՏՈՒՆ, ՁԵՐ ՏՈՒՆ ԽԱՆԱ, ԽԱՆԱ



15. ՍԱՐՔԻ, ՍԱՐՔԻ ՍԱՄԱՎԱՐ



16. ՀՈՅ ՆԱՐԵ, ՋԱՆ ՆԱՐԵ





17. ԴՈՒ ԿԱՅՆԵԼ ԵՍ ՇԵՄՔԻ ՀՈՎԻՆ



18. ՋՈՒԽՏ ԳՈՒԹԱՆ ՍԱՐ ԿԸԲԱՆԻ

Moderato





19. ՋՐՆԴՈՑԻ ԿԱԼԸ



20. ՀԵ՜Յ ՋԱՆԸՄ. ՋԱՆԸՄ. ՋԱՆԸՄ



21. ՏՈՏԻԿ



22. ԻՋԱՆՔ ՉԱՅԻՐՆԵՐԸ





23. ԳԱՐՈՒՆԻ ԽԱՂԸ



24. ԱԼԱՇԿԵՐՏՈՒ ԽԱՍՏՈՒՐ ԳԵՂԸ



25. Ը Ռ Ե Հ Ա Ն



26. ՀԵԼԼԻՆՈ. ՀԵԼԼԻՆՈ



27. ՍՊԻՏԱԿ ՂՈՋԸ ՄԱՏԱՂ ԿԱՆԵՄ



28. ՎԱՅ ԻՄ ՆԱԶԱՆԻ ՅԱՐԸ



29. ԹՈՒՇԸԴ ԴԵՄ ԷՐԱ, ՊԱԳԵՄ





30. ԻՉԱՆՔ ՉԱՅԻՐՆԵՐԸ



31. ՈՒՐ ՈՐ ԳԸՆԱՍ ՊԻՏԻ ԳԱՄ
(Դըլե դեջան, Ադըրբեջան)



32. ՄԻ ՏՂԱ, ՄԻ ԱՂՋԻԿ



33. ՋՈԼԻ ԿՌՈՒՆԿ ԵՐԿԵՆ ՎԻԶ



34. ՆԱԽՇՈՒՆ ԼԻԶԱՐ



35. ԳՆԱՑԵԼ ԵՍ, ԵԿԵԼ ԵՍ



36. ԹԱՍՆ ԱՌԱ, ԳԱՑԻ ԱՂԲՅՈՒՐ
(Վա՜յ լե՛, լե՛ ու լե՛, լե՛)



37. ՆԵՅՆԻՄՈՒ, ՆԵՅՆԻՄՈՒ



38. Ի՞ՆՉ ԱՆԵՄ ՅԱՐ ՋԱՆ



39. ՄԻ՛ ԼԱՐ, ՄԻ՛ ԼԱՐ



40. ՃԵՐՄԱԿ ՇՈՒՐՋԿԵՍ, ԿԱՐՄԻՐ ՑՈՒՐՋԿԵՍ





41. ՀՈ՛Պ, ՅԱՐ ՋԱՆ ԻԼԱԿԸԴ

Allegro







42. ՁԱԴՐԻ ՄԻՋԻ ԳՑՈՒԼ ՍԻՐՈՒՆ

Allegro







43. ՅԱՐ ՋԱՆ, ԱՐԻ ԲԱՆ ԱՍԵՄ
(Լի՛շեն լի՛շեն լի Սոնա ջան)



44. ՋԱՂԱՑԻՍ ԴՈՒՌԸ ՏԱՇԱԾ
(Դոշիդ ա մալուլ ույղուրմա)





45. ԳԱՑԻՆՔ ԱՐՏԵՐ. ԲՌՆԵՆՔ ԼՈՐ



46. ՔՈՒ ԴԱՐԴԵՆ, ՔՈՒ ՍԱՎԴԵՆ. ԱՅ ՏՂԱ



47. ՍԱՐԻ ՄՈՍԿՈՎ, ԷՐ ՅԱՐԸՍ



48. ԲԱՑ ԽՈՒՐՋԻՆԸԴ



49. ՄԱՆ ԵՍ ԳԱԼԻՍ ՅԱՆԱ, ՅԱՆԱ



50. ՉԱՐԿԵՆՔ ԿՈՇԱ ՂԱՅԴԵՆ Է



51. ԳԸՆԱՑԵԼ ԵՍ, ԵԿԵԼ ԵՍ



52. ԷԼԱ ԷՐԹԻԿ ՏԱՓ ԳՆԱՑԻ



53. ԱԼԱԳՅԱԶԸ ՄԵԶ ՄՈՏԻԿ
(Հյուր ու մալամ է յարխ)



54. ՉԻՉԻԿ ԳՈՒ ՇԱԼԵ



55. ՀԱՄ ԳՅՈՒԼ, ՀԱՄ ՎԱՐԴ



56. ԴՈՄԲԱՐԻ ՋԱՆ, ԴՈՄԲԱՐԻ



57. ՅԱ՛Ր, ԱՂՋԻ, ԵԿԱՎ ՕՐԵՐԸԴ
(Լաչչի մանա, սաչչի մանա)



58. ՅՈԹԸ ՋՈՐ, ՅՈԹԸ ԳԻՇԵՐ



59. ՋԱՂԱՑՊԱՆՆ ՈՒ ԿԻՆԸ



60. ՋՈՒԼՈ



61. ՀՈ՛Պ, ՉԱՐԴԵՔ, ՉԱՐԴԵՔ, ՉԱՐԴԱԼԱ



62. ՍԱՐՔԻ, ՍԱՐՔԻ ՍԱՄԱՎԱՐ



63. ՉԸՄՓԻԿ. ՉԸՄՓԻԿ ՉԱՐԻՆ Է



64. ՅԱՐ ՏՈՒԴԻ ՋԱՆ



65. ԳՅՈՒՂԵՐԻ ԲՆՈՐՈՇՈՒՄ





66. ԴՈԼԱՐ. ԴՈԼԱՐ. ԴՈԼԱՐԸ



67. ԱՌՎԸ ԱՌՈՒ ԵՄ ԹՌՆԵ



68. ՀՈՎ ԱՐԵՔ ՍԱՐԵՐ



ԿՈՏԱՅՔ-ԱԽՏԱ

69. ՋԱՂԱՑԸՍ ՊԱՏԻԿ ՊԱՏԻԿ



70. ԲԱՐԱԿ Է ԲԱԺԸԴ. ԿՌՈՒՆԿ



71. ԵՍ ՔԵԶԻ ՍԻՐԵՑԻ



72. ՈՒԼՈՒԶ ԲՈՒԼՈՒԶՈՎ ՏԸՂԱ



73. ՀԵ՜Յ. ԻՄ ՆԱԶԱՆԸ ՅԱՐԸ



74. ԹԱԶԱ ՄԱԾՈՒՆ ԵՄ ՄԵՐԵԼ



75. Ա Լ Ա Գ Յ Ո Զ Լ Ի



76. ԷԼԼԻՆՈ ՅԱ՜Ր



77. ՄԵՐ ԲԱՄԲԱԿԸ



78. Ա՜Խ, ՄԱՄԱ, ՋԱՆ



79. ՍԵՎԻՆ ՍԻՐՈՒՆ ԵՍ

(Կենտապար)



80. ՎԱՆԵՑՈՑ ԳՅՈՒԹՆԻ ԵՐԳԸ



81. ԴԱՐԴԵՐՍ ՇԱՏԱՑԵԼ Ա



82. ԼԵ՛, ԼԵ՛, ՎԱ՜Յ ԼԵ, ՄԱՐՈ



83. ՅԱ՛Ր, ԴԵ՛ ԳԻԴԻ, ՅԱՐ, ԴԵ՛



84. ԾՈՎԻ ՄԻՋԻ ՏԱՇ ՔԱՐԸ
(Բուդալ)



85. ԵՍ ՄԻ ԱՂՋԻԿ ԷԻ



86. ՔԱՄԻՆ ՅԱՆԱ, ՅԱՐԸՍ



87. ՀԱՐՍԱՆԵԿԱՆ



88. ԴԱՐԴԱՐ ԱՍԵՄ



89. ՍԵՎ ԱՉԵՐՈՒԴ



90. ԴՈՒ ԱՍԵՑԻՐ ԿԵՐԹԱՄ



91. ՔԱԼԱ Է, ՔԱԼԱ Է



*) այս տրիոլը մյուս տներում դառնում է դուոլ:

92. ԱՐԻ ԳՈՒԹԱՆ



93. ԱՌԱՎԵԼ



94. ԿԸՌՈՒՆԿ, ԾԱՓ ՏՈՒ ՈՒ ԹԸՌԻ



95. ԳԵՂԱՄԻ ԵՐԳԸ



96. ԾԻՐԱՆՆԵՐԻ ԲԱՐԸ



97. ԵՍ ԷԹԱՄ ԵՄ ՍԱՐԻԴԱՄԻՇ





98. ՄԱՐԱԼ ՇՈՒՇՈ. ՋԵՅՐԱՆ ՇՈՒՇՈ



99. ՔՈ ՉԻՆԱՐ ՅԱՐԻՆ



100. ԱՐԵՎԻԴ ՄԵՌՆԵՄ



ՆՈՐ-ԲԱՅԱԶԵՏ

101. ՍԱՔՈ



102. ԱՆՈՒՇ ՋԱՆ



103. ՏՐԿԾՈՐ



104. ԿԵՍ ԳԻՇԵՐԻՆ



105. ՍԻՐՈՒՆԻԿ, ՍԻՐՈՒՆԻԿ ԾԱՂԻԿՆԵՐ



106. ԿԱՆՉԱ ԿՌՈՒՆԿ, ԿԱՆՉԱ



107. ԾՈՎԻ ԱՓԸ ՎԱՐ ԿԱՆԵՄ



108. ՊԱՏԸՇԿԱՄԲՈՒՄ ԿԱՅՆԵԼ ԵՍ





109. ՈՍԿԵ ԳՈՒԼԱԿՈՎ ՏԸՂԱ



110. ԷԼԻ ԵՐԿԻՆՔ ԱՄՊԵԼ Է



111. ՀԱԲՐԲԱՆ



112. ՀԵԼԼԻ ՅԱՐԻՆ ԵՄ. ՕՅ. ՕՅ. ՕՅ



113. ԹՐՌՎՐՌԱԼԵՆ ԳԱԼԻՍ ԵՔ



114. Ա՛Յ ՏՂԱ. ԱՐԻ՛ ՋՈՒՐՆ ԱՆՑՈՒ



115. ԱՐՄԵՆՈՒՀԻՆ ԱՅՍՕՐ ԿՈՐԷ



116. ՇՈՒՇԱՆ ՋԱՆ



117. ԿՈՒԺՆ ԱՌԱ

Andantino.



118. ԼՈՒՍՆԱԿՆ ԱՆՈՒՇ

Andante.



119. ԵՍԻՄ, ԵՍԻՄ

Moderato.



120. ԿԱՐՄԻՐ ՔԱՐԸ ՏԱՇՈՒԿ Է



121. ԿԱՔԸՎՆԵՐ, ԿԱՔԸՎՆԵՐ



122. ԲԱՄԲԱԿԸ ԲԱՐԻՆ



123. ԱՂՋԻԿ, ԱՆՈՒՆԴ Ի՞ՆՉ ԷՐ



124. ԾԻՐԱՆ ԵՄ ԾԱՌԻ ԾԵՐԻՆ
(Օյ, օյ Մելիք ջան)

Allegro.



125. ՎԱՅ ՆՈՒԲԱՐ, ՆՈՒԲԱՐ

Moderato.

126. ՋԱՂՋԻ ԴՈՆՈՎ
(Լոք լո, դալիլո)

Allegro

127. ՅԱՐ ԱՐԵՎԻԴ ՄԵՌՆԵՄ



128. ՅԱՐ ԱՐԵՎՈՒԴ ՄԵՌՆԵՄ



129. ՅԱՐ ՋԱՆ ԵԿԱՐ ԳԻՇԵՐՈՎ



130. ՏՈ ՅԱՄԱՆ



131. ՏՈՒՅ, ՏՈՒՅ ԼԱՉԻ՛Ն ՋԱ՛Ն



132. ԱՂՋԻ, ՄԱՐԱԼ, Ո՞ՒՄ ՏԸՆԵՆ ԵՍ



133. ԽԸՆԱՄ ՊՈՒԼՈՒԶ



134. ՄԻ ՆԵՂԱՑԻ ԻՆՁԱՆԻՑ

Allegro



135. ԽԸՆՁՈՐ ՔԸՑԻ

Moderato.



136. ԼՈՒՍՆԻԿԻ ԼՈՒՍԸ ՏԵՍԱ

Moderato.



137. ԱՄՊԵՐՆ ԵԼԱՆ ԿԱՄԱՑ, ԿԱՄԱՑ



138. ԳՅՈՒԼԻ, ԳՅՈՒԼԻ, ԳՅՈՒԼԻ ՋԱՆ



139. Տ Ը Ր Ի Ն Ո



140. ԿԱՐՏՈԼ ԿԻՏԱՄ, ՏՈ Չ'ԱՌՆԻ



141. ԲԱՂՐՄ ՈՒՆԵՄ ՇԱՖԹԱԼԻ



142. ՉԵՄ ԱՌՆԻ, ՆԱՆԱ ՋԱՆ



143. ՉԷ՛, ԴԱԳՈ, ՉԷ՛, ԲԱՔՈ



144. ՀՈԼԸ. ՀՈԼԸ



145. ԱՄԱՆ ՏԵՐՏԵՐ, ԱՄՈԹ Ա



146. ԿԱՐՄԻՐ ՎԵՐՄԱԿՈՎ ՏՂԱ.

Allegro



147. ԹԱԹՈՑԻ ԴԱՍՏԵՆ

Allegro.



148. ՀՈՎ ԻՆԵ



149. ՍԱՍՈՒՆԱ ՍԱՐԵՐ



150. ԼՈՒՍՆԱԿՆ ԵԼԱՎ



151. ԴԻ՛Ն ԼԵ, ԼԵ ԴԻ՛Ն ԼԵ, ԼԵ



152. ՀՐԱԺԵՇՏԻ ԵՐԳ
(Հարսանեկան)



153. ՎՈ՛ՒՅ, ՎՈՒՅ ԱՆԱ



154. ԹԱԳՎՈՐԻ ԳՈՎՔԸ
(Հարսանեկան)





155. ՀԱՐՆԱԶ
(Հարսանեկան)



ՍՏԵՓԱՆԱՎԱՆ

ՄԱՆԿԱՏԱՆ ՍԱՆԵՐԻՑ
ՁԱՅՆԱԳՐՎԱԾ ԵՐԳԵՐ

156. ԿԱՅՆԵԼ ԵՍ ՎԱՐԴԻ ՀՈՎԻՆ



157. ԳՅՈՒՂՎԵՐԱՆԻՑ ԵԼԱՆՔ. ՀԱՍԱՆՔ ՄԵՐ ԳՈՒՂԸ

(Վա՜յ, նա՛նի, վառա՛)



158. ՄԱՐԳԱՐԻ ԳՅՈՒՂԱՑԻ



159. Ի՞ՆՉ ԿԸՏԱՍ ՋՈՒՐՆ ԱՆՑՈՒՄ



160. Օ Ս Ա Ն Ն Ա



161. ԵՍ ՈՐ ԼԻՆԵՄ



162. ՇՈՒՏ-ՇՈՒՏ ՔԵԼԱ



163. Կ՛ՔԵԼԱ, Կ՛ՑՈԼԱ



164. ՅԱ՛Ր ԳՅՈՒԼԱ



165. ԱՎԴԻ ՇՈՒՇԱՆ



166. ԻՄ ՍԻՐԱԾԸ ՍԱԼԴԱԹ ԷՐ




Հա - վայ լու - սի վակ - զա - լի դուռ կայ - նած էր:
« « « « « « « « « « «

167. ՋՈՒԼՈ


Ա - րևն ե - լավ կա - մար, կա - մար,
Ջու - լոն կա-պեց ու - կե քա - մար, Ես կը - մեռ - նեմ
քե - զի հա - մար, Ա - վար Ջու - լո.
մա - տաղ Ջու - լո, Ա - վար
Ջուլ, Ջուլ մա - տաղ Ջու - լո ջան:

168. ՏԸՐ ՆԻՆԱՅ, ՆԻՆԱՅ

1. (Ամուսին) կնիկ մեր կովն ի՞նչ էլավ. (կինը) Ա՜խ մեր կով
2. («) կընիկ րա մեր հավեր ինչ էլան («) Ա՜խ, մեր հավեր.



3. (Ամուսին) Բա մեր երեխեն ի՞նչ էլավ (կնիկ) Ա՜խ մեր երեխեն.
4. («) կնի՛կ, րա դո՞ւ. («) Ա՜խ ես



169. ՈՐԲԻ ԵՐԳԸ



170. ՋԱԼՈ, ՋԱԼՈ ՋԱ՛Ն ՋԱՐ ՄԵՅԴԱՆ



171. ԱՍՄԱՐ ԱՄՄԱՆ



172. ԼՈՅԼԸՄ ԼՈՅ



173. ԽՆԱՄԻ ՋԱՆ



174. ԽԱԼԱԼԵ. ՋԱՆ ԼԵ ԼԵ



175. ՇԻՐԻՆ ԹԵԼԼՈ, ՎԱՅ ԹԵԼԼՈ ՋԱՆ



176. ԳՑՈՒԼԵՐԸՍ ԹԱԶԱՑԵԼ Ա



177. ՍՈՆԵՆ ԿՈՂԲԵՑԻՆ



178. ԺՈՒԼԻԿ ՏԵՐՏԵՐԻ ԳՅԱԴԵՆ



179. ՀԱ՜Յ ԱՌՆՈՒՄ ԵՄ, ԱՌՆՈՒՄ ԵՄ





180. ՀՈ՛ ՄԱՅՐԱՄԵ, ՄԱՅՐԱՄԵ



181. ԼԵ ԼԵ ԳԸԴԵ ՄԱՅՐԱՄԵ



182. ՈՒՐ ԳՆԱՑԻՐ, ՈՒՐ ԵԿԱՐ
(Բուկամալա բավեմըն)



183. ՄԱՔՐՈՒՇԻ ՋԱՆ, ՄԱՔՐՈՒՇԻ



184. ԵՍ ՄԻ ԾԱՌ ԵՄ ԾԻՐԱՆԻ



185. ԿՈՐԱԾ ԷՇԸ



186. ՈՒՐ ԳԸՆԱՑԻՐ



187. ՋԱՆԸՄ ԼՈԹԻ ՅԱՐ ՋԱՆ



188. Յ Ա՛ Ր, Ս Ո Ն Ա



189. ՋԸՄՓԻԿ, ՋԸՄՓԻԿ ՂԱՐԻՆԱ



190. ԵՐԳԻՍ ԳԸԼՈՒԽ ՄԻ ԱՍԱ

(Դոգ դոգուրմա)



191. ԹՈՒԹՈՒՆԻ ԴԱՍՏԱ



192. ՔԵԶԻ ՄԵՌՆԻՄ ՊԸՍՏԻԿ ԼՈՒՍՆԱԿ
(Խանիմո, ջանիմո)



193. Ի Ր Ի Կ Վ Ա Զ Ա Ն Գ Ե Ր
(Հե՜յ վա՜խ, զուլում է)



194. Ա՜Յ ՆՈՒԲԱՐ, ԶԱԼՈՒՄ ՆՈՒԲԱՐ



195. ՍԱԹՈ ՋԱՆ



ԳՈՒՍԱՆԱԿԱՆ ԵՐԳԵՐ



196. ԵՐԱՆԻ ՁԵԶ ԲԱՐՁՐ ՍԱՐԵՐ



197. ՈՐԹՆԱՎԻ ՀՈՂԲԱԺԱՆՈՒԹՅՈՒՆԸ
(Դուբեյթ)



198. ՍԻՐՈ ԳԵՐԻ, Ո՞ՒՐՏԵՂ ԵՍ



199. ՍՄԲԱԹԻ ՀԵՔԻԱԹԻՑ



200. ԼՍԻ՛Ր ԱՂԵՐՍԱՆՔՍ



201. ԱՄՐՈՅԻ ԽԱՂԸ



202. ՄՈՒՇՏԱՋԱԳ



203. Ք Ց Ա Ր Ա Մ Ի Ց



204. ԷԴ ՈՍԿԵԹԵԼ ՄԱԶԵՐԴ



205. ՈՎ ԱՆՀԱՆԳԻՍՏ ԱՆՃԱՐ ՈՏՔԵՐ
(Դուբեիթ)



206. ՁՄՌԱՆ ՈՒ ԳԱՐՆԱՆ ՎԵՃԸ



207. ՇԱՏ ՄԱՆ ԳԱԼՈՂ ԿՆԿԱ ԲԱՆԸ



208. ՔՅԱՌՕՂԼԻ
(Դուբեյիր)



209. ՕՏԱՐ ԵՐԿՐԻՑ ՎԵՐԱԴԱՐՁԱՐ



210. ՔՅԱՐԱՄԻ ԳՅՈԶԱԼԱՄԱ



211. ՎԱՌՎՈՒՄ ԵՄ ԱՍԼԻ, ՎԱՌՎՈՒՄ ԵՄ



212. ՈՉԽԱՐՆ ՈՒ ԳԵԼԸ



213. ԻՄ ՃԱԽՈՐԴՈՒԹՅԱՆՍ ՄԻ՛ ԽԸՆԴԱ



214. ՄԻ ԼԱՐ ԱՅԴՊԵՍ *)



*) Խոսքերը «Սմբատի ճեքիաթից»

215. ԵՍ ՔԵԶ ՍԻՐԻ



216. ԼՍԵ՛. ՏԵ՛Ս ՔԵ ԻՆՉ ԵՄ ԱՍՈՒՄ



217. ԻՆՋՆԵՆ ՄԻՔ ՆԵՂԱՆԱ



218. ՆԱԶԵԼԻ ԹԱԳՈՒՀԻ



219. ՍԻՐՈՒՆ ՂՌԱԹ ՂԱՅԹԱՐ ՂՌԱԹ



*) Տես «Քյոռողլի հեքիաթը»

220. ԹՈՒԽ-ԹՈՒԽ ԱՉՔԵՐ



221. ՍԻՐՈ ՀԱՄԱՐ ԵՍ ԸՆԿԵԼ ԴՈՒ
(Կուզեմ էյ. Դահար Միրզից)



222. ՄԻՍԿԻՆ ԲՈՒՐՋԻ. ԳԵՇՏ ԵՅԼԱ



223. ԵՐԵՎԱՆ ՉԱՐՍՈՒ ԲԱԶԱՐ



224. ԹԱԽՆԻՍ
(Իննը տողանի)



225. ԱՅ ԴԻԼԲԱՐԸՄ



226. ՋԱՆԸՄ ԱԼՄԱ. ԳՅՈԶՈՒՄ ԱԼՄԱ



227. ԲԵԼԱ ՄԱՐԱԼԴԱՆ



228. ԲԱՆ ԲԱՂԱ ԳԻՐԳԻՄ



229. ՏՐԱՊԻԶՈՆՆԱՆ ԶԸԿՏԸՄ



ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԵՎ ՔՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐ

ՁԱՅՆԱԳՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ



230. ՍՈՒ ԳՅԱ̈ԼԸՐ ԼՈ̈ՒԼԱ̈-ԼՈ̈ՒԼԱ̈



231. ԲԻՐ ՏԱՇ ԱԹՏԸՄ ՀԱՎՈՒԶԱ



232. Ա՛ՆԱ, ԱԽ, ԱՆԱ



233. ԱՆԱՄ ՄԱ̈ՆԻ ՍԱ̈ՍԼԻՐ
(Սարիղամիշի երգը)



234. ԽՈՐՈԶ



235. ՏԻՆ ԼԱ̈ԼԱ̈, ՏԻՆ ԼԱ̈ԼԱ̈



236. ՀԱՄ ՅԱԼԻ. ՀԱՄ ՅԱԼԱԼԻ



237. ԲԻՐ ՋԻԳՅԱՐԱ ՎԵՐ ՄԱՆԱ



238. ՂԸՋ ՄԱՆԴԻԼ



239. ՅՈՆՋԱԼԱ̈Ր, ԽԱՆԸՄ ՅՈՆՋԱԼԱ̈Ր



240. Ա՛Յ ԿԸԶԸՄ, ԳՅԱ̈Լ ՍԱՆԻ...



241. ՇՐՂՇՐՂՈՒՆ ԲՈՒԼԱՂՋՈՒԿ ԴՈՒԼ Ը ՆՆԱ



242. ՅԱՂՄԱ ՅԱՂԸՇ. ՅԱՂՄԱ ՅԱՂՄՈՒՐ



243. ՀՈՊ ԲԱԼԱ ՅԱՎՐՈՒՄ



244. Ն Ա Ն Ի



245. Ա՛Յ ՈՒՉԱ ԴԱՂԼԱՐ



246. ՄԸՐԿՈ ՖԻԿՈ



247, ԵՎԱ, ԵՎԱ
(Հեյնար)



248. ԼՈՒՌԿԵ



249. ՎԵՐԱՆԸ ԽԱԼ ՎԵՐԱՆԷ

Moderato



250. ՄԻՐ ՄԱԿՈՒԺԱ



251 ԱՅՎԱՆԱ ՄԻՐ
(Հարսանեկան)



252. ՅԱՐԸՄ ԳՈՐԱՆԻ



253. ԴՈԼԱՐԷ, ԴՈԼԱՐԷ.



254. ՍԱՐ ՍԻՓԱՆԸ ԽԱԼԱՏԵ



255. ՀԱՅ ՀԸԼԻՆԸՆ, ՀԸԼԻՆԸՆ



256. ԲԱՐԱՆԵ, ՎԱ՜Յ ԲԱՐԱՆԵ



257. ՀԱՅԼԱ ԿԱԼԱՆԵ



258. ԴԻԼԲԱՐ ՄԵՅՎԱՆԵ ՏԱՄԸ



259. ԳՈՒԼԱ ՄԸՆ ԵՐԻ, ԵՐԻ



260 ԼԱԶԻ-ՊԱՐԵՐԳ



ԿԻՐՈՎԱԿԱՆ-ԾԱՂԿԱՀՈՎԻՏ
(ՂԱՐԱՔԻԼԻՍԱ-ՀԱՃԻ ԽԱԼԻԼ)

1. (162) ՍԻՐՈՒՆ ՏՂԱ, ԵՐԿԻՆՔ ԿԼՆԵՄ

Սիրուն տըղա, երկինք կըլնեմ,
Դու ի՞նչ կըլնես, յա՜ր ջան,
Անուշ աղջիկ, ամպըղ կըլնեմ,
Ծոցիդ շող տամ, յա՜ր ջան։

Սիրուն տըղա, բամբակ կըլնեմ,
Դու ի՞նչ կըլնես, յա՜ր ջան,
Անուշ աղջիկ, կըրակ կըլնեմ,
Քեզ կըայրեմ, յա՜ր ջան։

Սիրուն տըղա, խնձոր կըլնեմ,
Դու ի՞նչ կըլնես, յա՜ր ջան,
Անուշ աղջիկ, դանակ կըլնեմ,
Քեզ կկըտրեմ, յա՜ր ջան։

2. (161) ՈՉԽԱՐՆ ԱՐԵԼ ԵՄ ՅՈՂԸ

Ոչխարըն արել եմ յողը,
Նայ, նայ, նայ, նայ,
Ձոկել եմ ղարագյողը,
Ադե բալա վայնա է։

Ելեր եմ սարի գոշը,
Բռնել եմ յարիս փեշը։

Ոչխարըն արել եմ բերը,
Ձոկել եմ գառն ու մերը։

Աղչի ինդար մազ ունես,
Այվան ու թարվեզ ունես։

3. (12) ՅԱՄԱՆ ՆԱԶԼԻ ԸՌԱՆԳՍ
(Տատի տատ, տատ բըլըճա)

Յաման նազլի ըռանգըս,
Դիլբար ֆանգլի ֆըռանգըս,
Տատի տատա, տատա բելընա դատա օլմադ, հօյ, հույ։

4. (141) ԵԼՆԵՄ ԱՅՆ ՍԱՐԸ

Ելնեմ այն սարը, ելնեմ այն սարը, Ալագյազ,
Ուտեմ ձյունըդ, խմեմ ջուրըդ, իջնեմ յած։

Զագիր եմ գարկել սարին,
Ելնեմ այն սարը, ելնեմ այն սարը, Ալագյազ,
Վադա եմ կըտրել տարին,
Ուտեմ ձյունըդ, խմեմ ջուրըդ, իջնեմ յած։

Վադա կըտրած տարին տես,
Անէյթըբար տարին տես։

5. (63) ԱԼԻՄԱՆ, ԱԼԻՄԱՆ

Ալիման, ալիման,
Ալ յայլուղըս ձեր տունն է,
Ալի բու գեջա, գոստ է բու գեջա,
Դոստ գոնախըմ մայրիկ ջան։
Կրկնակ

Յավաշ քըշեք սելերը,
Ալիման, ալիման,
Կապեմ չուլքուս Թելերը։
Կրկնակ

Սելը եկավ սարովը,
Ալիման, ալիման,
Առավ ընկավ քարովը։
Կրկնակ

Երկեն արար գարի է,
Ալիման, ալիման,
Գաղթականի տարի է։
Կրկնակ

6. (33) ՅԱՆԱՐ, ՅԱՆԱՐ

Էրևան բաղ եմ առել,
Զիգյարըս դաղ եմ արել,
Յանար, յանար դու չան աղջիկ,
Էրթանք ժամը դինջանա քու ջանը։

Դոստ ու դուշմանի մեջը,
Լացըս ծիծաղ եմ արել,
Յանար, յանար դու չան աղջիկ,
Էրթանք ժամը դինջանա քու ջանը։

Աղջի անունըդ Թագուն,
Նըստել ես հոըըդ սաքուն,
Յանար, յանար դու չան աղջիկ,
Էրթանք ժամը դինջանա քու ջանը։

Ինչ մե սիրով բոյ ունիս,
Երանի յարիդ հոգուն,
Յանար, յանար դու չան աղջիկ,
Էրթանք ժամը դինջանա քու ջանը։

7. (28) ԾԱՌ ԾԱՂԿԵՑԱՎ
(Հարսանեկան)

Գնացեք ասեք Թագվորահոր, ծառ ծաղկեցավ,
Ծառ ծաղկեցավ, ծառ կայնեցավ, կանաչ ու կարմիր։

Էն էգվան հոճն էր, հով էր, ինչ աննըման էր,
Էրկու ազվան էկան իջան, էն սարկավագն էր։

Թագվոր, ի՞նչ բերեմ քե նըման,
Քու կանաչ արևու նըման։
Այս խընկենին նոր ծաղկեցավ,
Ծաղիկն է արևուդ նըման։

Մեր թագվորն էր խաչ,
Խաչոց խաչ ու մաչ,
Մեր թագվորի արեն էր կանաչ,
Ծառերն էր ծաղկած։

8. (84) ՀՐԱԺԵՇՏԸ

(Հարսանեկան)

Մերիկ քու մերություն, օ՜յ օ՜յ,
Լըմըն մերիկ, ես կերթամ կարիրություն, լըմըն,
Դըռ չեմ էրթա, օ՜յ խերիկ։
Յոթ դուքնեն արծաթ ժողվեցինք, օ՜յ, օ՜յ,
Լըմըն մերիկ...
Ոսկի մատնիք շինեցինք,
Դըռ չեմ էրթա, օ՜յ խերիկ,
Սաթոյի մատներ խսկեցինք, օ՜յ, օ՜յ,
Լըմըն մերիկ...

Դըռ չեմ էրթա, օ՜յ խերիկ,
Մակարի դռներ սալերով, օ՜յ, օ՜յ,
Լըմըն մերիկ...
Բոզ ձին քաշին նալերով,
Դըռ չեմ էրթա, օ՜յ խերիկ։
Սաթոյին տարան կալերով, օ՜յ, օ՜յ,
Լըմըն մերիկ...
Դըռ չեմ էրթա, օ՜յ խերիկ։

9. (55) ՊԶՏԻ ՀԱՐՍ

Արի էրթանք սարը սեյրան, պըզտի հարս,
Ինչ որ քաղեմ մեջքըդ չարեմ, պըզտի հարս,
Դուն գլորես, ես քու մեջքին, պըզտի հարս,
Դուն թոթոշիկ, պագ անուշիկ, օ՜խ, օ՜խ։

Արի էրթանք մեր տունը տես, պըզտի հարս,
Հոգիս բանամ, սարքին ա տես, պըզտի հարս,
Մեղրած կարագ բերեմ ուտես, պըզտի հարս,
Դուն թոթոշիկ, պագ անուշիկ, օ՜խ օ՜խ։

Արզըրումցի պըզտի հարս,
Կարմիր բարուջ, դեղին մաս,
Չուխա, ջուբա ունենաս,
Մեջքըդ կոճակ չունենաս։

Պըզտըլիկ էրիկ մը ունենաս,
Էն էլ տունը չըլնենա։

10. (157) Օ Ր Ո Ր

Նանա, նանա, նանա, օրանդյուլ։
Պախրեն կուգա, ծիծ կուտա,
Օրոր-օրոր, ա՜յ էրա։
Ջիգյար չունի, քիչ կուտա,

Ա՜յ էրա, ա՜յ էրա։
Մանտրատերև քեզ փաթթոց,
Լենատերև քեզ ծածկոց,
Ծառներ քեզի օրորոց։

11. (122) ԲՈՒՐԻ, ԲՈՒՐԻ

Դու պըզտիկ ես, բարով ջոջնաս,
Հարավ քամին քե օրորե,
Բուրի, բուրի, բուրի, բուրի,
Իմալ էնեմ պառնուկ տըղա:

Վերու ոչխար քեզի ծիծ տա,
Իմալ էնեմ պառնուկ տըղա,
Բուրի, բուրի, բուրի, բուրի,
Իմալ էնեմ պառնուկ տըղա:

12. (104) Ն Ա Ն Ի Կ

Երբ կըթըմմի քասուն օրըդ,
Որ ճանաչես հորն ու մորըդ,
Ցորնով լըցվի հորդ ու ձորըդ,
Նանիկ Ավլիկ, սիրուն բալիկ,
Նանիկ, նանիկ, նանիկ:

Թե երեսըդ բանամ, աչես,
Դու դեռ քյաւփա և մաղալաշ ես,
Կուլաս, իմ սիրտը կըմաշես,
Նանիկ Ավլիկ...

Նանիկ տուն քո հայր Գարեն,
Տերը փըրկի քեզի չարեն,
Ջեբիցըդ չըպակսի փարեն,
Նանիկ Ավլիկ...

13. (51) ԼՈՒՐԻԿ

Լուրիկ, լուրիկ, բալաս լուրիկ,
Քընի, քըրանի, անուշ բալա:

14. (53) ՄԵՐ ՏՈՒՆ, ՁԵՐ ՏՈՒՆ, ԽԱՆԱ-ԽԱՆԱ

Մեր տուն, ձեր տուն խանա-խանա,
Մորըդ ըսե, գա դուռ բանա,
Մեկ պագըմ տամ, մարդ չիմանա,
Աղջիկ մարալ, ճում անեն ես:
Աղջիկ մարալ, ճում անեն ես,
Խելքըս տարար, ճում անեն ես:

Մեր տուն, ձեր տուն, իրար մոտիկ,
Քեզ սիրել եմ շատ օրատիկ,
Մեկ պագըմ տուր պըռկից մոտիկ,
Աղջիկ մարալ, ճում անեն ես,
Խելքըս տարար, ճում անեն ես:

Մեր տուն, ձեր տուն, մեկ տոլարով,
Կեյնես կայնես կարմիր կապով,
Քեզի կառնեմ ալ քուռակով:
Աղջիկ մարալ, ճում անեն ես,
Խելքըս տարար, ճում անեն ես:

Աղջի անունըդ է Շուշան,
Մատնի ունեմ մատիտ նշան,
Ինձի արել ես փերուշան:
Աղջիկ մարալ, ճում անեն ես,
Խելքըս տարար, ճում անեն ես:

15. (91) ՍԱՐՔԻ, ՍԱՐՔԻ ՍԱՄԱՎԱՐ

Սիրտը որ կա շուշա է,
Սարքի, սարքի սամավար,
Ոչ ոսկի կուզեմ յարս ջան,
Ոչ ոսկի քյամար:

16. (72) ՀՈ՛Յ ՆԱՐԵ, ՋԱ՛Ն ՆԱՐԵ

Հո՛յ Նարե,
Բութամ ունեմ սարին ա.
Ջա՛ն Նարե,
Գըլուխըս չոր քարին ա:

Հո՛յ Նարե,
Երևանի քավոր եմ.
Ջա՛ն Նարե,
Զայ ու փրնջի սովոր եմ:

17. (128) ԴՈՒ ԿԱՅՆԵԼ ԵՍ ՇԵՄՔԻ ՀՈՎԻՆ

Դու կայնել ես շեմքի հովին,
Քամին զարկե դոշիդ մովին,
Երանեկ քեզի սիրողին,
Ալագյոզլի, նազլի դիլբար,
Շեկ բոխախից խալին ղուրբան:
Ման եմ գալի վերի-վերի,
Կրակն ընկնի ջանըդ էրի,
Մեր պայմանը մնաց թերի,
Ալագյոզլի, նազլի դիլբար,
Շեկ բոխախից խալին ղուրբան:

Երևանու եկավ բազուկ,
Թևերդ երկայն, մեջքըդ նազուկ,
Թևըդ գրցեմ ջուխտ բիլազուկ,
Ալագյոզլի, նազլի դիլբար,
Շեկ բոխախից խալին ղուրբան:
Ես սկսեցի էդ բանը,
Մաննիքն առա ընդոնց տանը,
Կրակն ընկնի յար քու ջանը:
Ալագյոզլի, նազլի դիլբար,
Շեկ բոխախից խալին ղուրբան:

18. (94) ՋՈՒԽՏ ԳՈՒԹԱՆ ՍԱՐ ԿՐԱՆԻ

Ջուխտ գութան սար կըրանի,
Յար քու բարակ բոյին մեռնեմ,
Շեկ յարըս հաց կըտանի,
յա՜ր ջան,
Սալդաթ չերթամ քեզ կառնեմ:

Պուճուր աղջիկ գալում ես,
Մազերըդ ոզալում ես,
Ինձ առնելու կամ ունես,
Խունջիկ-մունջիկ գալում ես:

Պուճուր աղջըկա տերը,
Խասքը ավել է հերը,
Չի տալիս քյաֆուր մերը,
Պարտական տերտերները:

19. (101) ՋՆԴՈՅԻ ԿԱԼԸ

Ջընդոյի կալը, բութկեն մոտիկ է,
Տանում են յարիս, օ՜յ, ոտեր բոբիկ է,
Սիրե յարո ջան, օ՜յ, քո սիրած յարն եմ:

Սուրմայից սանր, ակեքն էր մանր,
Տանում են յարիս, ոլոր ու մոլոր,
Սիրե յարո ջան, օ՜յ, քո սիրած յարն եմ:

20. (7) ՀԵ՜Յ ՋԱՆԸՄ, ՋԱՆԸՄ ՋԱՆԸՄ

Սարի տակի աղբյուրից,
Ջուր էր տանում իմ յարը.
Հե՜յ, ջանըմ, ջանըմ ջանըմ,
Ա՜յ, ջանըմ, ջանըմ, ջանըմ:

Ա՜խ, էն աղջիկ աչք-ունքով,
Ինձ զարկել ա գընդակով.
Հե՜յ, ջանըմ, ջանըմ, ջանըմ,
Ա՜յ, ջանըմ, ջանըմ, ջանըմ:

Ես դառի դու Լալվարը,
Մենակ մընաց մարալը.
Հե՜յ, ջանըմ, ջանըմ, ջանըմ,
Ա՜յ, ջանըմ, ջանըմ, ջանըմ:

21. (114) ՏՈՏԻԿ

Տոտիկ, տոտիկ, տոտիկ, տոտիկ,
Ղարսա տոտիկ, Թիֆլիզու տոտիկ,
Բաքվա տոտիկ, Պոլսի տոտիկ,
Մի գա մոտիկ, մոտիկ։

Տոտիկ, տոտիկ, տոտիկ, տոտիկ,
Էսօր օրը կեսօր է,
Տոտիկ, տոտիկ, տոտիկ, տոտիկ,
Իմ խաղ ընկնի էսօր է,

Տոտիկ, տոտիկ, տոտիկ, տոտիկ,
Հավլի տոտիկ, ղաղի տոտիկ,
Ծընծըղի տոտիկ, Թալյու տոտիկ,
Մի գա մոտիկ, մոտիկ։

22. (115) ԻՋԱՆՔ ՉԱՅԻՐՆԵՐԸ

Իջանք չայիրները, բռնինք պարը,
Ես սիրեցի, օտար տարավ իմ յարը։
Երևանու քարերը,
Իջանք չայիրները, բռնինք պարը,
Բացվել են խաշխաշները,
Ես սիրեցի, օտար տարավ իմ յարը։

Ջաղըր եմ զարկե սարին,
Վաղա եմ կտրել տարին,
Վաղա կտրած տարուն տես,
Անէհթիբար յարուն տես։

Ելել եմ Ալագյազը,
Չեմ առնի մալամազը.
Կողքիս կախել եմ սազը,
Երթամ կընգնեմ Արազը։

23. (95) ԴԱՐՄՆԻ ԽԱՂԸ

Մարագիս դուռը բացեցին, յարո ջան,
Ինձի ղըրաղ կայնեցուցին, յարո ջան։
Սիրտըս, փորըս մըռմըռցըրին, յարո ջան։

24. (117) ԱԼԱՇԿԵՐՏՈՒ ԽԱՍՏՈՒՐ ԳԵՂԸ

Ալաշկերտու Խաստուր գեղը,
Հինգ մանեթ էր փունտըմ եղը,
Հըմի էլ չի մընա տեղը,
Զարմանալի ժողովուրդ են։

Կողքին կանգնի Շիրվանու գետ,
Հեչ չեն վարժի խռանի հետ,
Խասալուս էլ կվերցնեն փետ,
Զարմանալի ժողովուրդ են։

25. (118) ԸՌԵՀԱՆ

Ըռեհան, ըռեհան,
Էսմալ անցնեմ ըռեհան,
Էնմալ անցնեմ ըռեհան։

26. (119) ՀԵԼԼԻՆՈ, ՀԵԼԼԻՆՈ

Հելլինո, հելլինո, Հասանո հելի,
Հելլինո, հելլինո, Հասանո հելի։

Տաք չայիր չիման էր, մեջը պաղ աղբուր,
Հելլինո...

Մեջը խըմեցի թաս մը պաղ ջուր,
Հասան չավայե, մեր տան բարդելի,
Հելլինո, հելլինո, Հասանո հելի։

27. (159) ՍԻՊՏԱԿ ՂՈՉԸ ՄԱՏԱՂ ԿԱՆԵՄ

Սիպտակ ղոչը մատաղ կանեմ,
Յար ջա՛ն ես քու չարըդ տանեմ,
Բյաշկա ընձի մի ջան ասես,
Սաղ աշխարհը տակով կանեմ։
Սևիկ աչքեր, սիպտակ աչքեր,
Տունըս քանդիր նախշուն աչքեր։
Մանի գոյմա յանա-յանա,
Լավ տըղա եմ մի մոռանա,

Գենա մեվլաթ ելլար բանա,
Գըրկիդ ագիգ բալին ղուրբան։
Սևիկ աչքեր...
Հե՛յ նազանի նազլու Դիլբար,
Քեզ նըման սիրուհուն ղուրբան,
Սան մանի եթափ գարդաքյար,
Շեկ բոխախիդ խալին ղուրբան։
Սևիկ աչքեր...

28. (124) ՎԱ՛Յ ԻՄ ՆԱԶԱՆԻ ՅԱՐԸ

Զորան, ոչխարըդ քաշե,
Վա՛յ իմ նազանի յարը,
Ես դառի յարիդ աշե,
Տուր իմ նազանի յարը։

Ոչխարն արոտով գընաց,
Յարըս կարոտով գընաց,
Ոչխար արոտից մեռնեմ,
Յար ջա՛ն կարոտից մեռնեմ։

Ոչխարն արել եմ բերը,
Քաշելեմ կաթի սերը։

29. (125) ԹՈՒՇԴ ԴԵՄ ԷՐԱ ՊԱԳԵՄ

Էս գիշեր լուսնակ գիշեր,
Ձունն է եկել գառիկն առել,
Թուշըդ դեմ էրա պագեմ,
Ես քու սիրած յարը կըլեմ։

30. (126) ԻՋԱՆՔ ՉԱՅԻՐՆԵՐԸ

Իջանք չայիրները, չալու էր խոտը,
Բիլբուլի բաղեցը, կըգար լավ հոտը,
Առնեմ ելնեմ էն սարը, սարը սեյրան,
Տանեմ տեսնի իմ յարը։

Արի՛ յար ջան, գընանք Բաղկըրդու դոշը,
Մեղըրել եմ կարոտը, փաթթել եմ լոշը,
Առնեմ ելնեմ էն սարը, սարը սեյրան։

Առնեմ ելնեմ, առնեմ ելնեմ Ալագյազ,
Ուտեմ ձյունըդ, խըմեմ ջուրըդ, իջնեմ ցած,
Առնեմ ելնեմ էն սարը, սարը սեյրան։

31. (123) ՈՒՐ ՈՐ ԳՆԱՍ ՊԻՏԻ ԳԱՄ
(Դըլե դեջան, Ադրբեջան)

Ուր որ գընաս պիտի գամ,
Դըլե դեջան, դեջան, դեջան,
Ետևիցդ էլ պիտի լամ,
Դըլե դեջան Ադըրբեջան։
Ես ու յարըս ջահել ենք,
Պայման արել պահել ենք։

32. (127) ՄԻ ՏՂԱ, ՄԻ ԱՂՋԻԿ

Յա՜ր, արի գալուդ մեռնեմ,
Մի տըղա, մի աղջիկ,
Ուսումն առած, յայլումն են,
Յայլից իջան, կոմսոմոլի շարքումն են,
Քո բարև տալուդ մեռնեմ։

Մի տըղա, մի աղջիկ…
Դուռը բացեք մարդ էկավ,
Մեզի զատով վարդ էկավ,
Մի տըղա, մի աղջիկ…

Սիրել եմ սիրով, սովդով,
Այամ աշխարհի դայդով,
Աշուն կըգա իմ վաղեն,
Կերթամ կորեմ քու դարդեն։

33. (132) ԶՈՂԻ ԿՌՈՒՆԿ ԵՐԿԵՆ ՎԻԶ

Զոլի կըռունկ երկեն վիզ,
Ախո, կըկո, կարգե գիս,
Զըմ կարգըվի, կարգեք գիս,
Պիսեր մարդու մի տեք գիս,
Կորցու ղալամ, տըփա գիս։

Արի քու գալուն մեռնեմ,
Ախո, կըկո, կարգե գիս,
Զըմ կարգըվի, կարգե գիս,
Նախըրչի մարդու մի տեք գիս,
Կորցու կովեր, տըփե գիս։

34. (6) ՆԱԽՇՈՒՆ ԼԻԶԱՐ

Զընգը զընգ, զընգը զընգ, նախշուն լիզար,
Ալլահ բիր զըր, գարդըմ հազար,
Զընգ, զընգ, զընգը զընգ, զընգ Գյուլիզար։

35. (13) ԳՆԱՑԵԼ ԵՍ, ԵԿԵԼ ԵՍ
(Ադրբեջանըմ ղարդաշ)

Գընացել ես, եկել ես,
Ադըրբեջանըմ ղարդաշ,
Արազին մոտեցել ես,
Եղդի էջարըմ ղարդաշ.
Կաքավ ես քարի միջին,
Ջեն կուտաս ձորի միջին:

36. (42) ԹԱՍՆ ԱՌԱ ԳԱՑԻ ԱՂԲՈՒՐ
(Վա՜յ լե՛, լե՛ ու լե՛, լե՛)

Թասն առա գացի աղբուր,
Վա՜յ լե՛, լե՛ ու լե՛, լե՛,

Լըցրեցի թասով պաղ ջուր,
Բյաֆուր դոշըդ մի բանա:

Եղբայրս ուզեց չըտվի,
Յարըս ուզեց բաշխեցի:

Ուսուբաշկիս մանիշկեն,
Յարիս ջերի սեմիչկեն:

Քամին է յանա-յանա,
Փակած դռներ կըբանա:

Անդաջիս օղեր ոսկի,
Հայրիկիս բերեք խոսքի:

Քամի, քամի, տար ու բեր,
Յարիս յայլուղ առ ու բեր:

37. (142) ՆԵՅՆԻՄՈՒ, ՆԵՅՆԻՄՈՒ

Նեյնիմու, նեյնիմու, նեյնիմու յա՜ր,
Նեյնիմու, մարալո, ջեյրան ու յա՜ր:

Տըղա խի՞ քըցիր քարը,
Նեյնիմու, նեյնիմու, նեյնիմու յա՜ր,

Բալքի ես ի քո յարը.
Նեյնիմու, նեյնիմու, ջեյրան ու յա՜ր:

Նեյնիմու, նեյնիմու, նեյնիմու յա՜ր,
Նեյնիմու, մարալո, ջեյրան ու յա՜ր:

Յար արի հանդերովը,
Նեյնիմու...

Ջըրերի բանդերովը,
Նեյնիմու...

Ես ծիտ եմ թևըս գեղին,
Ման կըգամ նանիս գեղին,
Գըլուխս որտե՞ղ դուրրան,
Իմ նանի ցամոք տեղին:

Երկեն զիմը սալած ա,
Ալ ձին մեջին նալած ա,
Ալ ձին նալն ի՞նչ կանի,
Սիրունին խալն ի՞նչ կանի:

38. (143) ԲԻԼԲԻԼԻ ԲԱՂ ՋԱՆ ՈՒ ՅԱ՜Ր ՋԱ՜Ն

Ինչ անեմ յա՜ր ջան ու ջա՜ն, ջա՜ն,
Բիլբիլի բաղ ջան, յա՜ր ջան:

Էրկեն ճամփեն մըտել եմ,
Ինչ անեմ յա՜ր ջան ու ջա՜ն, ջա՜ն,

Կորցըրածը գտել եմ,
Բիլբիլի բաղ ջան ու յա՜ր ջան,
Ես ծիտ եմ, խորամանկ եմ,
Քո մըռքինը լավ գիտեմ,
Ցայլավորը յայլումն ա,
Յարըս վերի մահլումն ա։
Ջյունն էկել է, հալել է,
Փոսն է դառել, սառել է,
Էգ էյողլու վատ խոսքը,
Ինձ մոմի պես հալել է։
Ջաղացիս ղուռը տարթ ա,
Կտուրը լիքը մարդ ա,
Հըրես էկավ իմ յարը,
Գոտիկը լիքը վարդ ա։

39. (86) ՄԻ՛ ԼԱՐ, ՄԻ՛ ԼԱՐ

Հանդեն ծաղիկ քաղել եմ,
Մի՜ լար, մի՛ լար մեռնիմ կամար ունքերիդ,
Հինձա էրե ղրկեր եմ,
Արտասուքը գարար կըտա շորերիդ։
Դու ի՞նչ գիտես, սերն ի՞նչ է,
Մի՜ լար, մի՜ լար...
Առանց սերի մարդն ի՞նչ է,
Արտասուքը...
Որ իմ վըրեն սեր ունիս,
Ձոր պըռոշըդ թաց արա,

Ցալեքն եկար բարով,
Դոշիս գարկեցիր քարով,
Ինչի՞ գարկիր էդ քարը,
Բալքի էգնի քո յարը։

40. (133) ՃԵՐՄԱԿ ՇՈՒՐԿԵՍ, ԿԱՐՄԻՐ ՅՈՒՐԿԵՍ

Յար սիրելը ղոլա է,
Ալ մինթանես, մինթանես,
Թարգը տալը բալա է,
Ճերմակ շուրկես, կարմիր յուրկես,
Շալ մինթանես, մինթանես։
Պուճուր աղջիկ գալում ես,
Մազերդ սըղալում ես։

Գութանը հաց եմ տարե,
Բերանը բաց եմ տարե,

Յար արի՛, գալուդ մեռնեմ,
Քո բարև տալուդ մեռնեմ։

41. (76) ՀՈ՛Պ, ՅԱՐ, ՋԱՆ ԻԼԱԿԸԴ

Երևան բաղ եմ առե,
Հո՛պ, յար ջան իլակըդ,
Թոփ, յար ջան իլակըդ,
Օզակ, կոճակ, կանխա հանեմ,
Սաղաֆ շարեմ բիլակըդ։

42. (93) ՉԱԴՐԻ ՄԻՋԻ ԳՅՈՒԼ ՍԻՐՈՒՆ

Ջուխտ սարի հովին մեռնեմ,
Չադրի միջի գյուլ սիրուն,
Շեկ յարիս բոյին մեռնեմ,
Խարիր ու չառար սիրուն։
Ջաղացըս մանի-մանի,
Քունըս անուշ կըտանի։

43. (146) ՅԱՐ ՋԱՆ, ԱՐԻ ԲԱՆ ԱՍԵՄ

(Լիշեն, լիշեն լի Սոնա ջան)

Յար ջան, արի բան ասեմ,
Լիշեն լիշեն լի Սոնա ջան,
Զալ աչքերիդ ջան ասեմ,
Ղազանչի Թելլի Սոնա ջան։
Զալ աչքեր կամար-կամար,
Քեզ կառնեմ ինձի համար։
Սարիցն եկավ ջուխտ աղջիկ,
Ջրխտի գոգնոցն էր լաստիկ։

Ծառխ տակը կացել եմ,
Լաչակըս լըվացել եմ,
Խարար տարեք իմ մորը,
Շատ դարդի տիրացել եմ։
Ժամխ տակը մարմար քար,
Ես չեմ առնի ղարիբ յար,
Ղարիբ յարն աչքի փուշ է,
Գեղի միջինն անուշ է։

44. (14) ՋԱՂԱՑԻՍ ԴՈՒՌԸ ՏԱՇԱԾ

(Դոշիդ ա մալոլ ույդուրմա)

Ջաղացիս դուռը տաշած,
Դոշիդ ա մալուլ ույդուրմա։
Այլըղխս գյուլը քաշած
Դոշիդ ա մալուլ ույդուրմա։
Համբըրըե, թառն եմ դըրե,
Լուսին համբըրի մեկ պակաս,
Թալի բերանս, լեղի էր,

Թափի գետին, գինի էր,
Մանդըր հըլուն շարող էր,
Թափառ շապիկ կարող էր։
Առավոտուն թընդիր մուխ,
Թալի յաշմաղ, թարգի պուխ։
Ի՞նչ կենեմ միգն ու մգնոց,
Իրիկ կուգեմ, պառկի ծոց։

45. (154) ԳԱՑԻՆՔ ԱՐՏԵՐ ԲՌՆԻՆՔ ԼՈՐ

Գացինք արտեր բռնինք լոր,
Աղջիկ տեսանք յայլի ձոր.
Ա՜յ աղջիկ քու դարդիցը,
Ջա՛ն աղջիկ քու սավդիցը,
Կերթամ կընդնեմ քարիցը,
Կերթամ կընդնեմ սարիցը։

46. (147) ՔՈՒ ԴԱՐԴԵՆ, ՔՈՒ ՍԱՎԴԵՆ, Ա՛Յ ՏՂԱ

—Ցորեն կըլնեմ, սարը կելնեմ,
Քու դարդեն, քու սավդեն, ա՛յ տըղա։
—Հընձվոր կըլնեմ, քեզ կըհընձեմ,
Ինձ համար, ինձ համար, ա՛յ աղջիկ։

—Ձուկ կըդառնամ, ծովը կընկնեմ,
Քու դարդեն, ա՛յ տըղա։
—Թոռչի կըլնեմ, քեզ կըբռնեմ,
Ինձ համար, ջա՛ն աղջիկ։
—Հավ կըլնեմ, թառը կելնեմ,
Քու սավդեն, ա՛յ տըղա։
—Խորոզ կըլնեմ, քեզ կըբռնեմ,
Ինձ համար, ջա՛ն աղջիկ։
—Կաքավ կըլնեմ, սարը կելնեմ,
Քու սավդեն, ա՛յ տըղա։
—Որսը կըլնեմ, քեզ կըբռնեմ,
Ինձ համար, ջա՛ն աղջիկ։
—Ոչխար կըլնեմ, սարը կելնեմ։
—Չոբան կըլնեմ, քեզ կըբռնեմ։
—Մուկ կըլնեմ, ծակ կըքաշվեմ։
—Կատու կըլնեմ, քեզ կըբռնեմ։
—Ագվես կըլնեմ, սարը կընկնեմ։
—Թազի կըլնեմ, քեզ կըբռնեմ։
Ինձ համար, ջա՛ն աղջիկ։

47. (150) ՍԱՐԻ ՄՈՍԿՈՎ ԷՐ ՅԱՐՍ

Դընե նանար, նանար յարըս,
Սարի Մոսկով էր յարըս։
Էլի խոսքով էր յարըս,
Դընե նանար, նանար յարըս,
Անուշ խոսքով էր յարըս,
Սարի Մոսկով էր յարըս։

48. (153) ԲԱՑ ԽՈՒՐՋԻՆԴ

Էսօր զուլթանը մերն ա,
Մաճ բռնողը իմ ձերն ա,
Բաց խուրջինըդ, հան դանակըդ,
Խընձոր կիսեմ տամ յարիս,
Դիլիմ, դիլիմ, դիլիմ, դիլիմ։

49. (34) ՄԱՆ ԵՍ ԳԱԼԻՍ ՅԱՆԱ-ՅԱՆԱ

Ման ես գալիս յանա-յանա,
Քու ման գալած սարին ղուրբան,
Լավ աղջա եմ մի մոռանա,
Ալագյոզլի նազլի դիլբար։

Հուրի փերին քեզ մոտ բան չէ,
Կարմիր վարդը քեզ նըման չէ,
Մեկ օր ինձի մոտըդ կանչե,
Ալագյոզլի նազլի դիլբար։

Դու ընկել ես քուչա-քուչա,
Ձերից պոպոքները փուչ ա,
Շատ սիրուն ես, խելքըդ քիչ ա,
Ալագյոզլի նազլի դիլբար։

50. (110) ԶԱՐԿԵՆՔ, ԿՈՇԱ ՂԱՅԴԵՆ Է

Զարկենք, Կոշա ղայդեն է,
Կոշա յարի սավդեն է։
Ա՜յ սարեր, բա՜րձր սարեր,
Զարկենք, Կոշա ղայդեն է,
Յարըս ման կուգա սարեր,
Կոշա յարի սավդեն է։

51. (8) ԳՆԱՑԵԼ ԵՍ, ԵԿԵԼ ԵՍ
(Ղարաբիբարա վառավ)

Գընացել ես, եկել ես,
Ղարաբիբարըս վառավ,
Իմ յարին մոռացել ես,
Յանդի ջիգյարըս վառավ։
Լամփի շուշեն կըծընգա,
Ղարաբիբարըս վառավ,
Գլորվա, ծոցըդ ընկա,
Յանդի ջիգյարըս վառավ։
Էս գիշեր, պարի գիշեր,
Զալ աչքեր, կարմիր թըշեր։
Սարերի հովին մեռնեմ,
Սոնիկիս ջանին մեռնեմ։

52. (163) ԵԼԱ ԵՐԹԻԿ, ՏԱՓ ԳՆԱՑԻ

Ելա երթիկ, տափ գընացի,
Լանգեմ զարկի, երթիկ բացի,
Տըղեն կիլար, օրօրեցի,
Վախիլե Զուլո, վախիլե.
Շեկ մազեր գետին կավըլե։
Մեր տան եաև տըտըմ գյազար,
Զուլոն տանեմ, տանեմ բազար,
Զուլոյի գինն է հարյուր հազար։

53. (165) ԱԼԱԳՅԱԶԸ ՄԵԶ ՄՈՏԻԿ

(Հյուրու մալաք է յարս)

Ալագյազը մեզ մոտիկ,
Հյուրու մալաք է յարըս,
Ջյունը էլել է գոտիկ,
Մայրաքաղաքն է յարըս։
Ձիրըս ընկավ ղանակը,
Հյուր ու մալաք է յարըս,
Կեցցե Կարմիր Բանակը,
Մայրաքաղաքն է յարըս։
Կոնդի եաև վար կանեմ,
Կարմիր եզներ գյալ կանեմ։

54. (73) ՁԻՁԻԿ, ԴՈՒ ՉԱԼԵ

Ձիզիկ, դու չալե,
Հարսիկ, դու խաղցի,
Խաչիկ, դու պաղի,
Արտավար, դու նայիր,
Տու-դույ, տու-դույ, տու-դույ, դույ։

55. (120) ՀԱՄ ԳՅՈՒԼ, ՀԱՄ ՎԱՐԴ

Գութանը վար եմ տըվել,
Համ գյուլ, համ վարդ, համ նարգիզ.
Սիրել եմ ջան եմ տըվել,
Համ գյուլ, համ վարդ, համ նարգիզ։

Զոլի ծաղիկ նըման ես,
Արի յար ջան, արի տուն.
Հավեն ամպ է կուգա ձյուն,
Համ գյուլ, համ վարդ, համ նարգիզ։

56. (167) ԴՈՄԲԱՐԻ ՋԱՆ, ԴՈՄԲԱՐԻ

Պարբաշին.— Տուր ջանո, Արագին, Արագ գյալիր։
Պարողները.— Դոմբարի ջան, դոմբարի,
Տուր ջանո, դաաաա, դաաաա ղըզ գյալիր.
Իքյալու ջան, իքյալու։

Տուր ջանո, չեմքից տակից ջուր կերթա,
Տուր ջանո, հարցրեք թե ուր կերթա,
Տուր ջանո, մըհանա քենին կանե,
Տուր ջանո, նշանածատես կերթա։

57. (168) ՅԱ՛Ր ԱՂՋԻ, ԷԿԱՎ ՕՐԵՐԴ

(Լաչչի մանա, սաչչի մանա)

Լաչչի մանա, լաչչի մանա
Սարերու սաչչի մանա։ կրկնակ

Յա՜ր, աղչի էկավ օրերըդ,
Լաչչի մանա, լաչչի մանա.
Յա՜ր, բարով ձեենք շորերըդ,
Սարերու սաչչի մանա։
Յա՜ր, աղչի դուն էլ ոչ էղնես,
Յա՜ր, սև չալովնուն պոչն էղնես։

58. (31) ՅՈԹԸ ՋՈՐ, ՅՈԹԸ ԳԻՇԵՐ

Է՜յ։
Յոթը զօր, յոթը գիշեր,
Յոթը զօր, յոթը գիշեր,
Շաղգամն է գոտխ թոշներ,
Վա՜յ գլի յաման։

Էրթամ Ըստամբոլ, դառնեմ փարա բոլ,
Իմ յարի համար, առնեմ ջուխտըմ ոսլ։
Յար ջան արի, յա՜ր, խըռով մի կենա,
Աշխարհի բան է, քըզի չի մընա։
Առնեմ ըզտամբուլըն,
Էլնեմ քու պապու գերթիս,
Ջիմ կաքվու ձենն ի լսես,
Յար անուշ քընեդ ի զարթնիս։
Կայնել ես էգին, խաղող կըքաղես,
Շամամ ծըծերով, շաքար կըմաղես
Ալմաստ ըեջախով, իմ սիրտ կըղաղես։
Յար ջան արի, յա՜ր, խըռով մի կենա,
Աշխարհի բան է, քըզի չի մընա։
Վա՜յ, սանախեր Կիվկիվ,
Դու գացիր Մուշ բարով,
Էլ չըս իգա հազար տարով,
Հարս պառկել տըղա է բերել,
Առջնիկն էլ դութան կըվարե։
Յար ջան արի, յա՜ր. խըռով մի կենա,
Աշխարհի բան է. քըզի չի մընա։

59. (45) ՋԱՂԱՑՊԱՆՆ ՈՒ ԿԻՆԸ

(Ջաղացպան)

(Կին) *Ջաղացպան դու իմ խերը չես,*
Լայն ճակատիս դու հաժար չես,
Կարմիր թըշներըս կուտամ քեզ,
Աղա ցորենըս, ցորենըս։
Օլմազ խանըմ, օլմազ, օլմազ,
Դագիրման սուլի գյալմազ,
Նորաթչի խայիլ օլմազ, օլմազ,
Ափար բուղդանի, բուղդանի։

60. (17) ԶՈՒԼՈ

Զաղչիս բոլոր հըմեն ուռ էր,
Աշխարհ սաև, Զուլոն ծուռ էր,
Մըջ իմ սըրտին լալ ու դուռ էր,
Հավար Զուլո, մաղաթ Զուլո։
Հերթկով անցա, թափ քելեցի,
Լանգով զարկի, գերթիկ բացի,
Յարըս տուն չէր, նըստա լացի,
Հավար Զուլո, մաղաթ Զուլո։

61. (16) ՀՈ՛Պ, ԶԱՐԴԵՐ, ԶԱՐԴԵՐ, ԶԱՐԴԱԼԱ

Հո՛պ, զարդեր, զարդեր, զարդալա,
Հո՛պ, զարդեր, տու խունջլե կըլա,
Աղջի, անունդ Մանի,
Հո՛պ, զարդեր, զարդեր, զարդալա։
Գոգնոցըդ բոլոր շանի,
Հո՛պ, զարդեր, տու խունջլե կըլա։

Թուշըդ դես արա պագնեմ,
Աստված ախպերը պահի։
Ես ծիտ եմ, թեըս գեղին,
Ման կուգամ նանիս գեղին,
Արգեն հասել են արտերը,
Շուտով կըլընի հեղին։

62. (60) ՍԱՐՔԻ, ՍԱՐՔԻ ՍԱՄԱՎԱՐ

Սարքի, սարքի սամավար,
Ոչ ոսկի կուզեմ, ախպեր ջան,
Ոչ ոսկի քյամար։
Հինգը պառը թամամ է,

Սարքի, սարքի սամավար,
Ծոցըդ քընեմ համամ է,
Ոչ ոսկի կուզեմ, ախպեր ջան,
Ոչ ոսկի քյամար։

63. (89) ԶՄՓԻԿ, ԶՄՓԻԿ ԶԱՐԻՆ Է

Զըմփիկ, զըմփիկ զարին է,
Իմ տալը Շուշանիկն է,
Նանիս գնաց աղցանի,
Աղցան չեղավ խոտ էղավ,
Խոտի միջին ճուտ էղավ,
Ճուտը թըռավ գերանին։
Զուլում, զուլում փեփակի,
Էշը վազից քուռակի,

Կաթը տըվավ Ֆռանկի,
Պառշըն տըրի պերանգի,
Օղ ունեմ, ղոխտուր ունեմ,
Արըշմե ղարլուղ ունեմ,
Աչքեր քաղեք, աչքեր հանեք,
Ազար տըղոց հոգին հանեք,
Ազար տըղերք հորըս մշակ,
Էրթամ քաղեմ վարդ մանուշակ։

64. (90) ՅԱՐ ՏՈՒԳԻ ՋԱՆ

Սարերի հովն ու քամին,
Յար Տուգի, յար Տուգի, յար Տուգի ջան,

Շատ բարև Նազլու յարին,
Գեյդըրըն օթլար, ջան, Տուգի ջան։

Սիրտըս դընեմ սըրտիդ մեջ,
Տեսնեմ դարդերըդ ո՞նց ա։

Աղջի, անունըդ ասա,
Գըլխինըդ ֆինու ֆաս ա։

Աղջի, անունըդ Նունե,
Տունըդ լագլագի բուն է։

Հոպ տուր արաի քարափը,
Իջա՞նք Արագի ափը։

65. (113) ԳՅՈՒՂԵՐԻ ԲՆՈՐՈՇՈՒՄ

Յուղի, յուղի՝ իլխիյարցիք,
Թաք ծառի տեր՝ ճլոխանցիք,
Սոմի կածող՝ դըհարլեցիք,
Հասասա քաղքցիք էն գյումրեցիք։
Ջեյրանի պես էն հոռոմցիք,
Ուտող-խմող՝ պառնի գեղցիք։

Պարտքընտեր էն դասմալեցիք,
Ցարմասան էն դուլիջանցիք,
Գարեհաց ուտող՝ եջանլարցիք,
Բասմի ջուր խըմող՝ նորաշենցիք,
Քյանար կապող՝ գյոգալգարցիք,
Լավ ձի հեծնող՝ աղզուլեցիք,

66. (139) ԴՈԼԱՐ, ԴՈԼԱՐ, ԴՈԼԱՐ Է

Արի, ես դու յար դառնանք
Դոլար, դոլար, դոլարէ,

Իրար սիրահար դառնանք,
Շինդլի յարըմ, դոլարէ։

Պատը բըլի, վըրեդ գա,
Թող իմ յարը մենակ գա։

Հավը թըռավ, թառն էլավ,
Իմ բանը գավով էլավ։

Մեռնի սարաբի բալեն,
Դուշմանի սըրտով էլավ։

Խնձոր ավիր, ես չառա,
Էդ ինչ բերախտ յար դառա։

Հայ իմ թխե փըրփըրի,
Գեշ դուշմանը քըրքըրի։

67. (140) ԱՌՎԵ ԱՌՈՒ ԵՄ ԹՌԵ

Օ՜յ, օ՜յ, առվե առու եմ թըռե,
Օ՜յ, օ՜յ, քառասուն կաքավ եմ բըռնե։

68. (35) ՀՈՎ ԱՐԵՔ ՍԱՐԵՐ

Հով արեք սարեր ջան, հով արեք,
Իմ դարդին դարման արեք։

ԿՈՏԱՅՔ-ԱԽՏԱ

69. (46) ՋԱՂԱՑՍ ՊԱՏԻԿ-ՊԱՏԻԿ

Ջաղացըս պատիկ-պատիկ,
Աչքերըդ նըռան հատիկ,
Ամեն քեզի տեսնելով,
Համ համբարձում, համ զատիկ։

Ջաղացըս մանի-մանի,
Անուշ քունըս կըտանի,
Իմ յարըս հանդի չոլում,
Իմ քունըս ինչ կըտանի։

Ջաղացըս ման եմ տըվել,
Սիրել եմ, ջան եմ տըվել,
Ցոթը տարի սիրութjուն,
Մեկ օր պայման եմ արել։

70. (31) ԲԱՐԱԿ Է ԲԱԺԸԴ, ԿՌՈՒՆԿ

Բարակ է բաժըդ, կըռունկ,
Աչքերըդ խաժ է, կըռունկ,
Դուն ջուխտ գացիր, թաք էկար,
Ո՞ւր է ընկերըդ, կըռունկ։

Բիլբուլ լեզուդ լալ մընաց,
Ալ վարդերըդ խալ մընաց,
Սըրտիդ ուզած մեռեր է,
Ալ յափունջիդ ծալ մընաց։

Ծերմակ է դոշըդ, կըռունկ,
Ընքներըդ թուխ է, կըռունկ,
Դուն ջուխտ գացիր, թաք էկար,
Ո՞ւր է, եղբայրըդ, կըռունկ։

Քու տեղըդ մի լավ տեղ է,
Օթևանըդ շատ նեղ է,
Սըրտիդ ուզած մեռեր է,
Գերեզմանդ օտար տեղ է։

71. (42) ԵՍ ՔԵԶԻ ՍԻՐԵՑԻ

Ես քեզի սիրեցի, ընձի յար ըլնի,
Էրված փառված սըրտիս դեղ ու ճար ըլնի,
Տո յա՜ր, յա՜ր, յա՜ր, սիրահար,
Ինձ մի քըցի քարեքար,

Իմ դարդերիս մեկ դարման,
Ինձ մի անիր դարբեդար։
Ամեն մի բաղչեքը ցանում են բանջար,
Դու գարնան ծաղիկ իր, ո՞րտուց կանաչար։

Ես քեզ սիրեցի, դու էլ անբախտ իր,
Նոր բացված ծաղիկ իր, դուզարն ըր։

72. (1) ՈՒԼՈՒԶ ԲՈՒԼՈՒԶՈՎ ՏՂԱ

Ուլուզ բուլուզով տըղա,
Կարմիր բուլուզով տըղա։
Ա՛յ տըղա. բաղովն արի,
Ուլուզ բուլուզով տըղա,
Ոտներըդ շաղովն արի,
Կարմիր բուլուզով տըղա։
Գընա՛, գընա՛, գալիս եմ,
Թըրթընել եմ, լալիս եմ,
Պուճուր աղջիկ սևավոր,
Սըրտի կաթնովի սավոր։

73. (2) ՀԵ՜Յ, ԻՄ ՆԱԶԱՆԸ ՅԱՐԸ

Հե՜յ, իմ նազանը յարը,
Չէ՛, իմ դուզանը յարը։
Լուսնի լուսնակը ես եմ,
Հե՜յ, իմ նազանը յարը,
Ծովի ձըկնակը ես եմ,
Չէ՛, իմ դուզանը յարը։
Գընացի Մուղնի, լողացա,
Մուղնու շուշքեն գողացա։

74. (3) ԹԱԶԱ ՄԱԾՈՒՆ ԵՄ ՄԵՐԵԼ

Թազա մածուն եմ մերել,
Իմ յարը հաց չի կերել,
Հեռու անդից ա գալիս,
Ինձ լավ փեշքեշ ա բերել։
Լո, լո, լո, լո, լո, լո, լո,
Լե, լե, լե, լե, լե, լե, լե։

75. (4) ԱԼԱԳՅՈԶԼԻ

Յա՜ր, կայնել ես, կանչում էլ չես,
Ալագյոզլի նազլու դիլբար,
Յա՜ր, բոյիցըդ ամաչում չես,
Էդ քու բերող մորը ղուրբան։
Յա՜ր, կայնել ես, ախա բախա,
Յա՜ր, թուխ չուխա, ճերմակ յախա։

Յա՜ր, բութա բըռնես ու չառնես,
Յա՜ր, թուխ քյանքյուլով հող մըռնես։
Բութա բըռնելը ղոլա է,
Թողնելը դարդ ու բալա է։

Յա՜ր, կանաչել է արտերը,
Յա՜ր, թաժացել է դարդերը։

Յա՜ր, դարդ ունեմ, դարման չունեմ,
Յա՜ր, յաման դարդիս տեր արեք։

76. (6) ԷԼԻՆՈ ՅԱՐ

Յար սիրելը լավ բան չի,
Էլինո յա՜ր,
Ջահել ջանըդ կըփըչի,
Էլինո յա՜ր։
Թե սիրել ես պինդ բռնի,
Էլինո յա՜ր,
Ձեռնադաշ ա կըթըռնի,
Էլինո յա՜ր։

Սարից էլավ երկու մուխ,
Մեկը հանգավ, մեկը ծուխ,
Երկու գյոզալ եմ սիրե,
Մեկը չեկ էր, մեկը թուխ։

Սարերին ծաղիկ չըկա,
Իմ յարին մայրիկ չըկա,
Իմ յարի մայրիկ խորթ ա,
Վախենամ ընձի մորթա։

77. (8) ՄԵՐ ԲԱՄԲԱԿԸ

Մեր բամբակը, ձեր բամբակը,
Քյալա, քյալա է։
Յար սիրելը, յար թողնելը,
Բալա, բալա է։

78. (9) Ա՜Խ, ՄԱՄԱ ՋԱՆ

Ա՜խ, մամա ջան, լուսնի կեսը վերջացավ,
Թարկ տըվեցի, յարըս հո չընեղացա՞վ։

Կանաչ արտը էրակ ա,
ա՜խ, մամա ջան...
Աղջիկ մորը կըրակ ա,
ա՜խ, մամա ջան...

Խերանցըս կալը փոսա ա,
Բար կըքըցեմ կըսոսա։

Յար ջան դու խոսա, խոսա,
Իմ նանի ազիզ փեսա։

79. (27) ՍԵՎԻՆ ՍԻՐՈՒՆ ԵՍ

Արազն ընկա էն կուժը,
Բաղեցի Գյանջա նուռը,
Սևլին սիրուն ես,

Մի մոր բալա ես,
Սատ ումուդ ջան,
Սրտավ սիրած յար չունե՞ս։

Դաղդա սարը կանանչ ա,
Անիկը ինձ ճանանչ ա։

Բամի ջան, շատ ժաժ մի գա,
Անիկիս մազեր ժաժ մի տա։

Դաղդա սարին ձյուն չի գա,
Ինչի՞ յարըս տուն չի գա։

80. (14) ՎԱՆԵՑՈՑ ԳՅՈՒԹՆԻ ԵՐԳԸ

Բարի լուսուն աստղերն էլան,
Աղոթարան դըռներն ի բաց,
Բարով բացվեր լուս աղոթրան,
Լըծենք սարվազ, էթանք գյութան։

Գյութնի թախըմ նըմուշ-նըմուշ,
Ջըկեր վաստակ չանք էն անուշ,
Գյութան չելներ, աշխարն ի՞նչ էր,
Աշխարհի շեն վըր գյութնին էր։

81. (12) ԴԱՐԴԵՐՍ ՇԱՏԱՑԵԼ Ա

Ա՛յ տըղա էրովն արի,
Գյուլա, գյուլա,
Գյուլերը շատացել ա,
Ոչխարի բերովն արի,

Յարոյիս տարել են,
Դարդերըս շատացել ա։

Իմ նան քեզ աղջիկ չի տա,
Կարաս մի ֆանդով արի։

82. (17) ԼԵ՛, ԼԵ՛, ՎԱ՜Յ ԼԵ, ՄԱՐՈ

Էսօր լավ է, քանց էրեկ,
Լե՜, լե՜, վա՜յ լե, Մարո,
Լե՜, լե՜, լե՜, վա՜յ լե՜, լե՜, Մարո։

Մաշվում եմ գիշեր-ցերեկ,
Լե՜, լե՜, վա՜յ լե՜, Մարո,
Լե՜, լե՜, լե՜, վա՜յ լե՜, լե՜, Մարո։

Իմ յարին բերեք տեսնեմ,
Ելի դարձըրեք տարեք։

83. (18) ՅԱ՛Ր, ԴԵ՛ ԳԻԴԻ, ՅԱ՛Ր ԴԵ՛

Բոլ ա անցնես մեր պատով,
Յա՜ր, դե՜ գի՜դի, յա՜ր դե՜,
Յա՜ր, դե՜ գի՜դի, յա՜ր դե՜։

Մեր պատ բըլավ քու դարդով,
Յա՜ր, դե՜ գի՜դի, յա՜ր դե՜,
Յա՜ր, դե՜ գի՜դի, յա՜ր դե՜։

Ջուն էր էկե սարերուն,
Խալվավ, Թափավ քարերուն,
Լցվավ յարոջ կըժերուն,
Թափավ շամամ ծըծերուն։

84. (19) ԾՈՎԻ ՄԻՋԻ ՏԱՇ ՔԱՐԸ
(Բուդալ)

Ծովի միջի տաշ քարը,
Աղջի առնեմ քու չարը։
Բուդալ, բուդալըս գնաց, Մարալ,
Խըռովավ յարըս գընաց։

Ժամու դըռան արեը,
Ում տամ, տանի բարևը.
Բուդալ...

Ծառի ակլի վարդըն եմ,
Լավ օրիորդի մարդըն եմ,
Մեջի միջի պաղ աղբուր,
Տըղա՛ արի, տար քո քուր,
Քո քուրն ինձի խավան չի,
Տար ու ընձե լավին տուր։

85. (31) ԵՍ ՄԻ ԱՂՋԻԿ ԷԻ

Ես մի աղջիկ էի, բաղիցն էի գալիս,
Տեսա մի շեկ տղա, սերն էր խուրձ տալիս։

Ես կանգնած մընացի նրա շարժմունքին,
Շեկ քյանքյուլը շուռ էր տըվել Թիկունքին։

Մայրիկ, ես մեռնում եմ, իմ ցավին աշեք,
Շեկ յարի յայլուղը երեսիս քաշեք։

Գընա՛ ուղիս, գընա՛ աշխարհ ման արի,
Սիրահարությունը շատ դըժվար բան է։

86. (22) ՔԱՄԻՆ ՅԱՆԱ ՅԱ՛ՐՍ

Ա՛յ տըղա ային արա,
Քամին յանա, քամին յանա յարըս,

Ոչխարը չայիրն արա,
Քամին գանա, չեկ քյանքյուլըդ բանա,

Թալեն բերեք, ձու խաշեմ,
Ելնեմ կտուրը աշեմ։

87. (23) ՀԱՐՍԱՆԵԿԱՆ

Թագվորամեր դուս արի,
Քյո տըներ ավլող եմ բերի։

Թագվորամեր դուս արի,
Քե գըլուխ լըվող եմ բերի։

Թագվորամեր դուս արի,
Քե գըլուխ գըմփող եմ բերի։

Թագվորամեր դուս արի,
Քյո խեր քըֆրող եմ բերի։

88. (7) ԴԱՐԴԱՐ ԱՍԵՄ

Դարդար ասեմ քունըդ տանի,
Քեզի թալեմ ջուրը տանի։
Նանիկ, նանիկ սիրուն բալիկ,
Նանիկ ասեմ քունըդ տանի։

89. (44) ՍԵՎ ԱՉԵՐՈՒԴ

Սև աչերուդ, աղեղ ունքերիդ մատաղ,
Մեղրից ու շաքարից անուշ աղջիկ ջան,
Աղջիկ ջան,

Վարդագույն աչքերդ, միշտ գեղածիծաղ,
Փայլըդ կաքավի պես, քնքուշ աղջիկ ջան։

Վազա՛ն, մի՛ ժամիր, վազա՛ն, բախտըդ ընկնեմ,
Ցարխս գու մի՛ տանջիր, անուշ աղջիկ ջան։

Պատկերըդ նկարող երիտասարդը,
Կըդառնա խելագար, անուշ աղջիկ ջան։

90.(40) ԴՈՒ ԱՍԱՑԻՐ ԿԵՐԹԱՄ

Դու ասացիր կերթամ, ես չըհավատացի
Յա՜ր, արի բիլբուլըս,
Ելա գացի բաղը, ես ձեռաց գացի.
Յա՜ր, արի բիլբուլըս, շուտ արի բիլբուլըս։

Ասա տեսնեմ, քեզ ո՞վ հանեց ինձանից,
Հանողը խեր չտեսնա, ուր ջահել ջանից։
Մըտածում եմ, ես ի՞նչ անեմ էս ցավին,
Այս սարերը մըթնել են իմ ջահել ջանին։

91. (38) ՔԱԼԱ Է, ՔԱԼԱ Է

Մեր բամբակը, ձեր բամբակը,
Քալա է, քալա է,
Յար սիրելը, յար Թողնելը,
Բալա է, բալա է։

92. (39) ԱՐԻ ԳՈՒԹԱՆ

Արի գութան, վարի գութան,
Սար չուռ տուր, խոփիդ դուրբան.
Օրը եկե ճաշ ա դառե,
Արի գութան, վարի գութան։

Մաճկալն ասավ, փըլավ բերեք,
Հոտաղնե՛ր ջան, եկեք կերեք,
Ճամփորդ մարդու փայ պահեցեք,
Արի գութան, վարի գութան։

Գութանն ասավ, մարմար քար եմ,
Սեաճողը լավ կըվարեմ,
Մանդըր ակոսներ կըշարեմ,
Արի գութան, վարի գութան։

Եզներն ասին, հալ ու մաշ եմ,
Ծիպոտ տալուս լավ կըքաշեմ,
Զանգյալ գոմեշներ կըմաշեմ,
Արի գութան, վարի գութան։

93. (47) ՀՈԽՈՎԵԼ

Առավել, առավել, բոյիդ մեռնեմ,
Ելավ առավել եկը ջան, առավել։

94. (10) ԿՌՈ՛ՒՆԿ ԾԱՓ ՏՈՒ ՈՒ ԹՌԻ

Սարի սոկոնը սխատ է,
Կըռունկ, յար արի, յար արի,
Ախպերըս կոմունիստ է
Կըռունկ, ծափ տու ու թըռի։

95. (34) ԳԵՂԱՄԻ ԵՐԳԸ

Ջին խեծա գյուղերանք կերթի,
Ուրախ-ուրախ կըպըլըթի,
Շատեր գիտեն շուշպի կերթի,
Կորա բեգյուման, բեգյուման։

Ջինըս կախվեր էր կարմընջեն,
Հավար չեկավ, ոչ մի կողմեն,
Բրախեցի գյաճն իմ ձեռքեն,
Գընաց բեգյուման, բեգյուման։

Կարմընջի վերի կըլոր ծակ,
Քեչեն վըրեն, բալիշն էր տակ,
Բոլորն էլ գնաց պաղի տակ,
Գընաց բեգյուման, բեգյուման։

Ես Գեղամն եմ, միաքըս ուրիշ,
Ափսոս քեչեն, գյաճն ու բալիշ,
ընաց բեգյուման, բեգյուման։

96. (20) ԾԻՐԱՆՆԵՐԻ ԲԱՐԸ

Ծիրանների բարը,
Բամբակների քալը
Սանդալներըդ ով է կարել,
Արփենիկի յարը։

97. (10) ԵՍ ԷԹԱՍ ԵՄ ՍԱՐԻՂԱՄԻՇ

Պապէն վերցրեց անթրոցը,
Փախավ մըտավ ամրոցը,
Կաքավը երգեց, սարյակըն էլավ ժայռերը,
Գարուն բացվավ, ծաղիկ ծաղկեց, հարսներն
էլան սարերը:

Ես էթաս եմ Սարիղամիշ,
Ով գինա կիգամ, ով գինա չիգամ, իմ կակոս:

98. (23) ՄԱՐԱԼ ՇՈՒՇՈ, ՋԵՅՐԱՆ ՇՈՒՇՈ

Շուշոն էլավ, կերթեր մարագ,
Ցուր ուտելիք մեղր ու կարագ,
Իր հագնելիք շատ բունդարաք,
Մարալ Շուշո, Ջեյրան Շուշո:

Շուշոն էլավ կերթեր կավլի,
Սոլեր պղտիկ, ոտներ ցավլի,
Գեղով կայներ, կաներ դավլի,
Մարալ Շուշո, Ջեյրան Շուշո:

Մեր տուն, ձեր տուն իրար մոտիկ,
Էրթանք քաղենք հորթկան խոտիկ,
Բերենք, դընենք մըրրա մոտիկ,
Տեսնենք վի՞ր յարն ա խորոտիկ:

99. (20) ՔՈ ՉԻՆԱՐ ՅԱՐԻՆ

Դարդանից տակը հով ա,
Իմ չինար յարին, քո չինար յարին,
Մայրիկըս ինձ կըղովա,
Ասըղ գիր քարին, առ սիրած յարին:

Ա՜խ, մայրիկ ջան, մի՛ գովա,
Սիրտըս արյուն ա, ծով ա:

100. (11) ԱՐԵՎԻԴ ՄԵՌՆԵՄ

Էսօր լավ էր քանց էրեկ,
Արևիդ մեռնեմ,
Էրեցա գիշեր-ցերեկ,
Բարևըդ կառնեմ:

Իմ սիրածը ըստեղ բերեք,
Արևիդ մեռնեմ,
Տեսնամ, դարձըրեք տարեք,
Բարևըդ կառնեմ:

ՆՈՐ-ԲԱՅԱԶԵՏ

101. (17) ՍԱՔՈ

Էսօր էգուց գարուն կուգա,
Իմ Սաքոնը փետ կըվերցա,
Հա՛ կանա, լե՛, լե՛ կասա,
Բաշ մատըկներ սար կըտանա,
Մածուն մերա, կարագ բերա,
Ճըժերուն լավ կըպախա,
Լե՛, լե՛, լե՛, լե՛, լե՛, լե՛, լե՛. լե՛,
Լե՛, լե՛, լե՛, լե՛, լե՛, լե՛, լե՛, լե։

Տղա. *Աղջի ջան, աղջի, արի քեզ տամ,*
Խոջի աըղին, սև խալիչեն,
Սաֆարի բողչեն։

Աղջ. *Ինչ եմ անում խոջի աըղեն,*
Սև խալիչեն, Սաֆարի բողչեն.
Հազար էտենց ղուրբան կանեմ,
Իմ Սաքոյի չարխի թելին, չորբի թելին,
Թուխ քոլոզին, շալ ըըլըգին, պապիրոսին։

102. (25) ԱՆՈՒՇ ՋԱՆ

Ղյամար եմ կապե լիքը մի մատ ա, անուշ ջան,
Սիրել եմ կառնեմ, դյոըն աղքատ ա, անուշ ջան։

103. (30) ՏԿԾՈՐ

Տըկծոր առանց քեզ խավար է օրըս,
Վերցնեմ գավաթով, լըցնեմ իմ փորըս,
Ա՜խ, տիկը, տիկը, վա՜խ, տիկը, տիկը,
Ջա՛ն տիկը, տիկը տըկծոր,
Առանց քեզ երբեք չունեմ մեկ լավ օր։

Պիպիկըդ նախշեմ էրծաթով, ոսկով,
Կյանքըս մատաղ կանեմ, ես քեզ մի խոսքով։
Կրկնակ

Դու չըրս պոզանի, սիրուն աննըման,
Առանց քեզ չըլնի, ոչ քեֆ, ոչ նշան։
Կրկնակ

104. (47) ԿԵՍ ԳԻՇԵՐԻՆ

Կես գիշերին դուրս եկա,
Թուխ ամպ անուշ կցոլա,
Ցոլում է ալմաստ սարին,
Գիր գըրեմ կըռունկ յարին,
Նամակի մեջ շատ բարի,
Յար ջան կանչեմ շատ արի։
Լուսնակը ցոլաց, ցոլ գնաց,
Դեմ արեց ամպին մնաց,
Մի ճար արվեք ես անցնեմ,
Իմ յարըս սալդաթ գընաց։

105. (62) ՍԻՐՈՒՆԻԿ, ՍԻՐՈՒՆԻԿ ԾԱՂԻԿՆԵՐ

Պուճուր աղջիկ զալում ես,
Ծամերըդ սըղալում ես,
Միտք ունիս ինձի առնես,
Աչքով-ունքով անում ես։
Սիրունիկ, սիրունիկ ծաղիկներ,
Անուշ-անուշ հոտ ունիս։
Աղջի էրթանք մեր բաղը,
Երգենք մեր քաղցըր խաղը,
Աղջի էրթանք մեր պարտեզ,
Քե կըպահեմ վարդի պես։
Սիրունիկ, սիրունիկ ծաղիկներ,
Անուշ-անուշ հոտ ունիս։

106. (68) ԿԱՆՉԱ՛ ԿՌՈՒՆԿ, ԿԱՆՉԱ՛

Կանչա՛ կըռունկ, կանչա՛, քանի գարուն ա,
Աշխարքին արև ա, ընձի դուման ա.
Աշխարքին արև ա, ընձի դուման ա,
Ցանարամ յար ջան, յա՛ր, ղոնարամ յար ջան։

Ես սարեն կուգայի, դուն դուռը բացիր,
Ձեռն ծոցեդ խանիր, մ՛ի արիր լացիր.
Որ դու ընձի չառնեիր, ընչի՞ խաբեցիր,
Էլար գունդըմ կըրակ, սիրտըս վառեցիր։

107. (73) ԾՈՎԻ ԱՓԸ ՎԱՐ ԿԱՆԵՄ

Ծովի ափը վար կանեմ,
Ղըռընգներին քար կանեմ,
Իմ սիրածը ինձ տըվեք,
Ծըռությունըս թարգ կանեմ։
Ծովի ափը արտ ունեմ,
Շատ մարդ գինա դարդ չունեմ,
Դարդերն ինձի տարել ա,
Ջհել եմ, խաբար չունեմ։

108. (74) ՊԱՏՇԿԱՄԲՈՒՄ ԿԱՅՆԵԼ ԵՍ

Պատըշկամբում կայնել ես,
Վարդի նըման բացվել ես,
Ըսպասում եմ քո յարին,
Մեռնեմ դոշիդ սև խալին։

Թե կըսիրես, կըրակովդ ինձ մի էրի, վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ,
Եթե դեմըդ մեղավոր եմ, մեղքըս ների։

Սարի քամին հով կը՞նգա,
Գլորվա գիրկըդ ընկա,
Թե կըսիրես, կըրակովդ ինձ մի էրի, վո՛ւյ, վո՛ւյ, վո՛ւյ։

Ե՛կ, իրարից չամաչենք,
Փաթաթվենք, խաղեր կանչենք,
Հերիք նստես էն դալին,
Մեռնեմ դոշից սև խալին։

109. (76) ՈՍԿԵ ԳՈՒԼԱԿՈՎ ՏՂԱ

—Քեզ որ սիրի ախպրի վըրեն,
Բոյիդ մեռնեմ, ա՛յ աղջիկ։
—Ձիու վըրա արի անցի,
Ոսկե գուլակով տըղա։

—Թուխ-թուխ աչերըդ մարեցի,
Բոյիդ մեռնեմ, ա՛յ աղջիկ։
— Մեկ անուշ պագ քեզնեն կուզեմ,
Ոսկե գուլակով տղա։

Կըրծքիդ վըրա մեկ խալ կուզեմ,
Կուրծք ա, ջուխտակ շամամ ա,
Եղվարդ մենակ սարի քարին,
Ցոլում է սարի լուսին։
Սարի մարալ իմ սիրուհին,
Ո՞նց մոռացա իմ յարին։

110. (82) ԷԼԻ ԵՐԿԻՆՔ ԱՄՊԵԼ Է

Էլի երկինք ամպել է,
Յարըս ալ ձին թամքել է,
Ինձանից խըռով կերթա,
Բոխչեն ճամփին կապել է։

Յար ջան, յանարիդ մեռնեմ,
Բոյիդ, բոխախիդ մեռնեմ,
Լսել եմ հարս ես եղել,
Քեզ տեսնելու ես եկա։

Քյանքյուլիդ կալին մեռնեմ,
Երեսիդ խալին մեռնեմ,
Լսել եմ կարդացող ես,
Գրքերիդ ծալին մեռնեմ։

111. (77) ՀԱԲՐԲԱՆ

Հաբըրբա՜ն. ջա՜ն ջա՛ն։
Հաբըրբանի հորեն եմ,
Ջոջ բաղի խնձորեն եմ,
Փամին էկավ թափ տըվեց,
Վաթանըս մոլորվել եմ։

Հաբըրբանը արտա-արտա,
Դարի տակը լիքը մարդ ա,
Մեռնեմ կասեր կաղնողին,
Տանյոթ տարեկան մարդ ա։

112. (79) ՀԵԼԼԻ ՅԱՐԻՆ ԵՄ, ՕՅ, ՕՅ, ՕՅ

Հելլի յարին եմ, օյ, օյ, օյ,
Թելլի յարին եմ, օյ, օյ, օյ.
Կանաչ արտը հաց տարա,
Հելլի յարին եմ, օյ, օյ, օյ,

Յարիս տեսա ետ դառա,
Թելլի յարին եմ, օյ, օյ, օյ։
Այս ինչ բերախտ աղջիկ էի
Խընձոր տըվեց, ես չառա։

113. (88) ԹՌՎՌԱԼԵՆ ԳԱԼԻՍ ԵՔ

Թըռվըռալեն գալիս եք,
Աղբյուրի ջուր տանելու,
Իմ աղաչանք լսեցեք,
Ու՞ր է յարըս, չի՞ գալու։

Քանի օր է ման կըգամ,
Իմ արևին վայ կըտամ,
Ոչխարըս անտեր թողած,
Յարիս հետեն եմ ընկած։

Ջան աղջիկներ, խըղճացեք,
Ինձ մի պատասխան տըվեք,
Յարաբ գալուն ձեզ տեսա՞վ,
Տեսա՞վ, թե չէ բան չասա՞վ։

114. (91) Ա՛Յ ՏՂԱ, ԱՐԻ՛, ՋՈՒՐՆ ԱՆՑՈՒ

—Վըզիս վըզնոց քեզ կիտամ,
Ա՛յ տըղա, արի՛, ջուրն անցուր։
—Վըզիդ վըզնոցն ինչի՞ս ա,
Ի՞նչ կիտաս աղչի, ջուրն անցում։
—Բրասլետներ քեզ կիտամ,
Ա՛յ տըղա, արի՛, ջուրն անցուր։

—Բրասլետներ ինչի՞ս ա,
Ի՞նչ կիտաս աղչի, ջուրն անցում։
—Մեջքիս քյամար քեզ կիտամ,
—Մեջքիդ քյամար ինչի՞ս ա։
—Գլազ գեյրես քեզ կիտամ,
—Գլազ գեյրեդ ինչի՞ս ա։

—Կարմիր թըշեր քեզ կիտամ,
—Կարմիր թըշեր ինչի՞ս ա։
—Ամբողջ ջանըս քեզ կիտամ,
—Ամբողջ ջանիդ ես գուրբան,
Ա՛յ աղչիկ, արի՛, ջուրն անցում։

115. (47) ԱՐՄԵՆՈՒՀԻՆ ԱՅՍՕՐ ԿՈՐԵ

Բարիկենդան լավ-լավ օրեր,
Արմենուհին այսօր կորե,
Խաս-խաս շորեր անտեր թողե,
Ելեք տեսեք ո՞րն է տարե։

116. (93) ՇՈՒՇԱՆ ՋԱՆ

Ելանք սարը վազեվազ,
Քամին կըգա նազենազ,
Շուշան քաղենք, Շուշան ջան,
Լո՛, լո՛, լո՛, լո՛, լո՛, լո՛, ջան։

Ելանք սարը սար տեսանք,
Վարդի թըփեր բաց տեսանք,
Մանիշակ փըռված տեսանք,
Լո՛, լո՛, լո՛, լո լո՛, լո՛, ջան։

Սարից իջանք ջրի քով,
Վարդի թփեր քովեքով,
Ծաղերու տակ պար բռնենք,
Լո՛, լո՛, լո՛, լո՛, լո՛, լո՛, ջան։

Արև շողեր էլ չըկա,
Թըռչուն, թիթեռ բուն մըտան,
Վազենք երթանք դեպի տուն,
Լո՛, լո՛, լո՛, լո՛, լո՛, լո՛, ջան։

117. (97) ԿՈՒԺՆ ԱՌԱ

Կուժն առա եկա սարը,
Ջըգըրտա ֆիդան յարը,
Ֆիդան յարըս ինձ տըվեք,
Ջըքաշեմ ախ ու զարը։

Առավոտուն պյամին եկավ,
Հարավ քամին փառեց գլխս,
Քո սերն ընկավ մեջ իմ սըրտին, գաղեց գլխս։
Ա՛խ, բացվիր վարդ, մի՛ թոռմիր վարդ,
Ես բլբուլ եմ, չունեմ երամ երթալու։

Առավոտուն շարմաղ զարկեց լանջերուն,
Բլբուլ չաղըը զարկեց, վարդի թփերուն։
Ա՛խ, բացվիր վարդ…
Բլբուլն ասեց, մեջ թփերուս վարդ չըկա,
Էնքան լացի, թուխ-թուխ աչեր քուն չըկա։
Ա՛խ, բացվիր վարդ…

118. (119) ԼՈՒՍՆԱԿՆ ԱՆՈՒՇ

Լուսնակն անուշ, հովն անուշ,
Վա՜յ լե՛, լե՛, լե՛, լե՛,
Վա՜յ լե՛, լե՛, լե՛, լե՛,
Շինականի քունն անուշ,
Վա՜յ լե՛, լե՛, լե՛, լե՛,
Վա՜յ լե՛, լե՛, լե՛, լե՛։

119. (148) ԵՍԻՄ-ԵՍԻՄ

Բոստան գընի դարի կող, եսիմ-եսիմ,
Աստված կըտրեր գետնի խող, յաման, յաման,
Ընձի չասին յարըդ թող, յաման, յաման։
Դեղ եմ գըրե, ես հավան չեմ,
Ես իմ գըլխուն դիվան չեմ.
Ես ոչխարամորթ կըլինեմ,
Ես էդ գյադին գընալ չեմ։
Բարակ եմ չինարի պես,
Մի օլորվի, աչմ տես,
Ջահել կյանքըս խանիր կես։

Եկա գացի խաց տարա,
Յարիս փափագըն չառա,
Այ աշ կանեմ, աշ կանեմ,
Սիպտակ դեյրեն, քաշ կանեմ,
Ամեն յարին տեսնելուն,
Սիրտըս հալ ու մաշ կանեմ։
Կանանչ արտը կըմողա,
Իմ սիրտ քո դեմ կդողա,
Եկա գացի տեսնելու,
Քյաֆուր նանին չի թողա։

120. (152) ԿԱՐՄԻՐ ՔԱՐԸ ՏԱՇՈՒԿ Է

Կարմիր քարը տաշուկ է,
Բոյըս վըրեն քաշուկ է,
Ձեն տըվի ձենըս չառար,
Մարդյար թարգըս տըվուկ է,
Յարո, յարո, յարո ջան,
Ջանո, ջանո, ջանո ջան։

Դիվու դարին կելներ մուխ,
Կելներ մի բարալիկ ծուխ,
Անտառ, եկավ իմ ախպեր,
Բաժն ա երկեն, քյանքյուլ թուխ։

Սարի արագին մեռնիմ,
Գինու կարասին մեռնիմ,
Ճամփա գալող չեկ ախպեր.
Սըրտիդ մուրազին մեռնիմ։

Երկինքը գըռգըռում ա,
Սարերը սըռսըռում ա,
Եկան ըսին եղբայրդ է,
Իմ սիրտը մըռմըռում ա։

Աղ եմ առել կկոճեմ,
Յարոջ դարդեն կըխըղճեմ,
Եկան ըսին՝ ախպերդ ա,
Թև եմ առե կըթըռչեմ։

121. (180) ԿԱՔԸՎՆԵՐ, ԿԱՔԸՎՆԵՐ

Կաքըվներ, կաքըվներ,
Թելեք երթանք բոլոր խաչին, կաքըվներ, կաքըվներ,
Թելեք երթանք բոլոր խաչին, կաքըվներ, կաքըվներ,
Վեր-վար թըռնենք վըր կանաչին,
Վեր-վար թըռնենք վըր կանաչին,
Ոտներ մըրսի փաթըթենք լաչին,
Ձի խավըմ կեր, վիզն էլ չեկ էր,
Ճուտեր հաև տասնըմեկ էր,
Ագո Մայրան ի՞նչ դարրին էր,
Տարին մի ձեռք շուղ կըշիներ,
Էն էլ սանմոր թաթի գին էր,
Ելեք տեսեք, ո՞ր կաքավ ջոջ,
Բըռնենք տանենք, մեր աներոջ։

122. (9) ԲԱՄԲԱԿԸ ԲԱՐԻՆ

Բամբակը բարին, բամբակը բարին,
Երևանն յուր բազարով, ղուրբան իմ յարին,
Բամբակը բարին, բամբակը բարին,
Քաղաքը յուր բազարով, ղուրբան իմ յարին։

Նախրչին իր նախիրով...
Ղուռուխչին իր հանդերով...
Իլխինչին իր իլխինով...
Կանցելարը իր նախագով...

123. (26) ԱՂՋԻԿ, ԱՆՈՒՆԴ Ի՞ՆՉ ԷՐ

Աղջիկ անունդ ի՞նչ էր, Մարան
Աղջիկ անունդ ի՞նչ էր, Մարան,
Հոգիս հոգուդ մեջը դըրան,
Հոգիս հոգուդ մեջը դըրան։
Աղջի՛կ ըռունդ, ո՞ւմ տընեն ես,
Մեղր ու շաքարի խանեն ես։

124. (52) ԾԻՐԱՆ ԵՄ ԾԱՌԻ ԾԵՐԻՆ

(Օ՜յ, օ՜յ, Մելիք ջան)

Ծիրան եմ ծառի ծերին,
Օ՜յ, օ՜յ, օ՜յ, օ՜յ, օ՜յ, օ՜յ, Մելիք ջան.
Կերերամ մեջ տերևին,
Օ՜յ, օ՜յ, օ՜յ, օ՜յ, օ՜յ, օ՜յ, Մելիք ջան։

125. (56) ՎԱ՜Յ ՆՈՒԲԱՐ, ՆՈՒԲԱՐ

Նուբար կայնե տանը քուշին,
Վա՜յ Նուբար, Նուբար, ջա՜ն թաղա Նուբար,
Վա՜յ լելե, լելելե, լելելե Նուբար,
Վա՜յ լելե, լելելե, լելելե Նուբար։

Գեղին ոսկին սիփտակ դոշին,
Աղջի գըլֆերով. ջա՜ն չեկ ծամերով,
Աշխարհ թափեր մեր թամաշին։
Նուբար ՚նըստե դուռըն լվացք,

Սախեն կտրավ, ջուրը գընաց.
Վա՜յ լելե, լելելե, լելելե Նուբար,
Վա՜յ լելե, լելելե, լելելե, Նուբար։

126. (58) ՋԱՂՋԻ ԴՌՆՈՎ

(Լոբ լո, դալիլո)

Ջաղջի դըռնով անցա ես,
Դալի լոբ լո, դալիլո,
Կոտ մի կորեկ գողցա ես,
Լո, դալի լոբ, դալիլո։
Ջաղջի թունդիրը մուխ ա,
Իմ տեսած աղջիկ թուխ ա,
Ծամեր գարոսից պուխ ա։

127. (61) ՅԱ՜Ր, ԱՐԵՎԻԴ ՄԵՌՆԵՄ

Ելա գացի կալ սեյրան,
Յա՜ր, արևիդ մեռնեմ.
Ես մաղ կենեմ, դու էրան,
Ջա՜ն, բարևըդ կառնեմ,
Իմ յարն ա մարալ-ջեյրան։

Համբարձման վիճակ հանենք,
Մեկ լավ կերուխում անենք,
Աշնան քաղցըր օրերը,
Բեզ ինտիշամով տանենք։

Բոյըդ չինարի ծառ ա,
Ախպերըդ տասը դառ ա,
Քըրքըրված մորըդ ձեռքին,
Ա՜խ, ես սարսարի դառա։

Բոստան եմ դըրե ձորում,
Ցորեն ա, լիքն ա հորում,
Հազար ու մի սուր խանչալ,
Ա՜խ, ցըցված կա իմ փորում։
Կալատակը մաղել եմ,
Իշխան ձուկը աղել եմ,
Հազար ու մի դարդ ու ցավ,
Սըրտիս միջին թաղել եմ։

128. (71) ՅԱ՞Ր ԱՐԵՎՈՒԴ ՄԵՌՆԵՄ

Խաս բախչի պատեր աղ ա,
Յա՞ր, արևուդ մեռնեմ,
Յարըս մեջ վարդ կըքաղա,
Յա՞ր, բարևըդ կառնեմ։
Կողքա սարերն աղի ա,
Ծամերն չաջբաղխա,
Չաջբաղու բոլոր պուխ ա,
Յարիս ունքերը թուխ ա։
Յա՞ր, արևուդ մեռնեմ,
Յա՞ր, բարևդ կառնեմ։

129. (64) ՅԱՐ ՋԱՆ ԷԿԱՐ ԳԻՇԵՐՈՎ

Յար ջան էկար գիշերով,
Շըշերին խըփիր քարով,
Տարար էփիր բիբարով,
Նըստան կերանք ջուխտ յարով։
Երևանու գալիս եմ,
Բըրտընել եմ, լալիս եմ,
Երևանա օղեքը,
Կողքա ցոլա գյադեքը։

Էկան լըցվան մըկկտան,
Ասին լավ-լավ ղայդեքը։
Դարընոցը մանտըր կըռան,
Ջուխտ կաքավ թևիս թռան։

130. (72) ՏՈ ՅԱՄԱ՜Ն

Լինեմը լինեմը լինարև, հո յամա՜ն,
Յար ջան, բոյըդ չինար է, տո յամա՜ն,
Բալկոն կայնողին մեռնեմ, հո յամա՜ն,
Յայլուղ գցողին առնեմ, տո յամա՜ն,
Լինեմը լինեմը լինարև, հո յամա՜ն,
Յար ջան, բոյըդ չինար է, տո յամա՜ն։

131. (80) ՏՈՒՅ, ՏՈՒՅ, ԼԱՉԻՆ ՋԱՆ

Տույ, տույ, Լաչին ջան,
Գեղի բոլոր մանտըր փուշ,
Տույ, տույ, Լաչին ջան,
Գեղի միջի յարն անուշ։
Սարեն ես գամ, ձորեն դու,
Սերն ես ուտեմ, մածուն դու,
Տուն ես քնեմ, տանիս դու,
Խարս ես ըլլեմ, կեսուր դու։
Փաթավլիս թելեր նըխշուն,
Ձեմ նըշանվի չուր աշուն։

132. (89) ԱՂՋԻ ՄԱՐԱԼ, Ո՞ՒՄ ՏՆԵՆ ԵՍ

Շուշան ելե կերթա կավի,
Մանտըր կոշիկ ոտներ ցավի,
Գյուղացիքն ա կայնած ղավի,
Աղջի մարալ, ո՞ւմ տընեն ես,
Խելքըս տարար, ո՞ւմ տընեն ես։

Գյուղի վերև քառասուն կալաս,
Քառասուն կարսի գինին է խաս,
Ոսկե գյուղում, արծաթից թաս։
Մեր տուն, ձեր տուն, իրար գիմաց,
Ինչու չարիր ինձի իմաց,
Ես էլ կիգի կամաց-կամաց։

133. (90) ԽՆԱՄ ՊՈՒԼՈՒՋ

Լուսնակը տըսնըխընկ է,
Լուսնակը տըսնըխընկ է,
Խընամ Պուլուղ փոր տընկե
Խընամ Պուլուղ փոր տընկի։
Դաշտոյի ձոր ալաշ-քուլաշ,
Իջին, Պուլուղ խաստան գյուլաշ։

Պուլուղին դրեցին իշուն,
Պուլուղի փոր բոլոր նըխշուն,
Պուլուղ շիքեց պուլիկըմ եղ,
Էնի քըսեց Իջինի բեղ։

134. (98) ՄԻ ՆԵՂԱՑԻ ԻՆՁԱՆԻՑ

Սերն էս ա, սավդեն էս ա,
Ջան մայրիկ ջան, մի նեղացի ինձանից, ինձանից։
Ջահել եմ, ղայդեն էս ա,
Այսօրվանից բաժանվում եմ քեզանից, քեզանից։
Շախով խաղցեք էս պարը,
Թող գա խաղա իմ յարը,
Խաղ կասեմ խանա-խանա,
Զես կարա բերանըդ բանա։
Աղչի արի մի՛ գնա,
Դունեն մեկի չի մընա։

135. (112) ԽՆՁՈՐ ՔՑԻ

Աղջի նըստի կար արա,
Խընձոր քըցի անցավ ջըրի էն անդեն։
Ընձի քեզի յար արա,
Մեր մայլի ծաղիկը տարավ շան գյադին.
Գընացի բաղը մըտա,
Ման եկա յարըս գըտա։

Բոբիկ մի քելե փուշ է,
Սըրտով սիրածն անուշ է։
Աղջիկ ես, տանը նըստած,
Արծաթ ես, ոսկի ջըրած։
Կաքավ եմ քարամիջին,
Կըցոլամ ձորամիջին։
Ելա խոտնոց, խոտ թափի
Քեզ մի խընձորով խաբի.
Լավ աղջիկ ես, մի՛ խաբվի,
Մի խընձորով մի՛ պագվի։
Լամփի շուշեն կըճընգա,
Գըլորա ծոցըն ընկա։

136. (128) ԼՈՒՍՆԻԿԻ ԼՈՒՍԸ ՏԵՍԱ

Լուսնիկի լուսը տեսա,
Իմ յարը դուսը տեսա,
Ելեր էր կերթար մեջեն,
Կացինը ուսը տեսա։

137. (122) ԱՄՊԵՐՆ ԵԼԱՆ ԿԱՄԱՑ-ԿԱՄԱՑ

Ամպերն ելան կամաց-կամաց, Մասիս սարիցը,
Նամակ եմ ըստացել օտար յարիցը։
Ես ու յարըս ջահել ենք,
Ամպերն ելան...
Պայմաններըս պահել ենք,
Յայլի ղըմները նեղ էր,
Ամպերն ելան...
Աղջիկ փախցընելու տեղ էր,
Նամակ եմ ստացել օտար յարիցը։

138. (130) ԳՅՈՒԼԻ, ԳՅՈՒԼԻ, ԳՅՈՒԼԻ ՋԱՆ

Գյուլի, Գյուլի, Գյուլի ջան,
Բաղչա Գյուլի, Գյուլի ջան։
Էրևան դյուքան-դյուքան,
Գյուլի, Գյուլի, Գյուլի ջան,
Բաղչա Գյուլի, Գյուլի ջան։
Ձերմակ շուշեն ըստաքան,
Ես սիրել եմ, ես կառնեմ,
Փուշմաններըս տըրաքան։

139. (141) Տ Ը Ր Ի Ն Ո

Տըրինո։ Չինչն տունն է,
« *Ասեք դուս դա.*
« *Քինչըմ հաց տա,*
« *Թալեմ չանթես,*
« *Ընկնեմ ճամփես,*
« *Ասեն ինչ է,*
« *Ասեմ բողկ է,*
« *Քինչըմ ինձ տաս,*
« *Էրթամ խոտի,*
« *Վախնամ հոտի։*

140. (156) ԿԱՐՏՈԼ ԿԻՏԱՄ, ՏՈ՛ ՉԱՌՆԻ

Մեր կարտոլի քոլը,
Ձեր կարտոլի քոլը,
Կարտոլ կխտամ, տո՛ չառնի,
Էդ անջիգյար յարը։
Մեր բողկերի թուփը,
Ձեր բողկերի թուփը,
Բողկ էլ կխտամ, տո՛ չառնի,
Էդ անջիգյար յարը։
Մեր քյալամի քոլը,
Ձեր քյալամի քոլը,
Քյալամ կխտամ, տո՛ չառնի,
Էդ անջիգյար յարը։
Մեր խընձորի ծառը,
Ձեր խընձորի ծառը,
Խընձոր կխտամ, տո՛ կառնի
Էդ խելացի յարը։

141. (159) ԲԱՂԸՄ ՈՒՆԵՄ ՇԱՖԹԱԼԻ

Բաղըմ ունեմ շաֆթալի,
Ճամփեմ ունեմ էրթալի,
Ճամփի միջի չեկ աղջիկ, յա՜ր ջան,
Արեց ինձի սավդալի։

Բաղի միջի պաղ աղբյուր,
Արծաթե թաս, ոսկե ջուր,
Մեկն կուզեմ, էրկուս տուր,
Դաստաստանին ջուղար տուր։

Ոչխարն արել եմ բակը,
Դեմ տըվել սելի ակը,
Սիրած սիրածին չեն տա,
Զվայլե գըլխի թագը։

Աղջի, ինչի՞ ես լալիս,
Կամաց-կամաց ես գալիս,
Ի՞նչ ասեմ քյաֆուր մորըդ,
Քեզի ինձի չի տալիս։

Սարի գլխի եղունը
Թողեք գընամ մեր տունը,
Յարիս աչքը ճամփումը,
Չի տանում անուշ քունը։

142. (154) ՉԵՄ ԱՌՆԻ, ՆԱՆԱ ՋԱՆ

— Ախչի արե, քեզ տամ դուքընչի մարդի։
— Չեմ առնի, նանա ջան, չեմ առնի.
Ծախել կըտա, բերել կըտա, ուտել կըտա,
Չեմ առնի, նանա ջան, չեմ առնի։
— Ախչի արե, քեզ տամ ըռընչպար մարդի։
— Ծեծել կըտա, բերել կըտա,
Կրել կըտա, խանել կըտա, մաղել կըտա,
Չեմ առնի, նանա ջան, չեմ առնի։
— Ախչի արե, քեզ տամ նախըրչի մարդի։
— Ժողվել պիտի, բերել պիտի,
Ցըվրել պիտի…
— Ախչի արե, քեզ տամ չոբան մարդի։
— Գըզել պիտի, մանել պիտի,
Գործել պիտի…
— Ախչի արե, քեզ տամ լոթիբաշու։
— Դաֆ կըզանե, ես կըխաղամ,
Առնում եմ, նանա ջան, առնում եմ։

143. (55) ՉԷ՛ ԴԱԴՈ, ՉԷ՛ ԲԱԲՈ

— Արե քե տամ նախրորդին,
— Ես չեմ առնի նախրորդին.
Չէ՛ դադո, չէ՛ բաբո, չեմ առնի։
— Քե կուտամ հորթարածին,
— Չեմ առնի հորթարածին,
Կերթա հորթեր մոռնա գիս,
Չէ՛ հայրիկ, չէ՛ մայրիկ, չեմ առնի։
— Քե կուտամ թուջարբաշուն,
— Չեմ առնի թուջարբաշուն,
Ինի չունի հանգիստ քուն,
Գիշեր-ցերեկ չի գա տուն,
Չէ՛ հայրիկ, չէ՛ մայրիկ, չեմ առնի։
— Քե կուտամ ժուլիկ մարդու,
— Չեմ առնի ժուլիկ մարդու,
Խարամ փող ի, չըլնի տուն,
Զը չի կըպնե աչքիս քուն,
Չէ՛ հայրիկ, չէ՛ մայրիկ, չեմ առնի։
— Քե կուտամ քյավառցուն,
— Չեմ առնի ես քյավառցուն,
Շատ սեր ունի խըտ իչուն,

Էրկու կողով իր իշուն,
Մախթով կըրըգե իշուն։
— Քե կուտամ ջուլհակըրաշուն,
— Խմ՛ հայրիկ, խմ՛ մայրիկ, սըտովս ա,
Ես կանեմ ջուլհակըրաշուն,
Մանա ճախրակ, կանչա գիս,
Մըքուք թալա, պապա գիս,
Ջեռ թալած էր վըր վըզիս,
Գիշեր-ցերեկ խըտ կողքիս,
Հմ՛ դազը, հմ՛ բարը, սըրտովս ի։
Ես սիրել եմ, ես կանեմ,
Որ ջուլհակին ես չանեմ,
Բեմուրազ ես կմեռնեմ,
Խմ՛ մայրիկ, խմ՛ հայրիկ, սըտովս ի։

144. (59) ՀՈԼԸ, ՀՈԼԸ

Ջուր կիգա բանցըր սարեն,
Հոլը, հոլը, հոլը, հոլը, քեզի զարկ.
Կըթափի մարմար քարեն,
Աղջիկ ալըգեն քարոր զարկ։
Ով որ դառնա խըրատեն,
Վըրեն թալա փիս յարեն։
Սարի ծաղիկ ծերեծեր,
Եղբայր գընանք մեկեռեղ,
Որ հարամին վըրա տա,
Գըլուխս իտամ գլխի տեղ։

145. (86) ԱՄԱՆ ՏԵՐՏԵՐ, ԱՄՈԹ Ա

Աման տերտեր, ամոթ ա,
Տերտեր փարին կարոտ ա,
Տերտեր մատներ խաղցըրեց,
Շահին կապեկ փախցըրեց։
Աման տերտեր ամոթ ա,
Տերտեր փարին կարոտ ա։
Ուտեմ տերտերի քըճիկ,
Առնեմ տերտերի աղջիկ։

146. (100) ԿԱՐՄԻՐ ՎԵՐՄԱԿՈՎ ՏՂԱ

Լամփեն թորգեք թող վառի,
Կարմիր վերմակով տըղա.
Ամենք իր սիրածն առնի,
Արի մեր տուն ու գընա։
Սարից էկա լամփեն վառ,
Կարմիր վերմակով տըղա.
Սոյը խաըցու, աղչիկն առ,
Արի մեր տուն ու գընա։
Արեք պարը բոլորենք,
Կարմիր վերմակով տըղա.
Յարիս էրես կլորենք,
Արի մեր տուն ու գընա։

147. (105) ԹԱԹՈՅԻ ԴԱՍՏԵՆ ԴԻՐՈՒՐԻ ՋՈՐ

Թաթոյի դաստեն Դըրուրի ձոր,
Լոշեր լըցրին Դուլդուլի փոր,
Պըստիկ շորգեն գոկան էր,
Թաթոյի դաստեն սոկալ էր,
Դաստարաշին Մուզոն էր,
Սև ճիճու դոշ փաշոտ էր,
Մուզոյի բերան լոշոտ էր։

148. (120) ՀՈՎ ԻՆԵ

Ծով ինե, հով ինե,
Յարըս բոլոր հով ինե։

149. (136) ՍԱՍՈՒՆԱ ՍԱՐԵՐ

Սասունա սարեր վայնա էր,
Քեռանցըս տունը թայնա էր։
Գյալեն քըոխն քաղ կաներ,
Աղջիկըն անցավ, մխ կաներ։
Կանանչ արտի միջակը,
Սարերն էլավ Զիչակը։
Կանանչ արտը հաց տալըս,
Յարըս տեսա ես դառա։

150. (155) ԼՈՒՍՆԱԿՆ ԵԼԱՎ

Լուսնակն ելավ, լուսնակն ելավ,
Վերևով վերև ամպերէն,
Վերևով վերև ամպերէն։

151. (168) ԴԻՆ ԼԵ ԼԵ, ԴԻՆ ԼԵ ԼԵ

Կըռվան երկու տեքերկին,
Դին լե լե, դին լե լե, դին լե լե ջան,
Կուզեր խերվան խըփան գին,
Դին լե լե, դին լե լե, դին լե լե ջան։

152. (41) ՀՐԱԺԵՇՏԻ ԵՐԳ

Բեր ձեռքըդ համբուրեմ մայրիկ,
Կաթըդ եմ կերե անուշիկ,
Երանի չըլինեի աղջիկ,
Մընաս բարով, ես գընում եմ։
Քունըդ կըտրեցիր ինձ համար,
Օրոր ասելով անդադար,
Ով իմ ճշմարիտ բարերար,
Մընաս բարով, ես գընում եմ։

153. (83) ՎՈՒՅ, ՎՈՒՅ ԱՆԱ

Եկան ինձի կընըշանեն,
Ինձ իմ սիրածից կըհանեն,
Կըշըղթայեն, գերի կըտանեն,
Վույ, վույ, անա, վույ, վույ, անա,
Բժիշկ բերեք, ցավս իմանա։
Աղջիկ նըստե դուռն կլլա,
Տըղեն ականջներուց խուլ ա
Մընի պարնան բալաք թուլա,
Վույ, վույ, անա, վույ, վույ, անա...
Անան ըսեց՝ աղջիկ չառի,
Գամոն ըսեց՝ զարկենք մեռնի,
Ումն որ կըտանք, նըրան տուի,
Վույ, վույ, անա, վույ, վույ, անա...
Գամոյ դըռներն ի սալերով,
Խաթուն փախավ Ջհոյ կալերով,
Խաթուն փախավ չուր ձորու գեղ,
Ձեռք քըցեցին Գամոյի բեղ,
Մաքին տարան արաղի տեղ,
Վույ, վույ, անա, վույ, վույ, անա...
Դավեքն եկան առանց փալան,
Խաթուն տարան առանց ղալան,
Վույ, վույ, անա, վույ, վույ անա...

154. (170) ԹԱԳՎՈՐԻ ԳՈՎՔԸ

Թագպար, թագպար, թագպարի թագվորին շատ արև։
Թագվոր, ինչ պիրեմ քո նըման,
Քո կանաչ արևի նըման,
Էն պալատան որ կուծաղկեր,
Էն նշենին որ կուծաղկեր,
Էն խնձորին որ կուծաղկեր,
Էն տանձին որ կուծաղկեր,
Էն նռնին որ կուծաղկեր,
Ծառ ծաղկեցավ, ճյուղ կանգնեցավ,
Ծաղիկ քու արևի նըման։
Ջուհար տարեք թագվորի խոր,
Ջուհար տարեք թագվորի մոր,
Ջուհար տարեք թագվորի եղբոր,
Ջուհար տարեք թագվորի հորեղբոր,
Որ գեր բարին, թագավորին,
Թագվոր նըստեր թագնաթոռին,
Խաչկոճն էր վիզ, թագն էր գըլխին.
Կանաչ ու կարմիր։

155. (172) ՀԱՐՆԱԶ

Հարնազ, հարնազ, հարնազ, հարնազ՛
Բարով եկավ մեր պըստիկ խարս,
Ոսկե գյուգյում, արծաթի թաս,
Բարով եկավ մեր պըստիկ խարս,
Խարսնիկ իլի, դու նազ մենի,
Ջորեն վերցի, դու թոզ մենի,
Դյու քու բախտին գյազընդ մենի,
Հարնազ, հարնազ, հարնազ, հարնազ,
Բարով եկավ մեր պըստիկ խարս։

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ

ՄԱՆԿԱՏԱՆ ՍԱՆԵՐԻՑ ԶԱՅՆԱԳՐՎԱԾ ԵՐԳԵՐ

156. (27) ԿԱՅՆԵԼ ԵՍ ՎԱՐԴԻ ՀՈՎԻՆ

Կայնել ես վարդի հովին,
Վարդի հովին, հովին,
Քամին տա կըրծքիդ մովին,
Կըրծքիդ մովին, մովին։

Երեսիդ շողին մեռնեմ,
Շողին մեռնեմ, մեռնեմ,
Աչքերիդ կապուտ ծովին,
Կապուտ ծովին, ծովին։

Իրար հետ ծաղիկ քաղենք,
Թըշնամու սիրտը դաղենք,
Մեկմեկու խոսքե չելնենք,
Աշխարհում քանի սաղ ենք։

157. (42) ՎԱ՜Յ, ՆԱ՛ՆԻ, ՎԱՌԱ

(Գյուլվերանից ելանք, հասանք մեր դուզը)

Գյուլվերանից ելանք, հասանք մեր դուզը,
Վըրներս կոխեց, Թիփին ու փուսը,
Վա՜յ, նա՛նի, վառա, վա՜յ նա՛նի վառա,
Ջուրն ընկա սառա։

158. (21) ՄԱՐԳԱՐԻ ԳՅՈՒՂԱՑԻ

Մարգարի գյուղացի,
Մարգարի գյուղացի,
Ընկա ջուրը, սամդալու գընացի։

Էսօր օրը նորել է,
Վարդիթերը կորել է։
Գուլթանը հոլ ա, հոլ ա,
Գուլթանի տակը գոլ ա։

159. (14) Ի՞ՆՉ ԿՏԱՍ ՋՈՒՐՆ ԱՆՑՈՒՄ

— Հորըս չայիր քեզ լինի,
Տըղա ջան, արի ջուրն անցուր։

— Ի՞նչ անեմ հորըդ չայիր,
Աղջի ջան, ի՞նչ կըտաս ջուրն անցում։

— Հագիս շորեր քեզ լինի,
Տըղա ջան, արի ջուրն անցուր։

— Ի՞նչ անեմ հագիդ շորեր,
Աղջի ջան, ի՞նչ կըտաս ջուրն անցում։

— Մատիս մատնիք քեզ լինի,
Տըղա ջան, արի ջուրն անցուր։

— Ի՞նչ անեմ մատիդ մատնիք,
Աղջի ջան, ի՞նչ կըտաս ջուրն անցում։

– Գըլխիս թագը քեզ լինի,
Տըղա ջան, արի ջուրն անցուր։

— Ի՞նչ անեմ գըլխիդ թագը,
Աղջի ջան, ի՞նչ կըտաս ջուրն անցում։

— Աղունյակ, հոգիս քեզ լինի,
Տըղա ջան, արի ջուրն անցուր։

— Աղունյակ, հոգիդ սըրտովս ա,
Աղջի ջան, էկա ջուրն անցում։

160. (6) Օ Ս Ա Ն Ն Ա

Օսաննա, երի, երի, Օսաննա,
Ջինար բոյըդ սիրեյի, Օսաննա։

161. (10) ԵՍ ՈՐ ԼԻՆԵՄ

— Ես որ լինեմ մի ճութ հավող,
Բաղումը բունեմ, ի՞նչ կանես։

— Ես որ լինեմ մի սուր դանակ,
Քոքիցըդ կըտրեմ, ի՞նչ կանես։

— Ես որ լինեմ մի աղունիկ,
Երկինքը թըռչեմ, ի՞նչ կանես։

— Ես որ լինեմ մի չար բազե,
Ետնուցըդ վազ տամ, ի՞նչ կանես։

— Որ տասանից հըրաման գա,
Հիվանդանամ՝ ի՞նչ կանես։

— Ես որ լինեմ հեքիմ, բըժիշկ,
Քեզ բըժըշկեմ, ի՞նչ կանես։

— Որ տասանից հըրաման գա,
Ես որ մեռնեմ, ի՞նչ կանես։

— Ես որ լինեմ, մի գազ պատան,
Քեզ փաթաթվեմ, ի՞նչ կանես։

162. (40) ՇՈՒՏ-ՇՈՒՏ ՔԵԼԱ

Ո՞ւր գընացիր, ո՞ւր եկար,
Շուտ-շուտ քելա, մի հետ,
Դու իմ սըրտին դուր եկար,
Հրացանն ուսիդ կերևա։

163. (3) ԿՔԵԼԱ, ԿՑՈԼԱ

Ո՞ւր գնացիր, ո՞ւր էկար,
Դե՜, յարո, յա՜ր,
Դե՜, յարո, յա՜ր, հոյ ամման,
Դու իմ սըրտին դուր էկար,
Հերն անուշ է, մերն անուշ է,
Կըքելա, կըցոլա ֆիդան յար։

Սարեն իջավ ջուխտ աղջիկ,
Դե՜, յարո, յա՜ր,
Դե՛, յարո, յա՜ր, հոյ ամման,
Ջըլտի գոգնոցն է լատիկ,
Հերն անուշ է, մերն անուշ է,
Կըքելա, կըցոլա ֆիդան յար։

164. (12) ՅԱ՜Ր ԳՅՈՒԼԱ

Յա՜ր գյուլա, ինչ եմ անում նամակ,
Մալադոյ եմ, կերթամ սարի քամակ,
Մալադոյ եմ, կերթամ սարի քամակ։

Յա՜ր գյուլա, ըխտերը պըտըտեմ,
Կանֆետ ուտեմ, թըղթերը շըպըրտեմ։

Յա՜ր գյուլա, բազարի կոճակը,
Շընորհավոր մեր աըղի պինջակը։

Յա՜ր գյուլա, մենք էրկու քուրիկ ենք,
Պարի միջին բոլորից ժուլիկ ենք։

165. (16) ԱՎԳԻ ՇՈՒՇԱՆ

Ծառիս տակին էլ ունեմ,
Դետ մի յար, յարմանի,
Աջամ գյուլում սավգի գյուլ,
Ավգի Շուշան էրմանի։

Ջենըս կըտրավ, ձեն բերեք,
Խաղ ասող աղջիկ բերեք։
Խաղ ասողը փախել ա,
Մարմեն կողքից կախել ա։

Ըռանգ-ըռանգ թել ունեմ,
Դետ մի յար, յարմանի,
Աջամ գյուլյում սավգի գյուլ,
Ավգի Շուշան էրմանի։

Էզ էլ խաղ չէր, որ ասիր,
Հողերըս գըլխիդ քաշիր։
Դու էլ գիտես, աղջիկ ես,
Պարի միջի ժուլիկ ես։

166. (32) ԻՄ ՍԻՐԱԾԸ ՍԱԼԴԱԹ ԷՐ

Ես սիրեցի, իմ սիրածը սալդաթ էր,
Հավայ լուսի, վագզալի դուռ կանգնած էր,
Ես սիրեցի, իմ սիրածը սալդաթ էր,
Հավայ լուսի, վագզալի դուռ կանգնած էր։

Կանաչ արտը հաց տարա,
Ես սիրեցի...

Եղբորս տեսա ետ դառա,
Ես սիրեցի...

167. (32) ԶՈՒԼՈ

Արևն ելավ կամար-կամար,
Զուլոն կապեց ոսկե քամար,
Ես կըմեռնեմ քեզի համար,
Ավար Զուլո, մատաղ Զուլո,
Ավար զուլ, զուլ, մատաղ Զուլո ջան։

168. (40) ՏԸՐ ՆԻՆԱՅ, ՆԻՆԱՅ

— Կընի՜կ, մեր կովն ի՞նչ էլավ.
— Ա՜խ, մեր կով.
Նախրորդն ի էկավ, կովն ի տարավ,
Տարավ ու տարավ, նախրին ի խառնեց,
Էլ ետ չըբերեց,
Տըր նինայ, նինայ, տըր նինայ, նինայ։

— Կընի՛կ, բա մեր հավերն ի՞նչ էլան.
— Ա՜խ, մեր հավեր.
Ուրուրն ի էկավ, հավերն ի տարավ,
Տարավ ու տարավ, ձագըներ կերավ, էլ ետ չըբերավ,
Տըր նինայ, նինայ, տըր նինայ, նինայ։

— Բա մեր էրեխեն ի՞նչ էլավ.
— Ա՜խ, մեր էրեխեն.

Լացավ ու լացավ, մըղկըտացավ, ինքնիրեն փիծավ,
Տերտերն ի էկավ, վերցուց պայավ,
Տեղ փորուցին, ճիժ խորուցին,
Տըր նինայ, նինայ, տըր նինայ, նինայ։

— Բա դո՞ւ.
— Ա՜խ, ես.
Լացի ու լացի, մըղկըտացի,
Թև քըշտուցի, ղոմփ խաղցուցի, սիրտ սեցուցի,
Տըր նինայ, նինայ, տըր նինայ, նինայ։

— Փետե, փետե մարդիկը,
Երկաթե կընանիքը,
Զիգի, զիգի հարսները,
Վարդի թուփ աղջըկները,
Մի ճըգլարի գեյրեքը,
Հայեր են աղջըկները։

Հեյ, հեյ ակաս է,
Կովիս մեկը պակաս է։
Ամրոցին ջըրգա չըկա,
Պետոյին արդա չըկա։

169. (46) ՈՐԹԻ ԵՐԳԸ

Գընալով գընացի, գյուղից հեռացա,
Յաման, յար ջան, գյուղից հեռացա.
Տասերկու տարեկան դարդի տիրացա,
Յաման, յար ջան, դարդի տիրացա։

Վաղոն մի՛ ժաժա, յաման,
Յար ջան, յարեքըս էր թաժա։

Երանի մեռնեի ծընվածըս օրը,
Չգնայի հագնեի այս որբի շորը։

Կանչի կըռունկ կանչի, քանի գարուն է,
Մեր որբերի սիրտը գունդ-գունդ արուն է։

170. (25) ՋԱՂՈ, ՋԱՂՈ ՋԱ՛Ն, ՋԱ՛Ր ՄԵՅԴԱՆ

Ո՞ւր գնացիր, ո՞ւր էկար,
Ջա՛լո, Ջա՛լո ջա՛ն, ջա՛ր մեյդան.
Դու իմ սըրտին դուր էկար,
Վարսո յարո ջան, մեկուճա՛ր յարո ջան,
Սալդաթ ախպեր ջան, սալդաթ է։

Էլի էկավ օրերը,
Կըտրեմ կարեմ շորերը։

Կանչում եմ, արի՛, արի՛,
Չես գալիս, մուխըդ մարի։

171. (14) ԱՍՄԱՐ ԱՄՄԱՆ

Ասմար ամման, ամման, ամման,
Ասմար ու գալալե յամման։

Ասմար քու շուշեն կըղընգա,
Ասմար ու գալալե յամման,
Չես կըրնա խաղա, մի՛ ընդընգա,
Ասմար ու գալալե յամման։

Բարակ ես, բարդի ծառ ես,
Բելերուց մարդ կվառես։

172. (13) ԼՈՅԼԸՄ ԼՈՅ

Գոմեշն ելավ գոշի ափ,
Լոյլըմ լոյ, լոյլըմ լոյ։

Եզրայըս մընաց թիաթափ,
Լոյլըմ լոյ, լոյլըմ լոյ։

Արի, իջնենք Արագը,
Ջերըդ լըցնեմ չորագը։

Արագը լիլ է դառե,
Լեզուս բիլբուլ է դառե։

Սարը կըրակ եմ արե,
Եզրորս ջուղար եմ արե։

Ղարսա դուրանը խաղցա,
Ղարիբ եմ, նըստա լացա։

Աղջի ի՞նչ է իլակըդ,
Օղով կոճկեմ բիլակըդ։

173. (19) ԽՆԱՄԻ ՋԱ՛Ն

Խընամի ջա՛ն, եկել եմ, եկել,
Խընամի ջա՛ն, ինչո՞ւ ես եկել,
Խընամի ջա՛ն, աղջիկը կուզեմ,
Խընամի ջա՛ն, աղջիկը չունեմ։
Խընամի ջա՛ն, տեսել եմ, տեսել,
Խընամի ջա՛ն, որտե՞ղ ես տեսել,
Խընամի ջա՛ն, խընկի բաղում,
Խընամի ջա՛ն, ի՞նչ էր անում,
Խընամի ջա՛ն, խունկ էր քաղում։
Խընամի ջա՛ն, աչերն ինչպե՞ս,
Խընամի ջա՛ն, սև-սև գիլազ,
Խընամի ջա՛ն, թշերն ինչպե՞ս,
Խընամի ջա՛ն, կարմիր խընձոր,
Խընամի ջա՛ն, բոյը ինչպե՞ս,
Խընամի ջա՛ն, փոքրիկ կաքավ։

174. (26) ԽԱԼԱԼԵ, ՋԱՆ ԼԵ ԼԵ

Մոկաց չուկեն լեն ու էրգեն,
Խալալե, ջան լե լե,
Մոկաց չուկեն լեն ու էրգեն,
Խալալե, ջան լե լե։

Էրկու ջահել կերթեն կուզեն,
Մեկն էր բեղով, մեկն էր անբեղ,
Էն բեղովն էր իմ ախպոր տեղ,
Էն մեկ անբեղ տամ գըրողին։

175. (31) ՇԻՐԻՆ ԹԵԼԼՈ, ՎԱ՜Յ ԹԵԼԼՈ ՋԱՆ

Թըռի՛, թըռի՛ գարուն է,
Շիրին Թելլո, վա՛յ Թելլո ջան, Թելլո.
Սիրտըս գունդ-գունդ արուն է,
Շիրին Թելլո, վա՛յ Թելլո ջան, Թելլո։

Խավախոսս ա նըս դուրս,
Դըմբուզ Մարիամ հանինք դուրս։

Ունել ես ամոլի բարա,
Զես արժի կողեկ փարա։

Պուձուր աղջիկ լեն բերան,
Տարողի տունը վերան։

Խաղ գիտես, խաղըդ ասա,
Խաղիս գըլուխ մի ասա։

Խաղ կասեմ խանա, խանա,
Զես կարող բերան բանա։

176. (39) ԳՅՈՒԼԵՐՍ ԹԱԶԱՑԵԼ Ա

Կանաչ արտը հաց տարա,
Յա՛ր ամման, գյուլ ամման,
Գյուլերըս թազացել ա,
Յարոյիս տարել են,
Դարդերըս շատացել ա։

177. (23) ՍՈՆԵՆ ԿՈՂՐԵՑԻՆ

Ո՞ւր գնացիր, ո՞ւր էկար,
Սոնեն կողրեցին, մարալ,
Սոնեն կողրեցին, մարալ,
Լըցին վազոն ու տարան։

Դու իմ սըրտին դուր էկար,
Սոնեն կողրեցին, մարալ,
Սոնեն կողրեցին, մարալ,
Լըցին վազոն ու տարան

Դուռը բացեք, ես մարդ եմ,
Ըստոլի վըրի վարդ եմ։
Դուռը բացի, ճըռվըռաց,
Քոփակ տըղեն գըռմըռաց։

Գութանը խերկի մեջ ա,
Ջեռներըս ներկի մեջ ա։
Ես քեզի բըռնեմ թազի,
Ղըրկեմ սարը աղվեսի։

Արի իջնենք Արազը,
Ջերըդ լըցնենք չարազը։

178. (26) ԺՈՒԼԻԿ ՏԵՐՏԵՐԻ ԳՅԱԴԵՆ

Անձրեն էկավ շաղալեն,
Ժուլիկ տերտերի գյաղեն,
Ոսկի տերև դողալեն,
Ժուլիկ տերտերի գյաղեն։

Եղսոն նըստած դուռը լըվացք,
Սախեն կոտրավ, ջուր գընաց,
Շեկ տըղի չորեր մընաց։

Լըվամ, լըվամ չիտըրկվի,
Վարդաջըրով կիտըրկվի։

Կըտամ քամուն չի չորնա,
Փըռեմ արև կըչորնա։

179. (5) ՀԱ՜Յ ԱՌՆՈՒՄ ԵՄ, ԱՌՆՈՒՄ ԵՄ

Հա՜յ առնում եմ, առնում եմ,
Թևեր առած թըռչում եմ.
Ելա խոտնոց խոտ թափի,
Հա՜յ առնում եմ, առնում եմ,

Հա՜յ առնում եմ, առնում եմ,
Թևեր առած թըռչում եմ.
Հա՜յ առնում եմ, առնում եմ,
Թևեր առած թըռչում եմ,

Քեզ մի խընձորով խաբի։
Մեր մանկատուն դրախտ ա,
Մայիսյան կարմիր վարդ ա։

180. (7) ՀՈ՛ ՄԱՅՐԱՄԵ, ՄԱՅՐԱՄԵ

Առվի ափն էր բացվել լըճին,
Հա՛ Մայրամե, Մայրամե,
Ես չեմ տանի պապմա յաճին,
Հա՛ Մայրամե, Մայրամե։

Մեր տուն, ձեր տուն իրար դիմաց
Աչքով կանեմ, ընքով իմաց։
Արի սիրուն, գընա սիրուն,
Հազար երանեկ քո տիրուն։

Մեր տուն, ձեր տուն իրար մոտիկ,
Գընանք քաղենք հորթիկա խոտիկ,
Բերենք դընենք իրար մոտիկ,
Տեսնենք ո՞ւմ յարն է խորոտիկ,
Իմ յար, քանց քու յար խորոտիկ։

181. (18) ԼԵ, ԼԵ ԳԴԵ ՄԱՅՐԱՄԵ

Արագը բուգ է բռնել,
Լե գըդե, լե՛, լե՛,
Լե գըդե, լե՛, լե՛,
Լե, լե գըդե Մայրամե։

Քյանքյուլըդ թող ա բռնել,

Երկար արտը հաց տարա,
Յարըս տեսա, ետ դառա։
Եյա խոտնոց խոտ թափի,
Մի խընձորով քեզ խաբի։

182. (12) Ո՞ՒՐ ԳՆԱՑԻՐ, Ո՞ՒՐ ԵԿԱՐ
(Բուկամալա բավեմն)

Ո՞ւր գընացիր. ո՞ւր եկար, գըլե,
Բուկամալա բավեմըն.
Դու իմ սրտին զուր եկար, գըլե,
Թաշկինակը համամ է։

Գընա, գընա, գալիս եմ,
Քըրտընած եմ, գալիս եմ.
Աղջի, դու ո՞ւր ես, ո՞ւր ես,
Ես ծարավ եմ, դու ջուր ես։

183. (18) ՄԱՔՐՈՒՀԻ ՋԱՆ, ՄԱՔՐՈՒՀԻ

Քարվանն էկավ զընգզընգալեն,
Մաքրուհի ջան, Մաքրուհի,
Քարվանն էկավ զընգզընգալեն,
Մաքրուհի ջան, Մաքրուհի։

Քարվանի մեջ ջորի մը կար,
Ջորու քամակ սընդուկըմ կար,
Սընդըկի մեջ հայլի մը կար,
Հայլիի մեջ աղջիկ մը կար։

— Աղջի, աղջի, անունդ ի՞նչ ա,
— Խորած, թաղած, դավիդ ի՞նչ ա։

Իմ հեր լըսի, քեզ կըսպանի,
Կաշին կանա դուֆ, նաղարա,
Արուն կանի գինի, խըմի,
Ոսկոռ կանի թըվանք, քըցի.

184. (45) ԵՍ ՄԻ ԾԱՌ ԵՄ ԾԻՐԱՆԻ

Ես մի ծառ եմ ծիրանի,
Հին արմատըս անվանի,
Պտուղներըս քաղցրահամ,
Բոլոր մարդկանց պիտանի։

Չորս հարյուր տարվա ծառ եմ,
Արմատըս պինդ, կայտառ եմ,
Թեպետ ուժըս պակաս է, ավա՜ղ,
Բայց անունով պայծառ եմ։

Հին ծառ եմ արևելյան,
Չունեմ որոշ այգեպան,
Դու ընկել ես երկիրներ, ավա՜ղ,
Ընկած ես բաժան-բաժան։

185. (5) ԿՈՐԱԾ ԷՇԸ

Ջան Թալլաչի, թե ինչ տեսար,
Զար ու գաժան իշխանն տասավ,
Տանձի ծառին սրխատր բուսավ,
Գողցան տարան, կերան էշըս,
Վա՜յ գողցան, տարան զառ իմ էշըս։

Ականջներ Թարաղ կեղներ,
Փոսար գըլխին փափախ կեղներ,
Էշիս գագաթը պաղ կեղներ,
Նշան էս է, գըտեք էշըս,
Վա՜յ, նըշան էս է, գըտեք էշըս։

Էս մեր քյոխվան հիմար բան է,
Բըրդած մածնի փանկեան է,
Գագափարն իշին նըման է,
Պոչը ձեգի, տըվեք էշըս,
Վա՜յ, պոչը ձեգի, տըվեք էշըս։

Գասալար տաց, մի՛ վախենա,
Էշիդ գողը իմ եզանն ա,
Հենց իմացիր, թե մեր տանն ա,
Ինձնեն ուզե կորած էշըդ,
Վա՜յ, ինձնեն ուզե կորած էշըդ։

Էս որ լըսա եղա ուրախ,
Մեջտեղ բերի տիկըմ արաղ,
Պատրաստել էի օրն ի վաղ,
Ասի, խըմեք, գըտեք էշըս,
Վա՜յ, ասի խըմեք, գըտեք էշըս։

Շատ որ խըմանք խանխխուըր,
Ընկրռեցինք խոսել ծուռը.
Գյուղ ու քաղաք հասավ լուրը,
Ասինք տըկի մեջն է էշը,
Վա՜յ, ասինք տըկի մեջն է էշը։

Ֆիլիկի պես մազեր ուներ,
Օրխորդի պես նաղեր ուներ,
Սաքո քյոխվի պես կըքեղեր,
Նշան էս է, գըտեք էշըս,
Վա՜յ, նըշան էս է, գըտեք էշըս։

Էս որ լըսա սիրտըս էլավ,
Դարդ ու ցավըս սելավ էլավ,
Տիկ մը արաղ որ վերջացավ,
Գանգատ կանեմ, գըտեք էշըս,
Վա՜յ, գանգատ կանեմ, գըտեք էշըս։

186. (11) ՈՒ՞Ր ԳՆԱՑԻՐ,

Ու՞ր գնացիր, ո՞ւր էկար,
Բու մարալ, բու ջեյրան,
Բու սալրի, բու բաղընդա։

Դու իմ սըրտին դուր էկար,
Բու խաղ բու գիլը, բու գիլը, բու գիլը,
Բու քեթմիշգա դաղընդա։

Էյա սարը սար տեսա,
Ճերմակ չուլըով յար տեսա։

Ջըրի միջի զամիշը,
Հերիք բըռնես իմ փեշը։

187. (7) ՋԱՆԸՄ ԼՈԹԻ ՅԱՐ ՋԱՆ

Օշականը յավ տեղ է,
Երկու քույրիկները,
Լորախաշըվի տեղ է,
Ջանըմ լոթի յար ջան։

Շատ մի ուռի, փըշատ ես,
Որբանոցի մըշակ ես։

Ջերիս բերանը պուտ—պուտ,
Ես քեզի կանչեմ կուտ—կուտ։

Սարից իջավ եղնիկը,
Կեցցե՛ մեր Սաթենիկը։

188. (11) Յ Ա՜ Ր Ս Ո Ն Ա

Գը՛նա, գը՛նա, գալիս եմ,
Յա՜ր Սոնա, յա՜ր Սոնա.
Քըրանել եմ լալիս եմ,
Երբ պիտի լուսանա։

Ուր որ գընաս հետիդ եմ,
Ալ խընձոր եմ գոտիդ եմ։

189. (41) ՋՄՓԻԿ, ՋՄՓԻԿ ՋԱՐԻՆ Ա

Ջըմփիկ, գըմփիկ գարին ա,
Իկդա շուշան դարին ա,
Մամեն գընաց աղցանի,
Աղցան չելավ խոտ էլավ,
Խոտի տակին ծիտ էլավ,

Ծիտը թըռավ գերանին,
Մեռնեմ ավետարանին,
Ավետարան ուխտ արին,
Մազերը ջուխտ-ջուխտ արին։

Գընացի սարը սընձի,
Ոտքըս դիպավ մի քընձի,
Հարսներին քաղել տըվի,
Տըղերքին դասել տըվի։

Վարդ մանուշակ հարսները,
Տանձ ու խընձոր տղերքը։

190. (2) ԵՐԳԻՍ ԳԼՈՒԽ ՄԻ ԱՍԱ

(Դոգ դոգուրմա)

Դոդ դոգուրմա, դոդուրմա,
Ժընջիլ կըտամ չավուրմա,
Երգիս գըլուխ մի ասա,
Հոգերըս գըլխիդ քաշա,
Դոդ դոգուրմա, դոգուրմա,
Ժընջիլ կըտամ չավուրմա։

Սարից իջավ եղնիկը,
Կեցցե՛ մեր Սաթենիկը,
Դոգ դոգուրմա, դոգուրմա,
Ժընջիլ կըտամ չավուրմա։

Սարից իջավ ջուխտ աղջիկ,
Ջըխտի գողնույն է լատիկ։

Ջերըս լիքը աճառ է,
Էտ էլ խոսքի պատճառ է։

Կոտրավ Աբագի բուզը,
Թափ տամ քյանքյուլիս թոզը։

191. (20) ԹՈՒԹՈՒՆԻ ԴԱՍՏԱ

Ո՞ւր գնացիր, ծո՛ւր էկար,
Թութունի դաստա, մի դաստա,
Թութունի դաստա, մի դաստա,
Է՛յ չան տղա, մի՛ խոսք տա։

Դուն իմ սըրտին դուր էկար,
Թութունի դաստա, մի դաստա,
Թութունի դաստա, մի դաստա,
Է՛յ չան տղա, մի՛ խոսք տա։

Հավքը վերևով անցավ,
Սինին խընձորով լըցվավ։

Ջըրի միջի գոմեշը,
Հերիք բռնես իմ փեշը։

Սարը կըրակ եմ արել,
Ախպորըս ջուղար եմ արել։

Ինչի՞ կերար մեր հավը,
Կողքիդ բըռնե սև ցավը։

Ինչի՞ կերար մեր ճաշը,
Քեզի դընեմ սև նաշը։

192. (15) ԽԱՆԻՄՈ, ՋԱՆԻՄՈ

Քեզի մեռնեմ պըստիկ լուսնակ,
Խանիմո, ջանիմո,
Ուստից կուգաս մենակ-մենակ,
Խանիմո, ջանիմո։

Ծառ եմ տընկել քեզ օրինակ,
Խաղող բըռնենք սև ու սիպտակ։

Տուն ենք շինե գետի բերան,
Վըրեն թալե ջուխտըմ գերան։

193. (44) ՀԵ՜Յ, ՎԱ՜Խ, ԶՈՒԼՈՒՄ Է

Իրիկվա զանգեր՝ ելան մեր գեղին,
Մայրիկ անհանգիստ են կողքիս վերքերը,
Հե՜յ, վա՜խ, զուլում է, մայրի՛կ օլում է։

194. (1) Ա՜Յ ՆՈՒԲԱՐ, ԶԱԼՈՒՄ ՆՈՒԲԱՐ

Ա՜յ Նուբար, Նուբար, Նուբար,
Ա՜յ Նուբար, զալում Նուբար։

Էսօր նորը նորել է,
Ա՜յ Նուբար, Նուբար, Նուբար,

Նորել է, բոլորել է,
Ա՜յ Նուբար, Նուբար Նուբար։

Սարի գըլուխ սուն ունեմ,
Մեջը ոսկե սուն ունեմ։

Գընա՛, արի՛, ման արի՛,
Բարձ կըգընեմ յան արի։

Գընացիր, էկար բարով,
Սիրտս զարկիր ժեռ քարով։

Ես ինչ արի, դու՛ արիր,
Կարմիր օրըս սև արիր։

Մեր բաղի դուռը բաց է,
Ոտներըս շաղով թաց է։

Խաղ կասեմ խանա, խանա,
Չես կարող բերան բանա։

195. (6) Ս Ա Թ Ո Ջ Ա Ն

Սաթոն ելավ բոստան աշեց,
Սաթո ջան,
Ջուխտ դուլուլեն սիրտը խաշեց,
Սաթո ջան։

Սաթոյի բըրդին, լըցրին թափուց,
Սաթո ջան,
Վըրեն քաշին կանաչ կապուտ,
Սաթո ջան։

ԳՈՒՍԱՆԱԿԱՆ ԵՐԳԵՐ

196. (98) ԵՐԱՆԻ՜ ՁԵԶ, ԲԱՐՁՐ ՍԱՐԵՐ

Երանի՜ ձեզ, բարձր սարեր,
Որ սավդայի բան չեք տեսել,
Յարը յարոջ հետ խոսալով,
Ջան, ջան ասելը չեք լսել,
Յարը յարոջ հետ խոսալով,
Ջան, ջան ասելը չեք լսել։

197. (37) ՈՐԹՆԱՎԻ ՀՈՂԲԱԺԱՆՈՒԹՅՈՒՆԸ

(Դուբեիր)

Որթնավի հողբաժանություն,
Փոր պահեցին մինչև գարուն,
Առան մոտիկ, տվին հեռուն,
Աստված քանդե տվողի տուն։

Տարան տվին Նավկա կորտեր,
Աստված ջարդե մեստատորներ,
Ֆահլեքն էկած կուզեն փողեր,
Երկու խուրձ էր քաղած խոտեր։

Խիղճը մեռած Մըխիթարը,
Տարավ տվեց Նավկա սարը,
Մեկըն ասավ՝ անհարմար է,
Զորըն ասին՝ շատ լավ սար է։

Կեղծավոր Գասոյի Դանելը,
Դըռնից կըտրի սելն ու մալը,
Կիսատ թողեց խեղճիս կալը,
Ինձպես տեսնի իրեն հալը։

Ուրացող Նախանձ Երեմը,
Կեղծ էր գրում միշտ ղալամը,
Պահեց իր ազգ ու երամը,
Կըրակն ընկներ իրա ջանը։

Երեք անգամ բատուգեցին,
Լավ հողերը տակ քաշեցին,
Մեկը մյուսին համոզեցին,
Քյասիբներին կոտորեցին։

Կոտորեցին քյասիբները,
Զվայելե՛ք ձեր հողերը,
Այս է Սրապիոնի խոսքերը,
Խոլեր մըտնի ձեր տըները։

198. (96) ՍԻՐՈ ԳԵՐԻ, ՈՒ՞ՐՏԵՂ ԵՍ

Քեզնեն կարոտով մընացի, սիրո գերի ու՞րտեղ ես,
Մեկզմեկու պայման արինք, թերի թողիր, ու՞րտեղ ես։
Տիվ և գիշեր անհանգիստ եմ, անուշ քընիր իմ կորավ,
Երկնային ամպի միջին, էլի արի, ու՞րտեղ ես։

Տեսակ-տեսակ գործիքներդ, հազար ավազ վառ արիր,
Օրին մե սիրեկան ճարիր, կըրկին ընձի յադ արիր։
Քեզ համար հուրանիք գիտես, ծիծաղողներ շատ արիր,
Երախտամոռ, դարձ չես դալում, եղավ տարի, ու՞րտեղ ես։

Մըտածում եմ խղճուկ Մակար՝ լավ չեղավ իմ բաձս,
Էս իմ սըրտին վերք է դառել, պետք է պատմեմ լըսածըս,
Խընդրում եմ ով սիրելիս, անտես չանես խոսածըս,
Մեղքերըդ վըրեդ հաստատիր, ինչպես տարի, ու՞րտեղ ես։

199. (20) ՍՄԲԱՏԻ ՀԵՔԻԱԹԻՑ

Կըրկին կըրակն ընկավ սիրտըս,
Մըխաց վառվելով, վառվելով.
Մեջ բոցերուն գոցավ սիրտըս,
Սրկաց վառվելով, վառվելով։

200. (30) ԼՍԻՐ ԱՂԵՐՍԱՆՔՍ

(Ամրոյի ճերխարից)

Լըսիր աղերսանքըս, եղբա՛յր մըտերիմ,
Սիրես աստված, տուր նամակըս Ամրոյին,
Ամրոյին, Ամրոյին, Սերո ջան։

Սիրահար սոխակ եմ մեջ վարդարանին,
Սիրես աստված, տուր նամակըս Ամրոյին,
Ամրոյին, Ամրոյին, Սերո ջան։

201. (40) ԱՄՐՈՅԻ ԽԱՂԸ

Լըսիր աղերսանքըս, եղբա՛յր մըտերիմ,
Սիրես աստվածըդ, տուր նամակըս Ամրոյին։

202. (36) Մ Ո Ւ Շ Տ Ա Ջ Ա Գ

Բարի արմատի, հարազատի ազգական ես դու,
Խիստ պատվական ես դու.
Պես ես մի հատի, ինձ խրատի, գիտնական ես դու,
Լույսի նըման ես դու։

Հասակըդ ծաղիկ և գեղեցիկ, վարդ ես անթառամ,
Տաս աշխարհին հոտ համ.
Պըտղալից ծառից, անմեղ գառից մաքուր բան ես դու,
Կույսի նըման ես դու։

Ունես մեծ անուն, իսկ համատառուն, սիրուն շըքեղ ես,
Մեծ պալատի ցեղ ես.
Անենք առանձին՝ Մադմանյանցին սիրեկան ես դու,
Սիրով չըսպանես դու։

203. (88) ՔՅԱՐԱՄԻՑ

Մի տեսնի երեսը նախանձոտ մարդի,
Գըլուխ առ, նրա մոտիցը հեռացիր.
Բարի ընկերասեր երիտասարդին,
Պատվե, սիրե և արժեքը իմացիր։

Նախանձոտը երբեք օր արև չունի,
Մարդ է ծնվել, բայց մարդկության ձև չունի,
Երբ տեսնում ես մի ծառ, որ տերև չունի,
Մի մոտենա, շատ հեռվից անց կացիր։

204. (9) ԷԴ ՈՍԿԵԹԵԼ ՄԱԶԵՐԴ

Էդ ոսկեթել մազերդ,
Անուշ լեզու խոսքերդ,
Էլ ես ի՞նչ անեմ,
Դարդերըս ու՞մ պատմեմ՝
Մընում եմ։

Լուսնյակը դուրս է եկել,
Աչքերիս լուս է եկել,
Էլ ես ի՞նչ անեմ,
Դարդերըս ու՞մ պատմեմ՝
Մընում եմ։

205. (50) Ո՞Վ ԱՆՀԱՆԳԻՍՏ ԱՆՃԱՐ ՈՏՔԵՐ

(Դուրեիր)

Ո՞վ անհանգիստ անճար ոտքեր,
Ձեր քայլմունքը չեք հասկանա,
Ո՞վ անլույսին խավար աչքեր,
Փարեն ընկնեք, չեք իմանա։

Եթե մարդ չեղնի ձեր հետը,
Հայտնի կերթաք կընկնեք գետը,
Ձեզ վերք կուտան քարն ու փետը,
Բոլլիկության չեք դիմանա։

Ականջ, դուն էլ ի՞նչ կըլըսես,
Ով չար լեզու ճառախոս ես,
Ձեռք, ինձանից գործեր կուզես,
Բայց գործերը չեք գիտենա։

Արաքսի, գալի մեկ հընար,
Աչըղության ձևին հարմար,
Որ քեզի չանմանեն հիմար,
Շատերուն մի վատահանար։

206. (111) ՁՄՌԱՆ ՈՒ ԳԱՐՆԱՆ ՎԵՃԸ

Ձըմեռն ու գարունը վեճի մեջ մըտան,
Ձըմեռը գարնան ասավ, ես եմ մի լավ խան,
Ես կըհեծնեմ Ղըռ ձին, սարերուց կուգամ,
Ամեն մի դեռուկը խեղդեմ հարուր ջան։

Գարունն ասավ, նրանց հավարին կուգամ,
Հարավն ու անձրև քու վըրեդ կուտամ,
Ջուրը տըկեդ վազի, քու վըրեդ խընդամ,
Էն վախտ աչքիդ կերևամ, մի լավ խան։

Ձըմեռը գարնան ասավ, մարտուն մոտըդ գամ,
Մալ ու ոչխարներըդ անոթի բըռըըռան,
Էն վախտ աչքիդ կերևամ, մի լավ խան։

207. (46) ՇԱՏ ՄԱՆ ԳԱԼՈՂ ԿՆԿԱ ԲԱՆԸ

Շատ ման գալող կընկա բանը.
Իր ման գալուց շատ հազ կանե,
Մուկն ու կատուն թափած թանը,
Կանգնի դուռը գըլուխ կապե,
Երես շըփե, մարդ կըխափե,
Փարվազ կանե, հայ անարամ, փարվազ կանե։

Տուն մըտնալուն չունի կարիք,
Ծըխի մեջ կըթողնի էրիկ,
Իր հալավ չըկարող կընիկ,
Մանուբի աշուղ Գևորգը,
Իրա խելքին, ասած երգին, տընաց կանե։

208. (49) ՔՅՈՌՕՂԼԻ ԴՈՒԲՅԻԹ

Ով որ համբերանք ունենա,
Համբերութեն շատ լավ բան է,
Աշխարհը պատիվ կըտանա,
Համբերությունն այդպես բան է։

Ախր վատությունն ի՞նչ բան է,
Սըրտի վերքից մարդ կըսպանե,
Դատավորի մոտ կըտանե,
Համբերությունն շատ լավ բան է։

Ով որ չի հեռևի չարին,
Ուրախ կապրի բոլոր տարին,
Լեզվով գըրավե հազարին,
Համբերությունն այսպես բան է։

Արաքսին եմ, ցավըս շատ է,
Սիրտըս տըխուր, մըտքս ստատ է,
Ասած խոսքերըս խըրատ է,
Համբերությունն շատ լավ բան է։

209. (29) ՕՏԱՐ ԵՐԿՐԻՑ

Ղարիբից

Օտար երկրից վերադարձար,
Խոսի՛ր, մի՛ լըռիր, իմ սազը,
Գըզվելով քեզ ձեռքըս առա,
Պատմի՛ր, մի՛ լըռիր, իմ սազը։

210. (32) ՔՅԱՐԱՄԻ ԳՅՈԶԱԼԼԱՄԱ

Ընկա ցավոտ ծովի մեջը,
Մեկ փրկության գյուման չունիմ,
Ինձ այրել է այս անշեջը,
Մեկ փրկության գյուման չունիմ։

Ջըկի համար խաբար էրի,
Ասի՝ քեռիս շուտ կըբերի,
Կյանքըս իզուր տըվի գերի,
Մեկ փրկության գյուման չունիմ։

211. (69) ՎԱՌՎՈՒՄ ԵՄ ԱՍԼԻ, ՎԱՌՎՈՒՄ ԵՄ

Ցավըս ուրիշ տեսակ ցավ է,
Վառվում եմ, Ասլի, վառվում եմ,
Ով նազելիս, մի լար, բավ է,
Վառվում եմ, Ասլի, վառվում եմ։

Էս ցավն ինձի մահ պատճառեց,
Վառվում եմ, Ասլի, վառվում եմ,
Կերավ կյանքըս և ըսպառեց,
Վառվում եմ, Ասլի, վառվում եմ։

212. (166) ՈՉԽԱՐՆ ՈՒ ԳԵԼԸ

Ոչխարն ասավ գիլուն՝ դու էլի էգ ես,
Սարերը ման գալող գարշելի, բեգ ես,
Յոնջաներ, փունջաներ, յավշաններ ունես։

Գելն ասավ ոչխարին՝ մենք բարեկամ ենք,
Մի միս, մի արուն, սըրտացավանք ենք։

Գելն ասավ ոչխարին՝ ես անվան տեր եմ,
Բալաշա ձեռնաբաց ղոնաղասեր եմ,
Ինչ որ ուզենաս պետք է քեզ բերեմ։

213. (36) ԻՄ ՁԱԽՈՐԴՈՒԹՅԱՆՍ ՄԻ ԽՆԴԱ

(Ջիվանի)

Իմ ձախորդությանս մի խընդա ընկեր,
Քեզ էլ կըպատահի այս օրը մեկ օր։

Դու վարը կընըստես, ինձ կըկանչեն վեր,
Կըփոխվի բախտերի շըջանը մեկ օր։

Փողի վըրա հույս մի դընի հավիտյան,
Կըմըտնի, դուրս կըգա, շատերի գըրպան։

214. (50) ՄԻ՛ ԼԱՐ ԱՅԴՊԵՍ[1]

— Մի՛ լար այդպես անմխիթար,
Մի՛ լար, հայրիկ, մի՛ լար, մի՛ լար։
Օրհնությունով քեզ ճանապարհ,
Մի՛ լար, հայրիկ, մի՛ լար, մի՛ լար։
— Որդի՛ եթե ինձ կըսիրես, մի՛ գընա որդի, մի՛ գընա։
Իրավ դու իմ սիրտըս կայրես, մի՛ գընա, որդի, մի՛ գընա։

---

[1]) *Խոսքերը՝ Սմբատի հեքիաթից։*

215. (42) ԵՍ ՔԵԶ ՍԻՐԻ

Ես քեզ սիրի, որ դու ինձի չըթարգես,
Չըթարգես, չըթարգես.
Եթե թարգես հոգով, մարմնովըդ խարգվես,
Յա՜ր խարգվես, յա՜ր խարգվես։

Անիծեմ, տաս տարի անդումըդ պառկես,
Յա՜ր պառկես, յա՜ր պառկես.
Յորղանի մեջ տընքան կողերըդ աղջիկ,
Յա՜ր աղջիկ, յա՜ր աղջիկ։

Պատճառն ինչ էր, որ դու չըհավնար ինձի,
Կարոտ եք դովլաթի, փափագ եք գանձի։

Առաջ խոսքը տըվող, լեզուն պապանձի,
Օձի պես սակավի քու կերըդ աղջիկ։

216. (49) ԼՍԵ, ՏԵՍ ՔԵ ԻՆՉ ԵՄ ԱՍՈՒՄ[1]

(Հանելուկ)

Լըսե, տես քե ինչ եմ ասում, ա՜յ տըղա,
Թե կարաս պատասխան տյուն ու յուն րե.
Թե չես կարա՝ վաղով վինըդ տուր գընա,
Ընկար փոսը անմեղ կեն ու յուն րե։

217. (35) ԻՆՁՆԵՆ ՄԻՔ ՆԵՂԱՆԱ

Ինձնեն միք նեղանա համեստ քույրիկներ,
Երբից կերթամ ճանապարհը ձեզ լինի.
Ձեզ լինի օ՜յ, ձեզ լինի օ՜յ, օտար եմ։

Եկա այստեղ, չըկարծեք թե կըմընամ,
Մի կաթիլ ջուր տըվեք, լիճը ձեզ լինի։

Սըրտիս մեջը ունեմ ցավի կըծիկներ,
Թույնը ես կըխըմեմ, մեղրը ձեզ լինի։

218. (3) ՆԱԶԵԼԻ ԹԱԳՈՒՀԻ

Նազելի թագուհի չէ քեզ համեմատ,
Ծոցըդ հոտով ծաղիկ,
Զունեմ քեզ նըման, աննըման,
Սև-սև աչեր, կարմիր հունքեր,
Լայն ճակատ, ամենագեղեցիկ չունեմ քեզ նըման։

---

1) Խոսքերը՝ Սմբատի հեքիաթից։

Դըրախտի ծնունդ ես,
Գեղանի շուշան,
Ծոցըդ պահած ունես,
Հոտով բալասան։

Թեև Սուլթանի մոտ
Սիրուններ շատ կան,
Նըրանց մեջն հատիկ,
Զունեմ քեզ նըման։

Դու Ջիվանի ասածիցն առավել,
Որքան գովասանք տամ քեզի վայել։
Թեև Վրաստանում անուն է ելել,
Ինչպես սիրեկան, չունեմ քեզ նըման։

219. (78) ՍԻՐՈՒՆ ՂՈՒԱԹ, ՂԱՅԹԱՐ ՂՈՒԱԹ

Այս ախտի դարդը դու ես,
Սիրուն Ղըռաթ, ղայթար Ղըռաթ։
Գաղտնի թևերըդ բաց արա,
Զարկ ծիծեռնակ թռի գնա,
Եղբայրըդ գերի չի մընա,
Սիրուն Ղըռաթ, ղայթար Ղըռաթ։

220. (34) ԹՈՒԽ-ԹՈՒԽ ԱՉՔԵՐ

Թուխ-թուխ աչքեր, բախտը, մանի յանդըրեր
Պագըմ ուզի, յուզի մանի ղոնդըրեր,
Ա·ուշ լեզվով, սոյլար մանի գյուլդըրեր,
Ես իմ յարըղուն այըրըլմիշամ նեջա օլար։

Բալաք աչքեր կայնե չարդախ գյոզ էյլար,
Սիրտըս ուզեց քյոյնա յարոջ հազ էյլար,
Ազալ սիրեց ինգի գուրմիշ նազ էյլար
Ես իմ յարըղուն այըրըլմիշամ նեջա օլար։

ԳՈՒՍԱՆԱԿԱՆ ԵՐԳԵՐ[1]

(Ադրբեջաներեն լեզվով)

221. ԿՈՒԶՈՒՄ ԷՅ, ԿՈՒԶՈՒՄ ԷՅ[2]

(Դահար Միրզից)

Սիրո համար ես ընկել դու խոր գետը,
Արկղից դուրս եկ, պարսկի որդի, ողջ կաց, յար,
Կուզում է՞յ, կուզում է՞յ, կուզում է՞յ, կուզում է՞յ։
Երգել են՝ Սարգսյան Սոֆիկ, Սարգսյան Նազիկ և Մուրադյան Արեգնազան (տես՝ № 100)։ Սովորել են Երևանի մանկատանը։ Անկապ երկտողեր։

195. (6) ՍԱԹՈ ՋԱՆ

Երգել է Սարգսյան Սոնիկ 12 տ. (ալաշկերտցի)։ Սովորել է Երևանի մանկատանը։ Սաթոյի ողբերգական մահն է պատմվում այս պարերգի մեջ։

ԳՈՒՍԱՆԱԿԱՆ ԵՐԳԵՐ

196. (98) ԵՐԱՆԻ՜ ՁԵԶ, ԲԱՐՁՐ ՍԱՐԵՐ

Հաջի Խալիլ (այժմ Ծաղկահովիտ, Սպիտակի շրջան)։ Երգողի անունը ձեռագրում չի նշված։

197. (37) ՈՐԹՆԱՎԻ ՀՈՂԲԱԺԱՆՈՒԹՅՈՒՆԸ

(Դուբեյթ)

Որթնավ (այժմ Ջրաշեն, Սպիտակի շրջան)։ Երգել է Մանուկյան Սրապիոն, (խնուսցի)․ պրոֆեսիայով աշուղ․ իր հեղինակությունն է։

198. (9) ՍԻՐՈ ԳԵՐԻ, ՈՒ՞ՐՏԵՂ ԵՍ

Հաջի Խալիլ (այժմ Ծաղկահովիտ, Սպիտակի շրջան)։ Երգել է Մարտիրոսյան Խ.։ Սովորել է գյուղում։

199. (20) ՍՄԲԱՏԻ ՀԵՔԻԱԹԻՑ

Ձիգդամալ։ Երգել է Աբրհամյան Ա.։ Բառերը՝ Սմբատի պատմությունից։

200. (30) ԼՍԻՐ ԱՂԵՐՍԱՆՔՍ

Նալբանդ (Սպիտակի շրջան)։ Երգել է Մազմանյան Կ. 46 տ.։ Պապական հայրենիքը՝ Բասեն։

201. (40) ԱՄՐՈՅԻ ԽԱՂԸ

Որթնավ (այժմ Ջրաշեն)։ Երգողի անունը չի հիշատակված։

202. (36) ՄՈՒՇՏԱՋԱԴ

Նալբանդ (Սպիտակի շրջան)։ Երգել է Մազմանյան Կ. (տես՝ № 200)։ Իր հեղինակությունն է։

203. (88) ՔՅԱՐԱՄԻՑ

Հաջի Խալիլ (այժմ Ծաղկահովիտ)։ Երգել է Շմոյան Թ. 33 տ. (բնիկ էյջանլարցի)։ Սովորել է Էյջանլարում։

204. (9) ԷԴ ՈՍԿԵԹԵԼ ՄԱԶԵՐԴ

Համամլու (Սպիտակի շրջան)։ Երգել է Շահրազյան Ա.։ Հեղինակը՝ Սահակյան Ա. (չիգդամալցի)։

205. (50) Ո՞Վ ԱՆՀԱՆԳԻՍՏ ԱՆՃԱՐ ՈՏՔԵՐ

(Դուբեյթ)

Մունջուխլի (այժմ Ծիլքար)։ Երգել է Առաքելյան Արաքսի։ Իր հորինածն է։

206. (111) ԶՄՌԱՆ ՈՒ ԳԱՐՆԱՆ ՎԵՃԸ

Ղըռխդագիրման (այժմ Հնաբերդ, Ալագյազի շրջան)։ Երգել է Հայրապետյան Վ.։ Երգի հեղինակը նույն գյուղից է։

207. (46) ՇԱՏ ՄԱՆ ԳԱԼՈՂ ԿՆԿԱ ԲԱՆԸ

Որթնավ (այժմ Ջրաշեն)։ Երգել է Առաքելյան Թ. 38 տ.։ Պապական հայրենիքը՝ Մշո գավառ։ Բառերը՝ Մահուբի Գևորգի։

208. (49) ՔՅՈՌՕՂԼԻ

(Դուբեյթ)

Մունջուխլի (այժմ Ծիլքար)։ Երգել է Առաքելյան Արաքսի։ Բառերը իր հեղինակությունն են։

209. (29) ՕՏԱՐ ԵՐԿՐԻՑ

Քյուլլուջա (Սպիտակի շրջան)։ Երգել են՝ Սուքիասյան, Մարտիրոսյան։ Ղարիբից։

210. (32) ՔՅԱՐԱՄԻ ԳՅՈԶԱԼԼԱՄԱ

Նալբանդ (Սպիտակի շրջան)։ Երգել է Տեր-Թումանյան Հ.։ Բառերը իր հեղինակությունն են։

211. (69) ՎԱՌՎՈՒՄ ԵՄ ԱՍԼԻ, ՎԱՌՎՈՒՄ ԵՄ

Դանագիրմազ (այժմ Հովիտ, Ապարանի շրջան)։ Երգել է Մելիքյան Ա. 17 տ.։ Գաղթած Ղարսի շրջանից։

212. (166) ՈՉԽԱՐՆ ՈՒ ԳԵԼԸ

Ղարաբոյա (այժմ Խնկոյան, Սպիտակի շրջան)։ Երգել է Կարապետյան Հ. (տես՝ № 27)։

213. (36) ԻՄ ՁԱԽՈՐԴՈՒԹՅԱՆՍ ՄԻ ԽՆԴԱ

Արզաքյանդ (այժմ Արզական)։ Երգել է նույն գյուղացի Մանուկյան Տ. 30 տ.։ Պապերը գաղթել են 100 տարի առաջ Բասենից։ Այս երգը աշուղական է, խոսքերը պատկանում են Ջիվանուն։ Նույն խոսքերը երգում էր «Կռունկ»-ի եղանակով Բջնիում նույն գյուղացի Գ. Ազատյան 48 տ.։

214. (50) ՄԻ ԼԱՐ ԱՅԴՊԵՍ

Ալափարս։ Երգել է Մարգարյան Վ. (տես՝ № 74)։ Խոսքերը վերցված է «Սմբատ»-ի հեքիաթից։ Եղանակը զուտ աշուղական է։

215. (42) ԵՍ ՔԵԶ ՍԻՐԻ

Բջնի։ Երգել է Պետրոսյան Ս. (տես՝ № 69)։ Եղանակն ունի աշուղական սեկվենցիաներ և գուսանական դրոշմ։

216. (49) ԼՍԵ, ՏԵՍ ՔԵ ԻՆՉ ԵՄ ԱՍՈՒՄ

Ալափարս։ Երգել է Մարգարյան Վ. (տես՝ № 74)։ Ժողովրդական-աշուղական է, «Սմբատ»-ի հեքիաթից։ Հանելուկ է առաջարկում իր հակառակորդին, որը եթե չկարողանա լուծել հանելուկը՝ պիտի իր վիզը տա ու գնա։

217. (35) ԻՆՉՆԵՆ ՄԻՔ ՆԵՂԱՆԱ

Ալափարս։ Երգողն է նույն գյուղացի Շահգյալդյան Հ. (տես՝ № 88)։ Սովորել է Ելենովկայի շրջանի Օրդաքլու գյուղում։ Խոսքերը վերցված են գուսանական-ժողովրդական հեքիաթներից։

218. (3) ՆԱԶԵԼԻ ԹԱԳՈՒՀԻ

Նորադուզ (Նոր Բայազետ)։ Երգել է Անտոնյան Ե. 52 տ.։ Պապական հայրենիքը՝ Մուսուն (Բարոն)։

219. (78) ՍԻՐՈՒՆ ՂՈՒԱԹ, ՂԱՅԹԱՐ ՂՈՒԱԹ

Մարտունի (Մարտունու շրջան)։ Կատարողի անունը չի հիշատակված։ «Քյոռօղլի» հեքիաթից։

220. (3) ԹՈՒԽ—ԹՈՒԽ ԱՉՔԵՐ
(Բախար մանի յանդըրեր)

Մարտունի։ Երգել է Խաչատրյան Մ. (արծափցի)։ «Քյարամից»։

221. (107) ՍԻՐՈ ՀԱՄԱՐ ԵՍ ԸՆԿԵԼ ԴՈՒ
(Կուզում էյ, կուզում էյ)

Հաջի Խալիլ (այժմ Ծաղկահովիտ)։ Երգել է Սահակյան Մ. 24 տ.։

222. (68) ՄԻՍԿԻՆ ԲՈՒՐՋԻ, ԳԵՇՏ ԷՅԼԱ

Քեշիշքենդ (այժմ Գեղարոտ, Ալագյազի շրջան)։ Երգել է Շահինյան Նալեմզար 35 տ.։ Պապական հայրենիքը՝ Բասեն։ Սովորել է բանաստեղծ եղբորից։

223. (74) ԵՐՎԱՆ ԶԱՐՍՈՒ ԲԱԶԱՐ

Դանագիրմազ (այժմ Հովիտ, Ապարանի շրջան)։ Երգել է Մանուկյան Ղ.։

224. (10) ԹԱԽՆԻՍ

Համամլու (Սպիտակի շրջան)։ Երգել է Մանուկյան Ս. 49 տ.։ Պապական հայրենիքը Ղուրղուղուլ։ Սովորել է Մ. Սահակյանից։

225. (11) ԱՅ ԴԻԼԲԱՐԸՄ

Հաջի Խալիլ (այժմ Ծաղկահովիտ)։ Կատարողի անունը չի հիշատակված։

226. (47) ՋԱՆԸՄ ԱԼՄԱ, ԳՅՈԶԸՄ ԱԼՄԱ

Որթնավ (այժմ Ջրաշեն, Սպիտակի շրջան)։ Երգել է Իսպիրյան Թ.։

227. (24) ՀԵՅ ԲԱԴԻ ՍԱԲԱԽ
(Բելա մարալդան)

Զիգդամալ։ Կատարողի անունը ձեռագրում չի նշված։

228. (49) ԲԱՆ ԲԱՂԱ ԳԻՐԴԸՄ

Երանոս (Մարտունու շրջան)։ Երգել է Զարգարյան Ա.։ Խարբերդի եղանակով։

229. (22) ՏՐԱՊԻԶՈՆՆԱՆ ԶԸՔՏԸՄ ԲԱՇԸՄ

Զիգդամալ։ Երգել է Ասիկյան Մ. 45 տ.։ Պապական հայրենիքը՝ Ղուրդուղուլի։ Բառերը Հաբեթ անունով մեկն է հորինել։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ ՁԱՅՆԱԳՐՎԱԾ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԵՎ ՔՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐ

230. (109) ՍՈՒ ԳՅԱԼԸՐՆ ԼՈՒԼԱ ԼՈՒԼԱ

Ցարփուղլու (Բասարգեչարի շրջան)։ Երգել է Ջամալ Ազիզով։

231. (101) ԲԻՐ ՏԱԾ ԱԹՏԸՄ ՀԱՎՈՒԶԱ

Քյոլաղըրան (այժմ Ծովինար)։ Երգել է Օհանյան Զ. 38 տ.։ Պապական հայրենիքը՝ Ակոռի։ Սովորել է Բաքվի ադրբեջանցի բանվորներից։

232. (156) ԱՆԱ, Ա՜Խ ԱՆԱ

Ղալթաղչի (այժմ Արտագյուղ, Սպիտակի րջան)։ Երգել է Հովսեփյան Հ. (տես՝ № 152)։

233. (7) ԱՆԱՄ ՄԱՆԻ ՍԱՍԼԻՐ

Նորադուզ (Մարտունու շրջան)։ Երգել է Անտոնյան (տես՝ № 218)։ Սարիղամշի երգ։

234. (133) ԽՈՐՈԶ

Ջախըլու (Մարտունու շրջան)։ Երգել է Խլոյան Ա.։

235. (169) ՏԻՆ ԼԱ ԼԱ, ՏԻՆ ԼԱ ԼԱ

Ղըոխդագիրման (այժմ Հնաբերդ, Ալագյազի շրջան)։ Երգել է Հարությունյան Վ.։ Սովորել է գերության մեջ։

236. (80) ՀԱՄ ՅԱԼԻ, ՀԱՄ ՅԱԼԱԼԻ

Դանագիրմազ (այժմ Հովիտ, Ապարանի շրջան)։ Երգել է Ավդալյան Գ.։

237. (165) ԲԻՐ ՋԻԳԱՐԱ ՎԵՐ ՄԱՆԱ

Մեծ Մազրա (Բասարգեչարի շրջան)։ Երգել է Սալբի Վարդանյան։

238. (139) ԴԸՉ ՄԱՆԴԻԼ, ՄԱՆԴԻԼ, ՄԱՆԴԻԼ

Ջախըլու (Մարտունու շրջան)։ Երգել է Պետրոսյան Հ.։

239. (137) ՅՈՆՋԱԼԱՐ ԽԱՆՄ ՅՈՆՋԱԼԱՐ

Ջախըլու։ Երգել է Խաչատրյան Հ.։

240. (15) Ա՛Յ ԿԸԶԸՄ, ԳՅԱԼ ՍԱՆԱ

Ղըշլաղ (այժմ Փգանով)։ Երգել է Մխիթարյան Շ. 15 տ.։

241. (11) ՇԸՂՇԸՂՈՒՆ ԲԻԼԱՑՈՒԿ ԴՈԼՆԱ

Համամլու (Սպիտակի շրջան)։ Երգել է Մանուկյան Ս.։

242. (105) ՅԱՂՄԱ ՅԱՂԸՇ, ՅԱՂՄԱ ՅԱՂՄՈՒՐ

Ղըոխդագիրման (այժմ Հնաբերդ)։ Երգել է Թորոսյան Թ.։

243. (157) ՀՈՊ ԲԱԼԱ ՅԱՎՐՈՒՄ

Ղալթաղչի (այժմ Արտագյուղ, Սպիտակի շրջան)։ Երգել է Հովսեփյան Հ. (տես՝ № 152)։

244. (26) ՆԱՆԻ (Կ)

Քարվանսարա (այժմ Աթարբեկյան)։ Երգել է նույն գյուղացի Ազիզյան Ա. 50 տ.։ Գաղթել են 100 տարի առաջ Մարաղայից։ Սովորել է Թավրիզում։

245. (32) ԱՅ ՈՒՋԱ ԴԱՂԼԱՐ

Ավան։ Երգել է նույն գյուղացի Ազիզյան Ա. 50 տ.։ Գաղթել են 100 տարի առաջ Մարաղայից։ Սովորել է Թավրիզում։

ՔՐԴԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐ ԵՎ ՊԱՐԵՐԳԵՐ

246. (58) ՄԸՐԿՈ ՖԻԿՈ

Քեշիշքենդ (այժմ Գեղարոտ, Ալագյազի շրջան)։ Երգել է Քոչարյան Գ. 48 տ.։ Պապական հայրենիքը՝ Խլաթ։ Սովորել է այստեղ։

247. (145) ՀԵՅՆԱՐ

Մեծ Պառնի (Սպիտակի շրջան)։ Երգել են (տես՝ № 4)։

248. (21) ԼՈՒՐԿԵ

Ն. Ախտա։ Երգել է Հովհաննիսյան Հ. (տես՝ № 72)։ Թեև երգողը քանաքեռցի է, բայց երգը արևմտահայ երգ է. վերջին երկու տան բառերը նոր են՝ Ախտայի շրջանում առաջ եկած։

249. (36) ՎԵՐԱՆԵ ԽԱԼ ՎԵՐԱՆԵ

Քյուզաջղ (այժմ Գեղարքունի, Նոր Բայազետ)։ Երգել է Սարգսյան Մ. (տես՝ № 260)։

250. (51) ՄԻՐ ՄԱԿՈՒԺԱ

Երանոս (Մարտունու շրջան)։ Կատարողի անունը չի նշված։ «Ծանր պար»։

251. (53) ԱՅՎԱՆԱ ՄԻՐ
(Քրդական հարսանեկան)

Աղամխան (Մարտունու շրջան)։ Երգել է Զարգարյան։ Երգում են հարսը տուն բերելուց։

252. (164) ՅԱՐԸՄ ԳՈՐԱՆԻ

Մեծ-Մազրա։ Երգել է Ներսիսյան Մ. 28 տ.։ Պապական հայրենիքը՝ Մուշ—Բուլանըխ։

253. (66) ԴՈԼԱՐԵ, ԴՈԼԱՐԵ

Զորագեղ (Մարտունի)։ Երգել է Կիրակոսյան Մ. (տես՝ № 57)։

254. (132) ՍԱՐ ՍԻՓԱՆ Է ԽԱԼԱԹ Է

Զախրլու (Մարտունու շրջան)։ Երգել է Խլոյան Ա.։

255. (175) ՀԱՅ ՀԵԼԻՆԸՆ, ՀԵԼԻՆԸՆ

Նորակերտ (Բասարգեչարի շրջան)։ Հարսանեկան-ծիսական երգերից։ Հարսին հոր տնից հանելը։

256. (176) ԲԱՐԱՆ Է, ՎԱՅ ԲԱՐԱՆ Է

Նորակերտ (Բասարգեչարի շրջան)։ Երգել է Հակոբյան Ա.։ Հարսանեկան-ծիսական երգ է։ Փեսի լողանալու ժամանակ մարդիկ անձրև են խնդրում։

257. ՀԱՅԼԱ ԿԱԼԱՅԵ

Նորակերտ (Բասարգեչարի շրջան)։ Հարսանեկան-ծիսական երգերից։ Երգում են նորապսակներին տուն տանելիս։

258. (144) ԴԻԼԲԱՐ ՄԵՅՎԱՆ Է ՏԱՄԸ

Զախրլու (Մարտունու շրջան)։ Երգել է Հովհաննիսյան Ս. (տես՝ № 149)։

259. (95) ԳՈՒԼԱՄՆ ԵՐԻ—ԵՐԻ

Քյուզաջղ (այժմ Գեղարքունի, Նոր Բայազետի շրջան)։ Երգել է Սարգսյան Մ. 30 տ.

260. (48) ԼԱԶԻ ՊԱՐԵՐԳ

Երանոս (Մարտունու շրջան)։ Երգել է Զաքարյան Ա. 48 տ.։ Լազստանի պարի երգ։ Պարում են միայն ոտքերով, ձեռքերը վեր բարձրացրած։ Սովորել է Հին Բայազետում։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՏԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ժողովածուների անունների ճամառոտված ձևը.

1. Կոմիտաս. «Ազգագրական ժողովածու» *1931 թ. Մոսկվա. կազմեց Սպ. Մելիքյան=ԿԱԺ ՍՄ։*
2. Կոմիտաս. «Ազգագրական ժողովածու», *հատոր* II, *1950 թ. Երևան, կազմեց Մ. Աղայան=ԿԱԺ ՄԱ։*
3. «Ժողովրդական երգեր». «Ազգագրական ժողովածու» *հատոր* I, «Շիրակի երգեր». *հավաքեցին ֆոնոգրաֆով՝ Սպ. Մելիքյան և Ան. Տեր-Ղևոնդյան։ Ձայնագրեց Սպ. Մելիքյան, Թիֆլիս, 1917 թ.=«Շիրակ»։*
4. Վանա ժողովրդական երգեր. «Ազգագրական ժողովածու»: *Ձայնագրեց Սպ. Մելիքյան, Երևան, 1927 թ.։ Հավելված ՀԽՍՀ Գիտության և Արվեստի ինստիտուտի № 1 տեղեկագրի 1-ին և 2-րդ հինգյակների... = «Վան»։*
5. Սպ. Մելիքյան. «Ուրվագիծ հայ երաժշտության պատմության», *Երևան, 1935 թ. երաժշտական հրատարակչություն = ՍՄ* «Ուրվագիծ», *հավելված։*
6. Սպ. Մելիքյան. «Հայ ժողովրդական երգեր և պարեր», *հատոր* I, *Երևան, 1949 թ.=ՍՄ* I։

ԿԻՐՈՎԱԿԱՆ — ԾԱՂԿԱՁՈՐԻՏ

(Ղարաքիլիսա-Հաջի խալիլ)

1. Միրուն տղա, երկինք կլնեմ: *Վարիանտը՝ «Վան» № 32, «Շիրմաջու երգը» (հարց ու պատասխանով գյանդ):*

2. Ոչխարն արել եմ յողը: *Պարերգ է, եղանակի փարիանտը «Այմասար շողում է»: Չափը՝ սուսյգը՝* $^4/_8+^5/_8$ *է:*

3. Յաման նազլի բանքս: *(Տասի տաս, տաս բերնա): Պարերգային է: Նույն երգը տես Սպ. Մելիքյան, «Ուրվագիծ», երաժշտական հավելված № 28, էջ 75 «Յաման նազլի բանդյըռ» վերնագրով: Մեզ մոտ կա նաև այլ վարիանտ «Վայ իմ նազլու յըռանդըռ», ձայնագրված է 1905 թվին, Դարձյալ Համամլու գյուղացուց: «Ուրվագծի» հավելվածի մեջ առաջ բերված երգի նախավերջի տակտի վերջին նոտան դո է: Սպ. Մելիքյանի գրանցումների մեջ «հայ, հույ» վանկերի նոտաներն իրարից տակտի գծով բաժանված են. մինչդեռ այդ ֆրազը մի բացականչություն է («հայ-հույ») և չպետք է այն մասնատվի իրարից առանձին տակտերի մեջ: Այսպիսով, երգի սկզբի երկու նոտաները պետք է լինեն նախատակտ, կամ ամբողջ երգը պետք է գնա* $^3/_8$*-բով:*

4. Ելնեմ այն սարը: *Պարերգ է: Կրկնակը բուն երգի համեմատությամբ ընդլայնված է: Վարիանտը՝ ԳԱ Արվեստների պատմության և տեսության սեկտորի ֆոլկլորային մասում:*

5. Ալիման, Ալիման: *Պարերգ է, լեզվախառն ադրբեջաներենի հետ:*

6. Յանար, յանար: *Պարերգային է: Վարիանտները՝ ԿԱԺ ՄԱ №№ 84, 87: Այստեղ վերջին 3 տակտի բառերը երգի հետ կապ չունեն: Յոթերորդ տակտը ավելորդ է և մտել է սեքատի կապակցությամբ:*

7. Ծառ ծաղկեցավ: *Հարսանեկան երգ է, վարիանտները տես ՍՄ I, № 104, ՍՄ «Ուրվագիծ», հավելված № 15, ԿԱԺ ՄԱ №№ 95, 96, 97 և այլն:*

8. Հրաժեշտը: *Չափը, սուսյգը՝* $^3/_4$ *է: Երկրորդ տակտի մեջ վերջին քառորդ* ռե *նոտան, ութերորդական պաուզան և սոլ ութերորդ նոտան կազմում են առանձին* $^2/_4$ *տակտ: Ամենավերջին նոտայից հետո պետք է լինի* $^1/_4$ *պաուզա:*

9. Պզտի ճարս: *Պարերգ է: Սպ. Մելիքյանի նշումը՝ «Ժողովրդական է. (երգարանից)»: երգարանի անունը չի նշված:*

10. Օրոր: *Ռոտնավորի և երգի եղանակի այլ վարիանտները՝ 1. «Պախրատուր» հեքիաթը Ղ. Աղայանի. 2. «Նանիկ», «Շիրակ» — № 120. 3. Համա. նաև նույն «Շիրակ»-ի № 32 երգի մեղեդիայի հետ:*

11. Բուրի, բուրի: *Օրորների հազվագյուտ օրինակներից է:*

12. Նանիկ: *Սպ. Մելիքյանի նշումից երևում է, որ երգի բառերի հեղինակը հայտնի է եղել (տես պատգրտիգացիան): Մեղեդիայի կառուցվածքի համաձայն վերջին երեք տակտերի մեղեդիկ գիծը պետք է մեկ ութնյակով իջեցնել: Մեղեդիան բնորոշ է իր լադային կառուցվածքով:*

13. Լուրիկ: *Վարիանտը՝ «Շիրակ» № 120:*

14. Մեր տուն, ձեր տուն, խառնա-խառնա: *Չափը՝* $^6/_8$ *է*[1]*: Վարիանտները՝ «Վարդ կոշիկըս» (ռիթմական), «Մաժի արա են դըշին», ԿԱԺ ՄԱ № 57 (եղանակային):*

15. Սարքի, սարքի սամավար: *Վարիանտը՝ «Վան» № 64: Պարերգ է:*

16. Հո՛յ նարե, ջա՛ն նարե: *Վարիանտը՝ ՍՄ I, № 9, «Օսան ջան», ՍՄ I, 173, «Վան» № 43. վերջին*

---

[1] *Կամենատարների մեջ չափի մասին նշում ունեն այն երգերը, որոնց չափը չի նշված Սպ. Մելիքյանի կողմից:*

երկուսը հարակից են տվյալ երգի հետ, անհչությունը կրկնակի բառերն են՝ «Հոյ նարե»:

17. Դու կայնել ես շեմքի նովին: *Այս երգի հինգերորդ տակտը* 6/4 *է: Այս տակտը բուն հիմնական չափի* (4/4) *պետք է բաժանել 2 տակտի, հետևյալ ձևով՝*

18. Ջուխտ գուրան սար կըրանի: *Պարերգային է: Եղանակը ռիթմական սրություն է ստացել շնորհիվ երկրորդ և երրորդ ութերորդականների սինկոպավոր դրության: Երգի մեջ 1, 2, 3, 6, 7, 9, 10, 11-րդ տակտերի երկրորդ* դո *16-րդները ավելի մոտենում են փորշլագին, որով շեշտը գալիս է հաջորդ նոտայի վրա:*

19. Ջնդոյի կալը: *Զինվորագրության հին երգերից է:*

20. Հե՜յ ջանըմ, ջանըմ, ջանըմ: *Վարիանտներից մեկը Թբիլիսիի հին երգերից է, ռուսերեն բառերով:*

21. Տոտիկ: *Երգիծական: Չափը, առույգը՝* 6/8 *է:*

22. Իչանք չայիրները: *Պարերգ է:*

23. Դարմնի խաղը: *Վարիանտը՝ «Ես սիրեցի, խալխը տարավ» երգի: Այս երգի մեջ միևնույն «յարո ջան» ֆրազը տարբեր է տակտավորված: Միջանկյալ* 2/4*-անոց տակտը* 2/4*-ի հիմք չունի և չի կապակցվում երգի ընդհանուր երաժշտական կառուցվածքին:*

Կարող է լինել տակտավորման երկու ձև. ա. երգի սկզբից՝ 1/4 *պաուզա, որով տակտերը կանոնավորվում են և* 2/4 *տակտը դառնում է* 3/4. *բ. չափը՝* 6/4*: Այդ հաշվով՝ 5-րդ և 6-րդ տակտերը միանալով մի տակտի մեջ, նախկին վեցերորդ տակտի* 1/2 ռե *նոտան դառնում է* 3/4, *ինչպես նույն երգի վերջին* ռե *նոտան է: Երգի ձևը պատմողական է:*

24. Ալաշկերտու խատուր գեղը: *Պարային է, երգիծական բնույթի տեքստով:*

25. Ըռեհան: *Պարերգ է, ծիսական բնույթի երգերից: Վարիանտը՝ ԿԱԺ ՄԱ № 7 մեղեդիայի ա. մասը:*

26. Հելլինո, Հելլինո: *Պարերգ է, վարիանտը՝ (Հելլինո կրկնակով), ՍՄ I, 124«Էլլինո յար»:*

27 Սիպտակ դոշը մատաղ կանեմ: *Չափը՝ պար* 2/4 *է: Այդ պարզ երևում է երգի երկրորդ մասից: Խոսքերը այս եղանակին չեն պատկանում: Տեքստի երկրորդ տողի «յար ջան, ես քու» մասը երաժշտականորեն անջատված է «չարըդ տանեմ» մասից: Եղանակը ավելի հին է, քան բառերը:*

28. Վա՜յ, իմ նազանի յարը: *Պարերգ է, վար. ԿԱԺ ՄԱ № 51 մեղեդին տարբեր է, կրկնակի բառերը նույնն են, համընկնող վարիանտը տես նույն հատորի № 73 երգը:*

29. Թուշդ դեմ էրա, պագեմ: *Պարերգ է: Տեքստը առույգը՝*

«Էս գիշեր լուսնակ գիշեր,
Զուռն է եկել, գետին նախշեր»:

Երրորդ և չորրորդ տողերը հանգեր չունեն և չեն կապված ա. և բ. տողերի հետ:

30. Իչանք չայիրները: *Պարերգ է, վարիանտը նույն ժողովածուի № 22:*

31. Ուր որ գնաս, պիտի գամ: *Պարերգ է:*

32. Մի տղա, մի աղջիկ: *Պարերգ է:*

33. Չոլի կռունկ, երկնե վիզ: *Պարերգ է, վար. «Թույ Նարգիզ», «Վան»:*

34. Նախշուն Լիզար: *Վարիանտը տես ՍՄ I, № 33, Լուրի (Օրոր): Այնտեղ մետրոռիթմը ավելի ճշտված է: Սկզբի 2 նոտաները պետք է լինեն նախատակտ: Մնացած տակտերը կազմվում են* 3/8*-ի հաշվով, մինչև ներառյալ* ռե *ութերորդական նոտան: Իսկ երգի վերջին քառորդ նոտան միանում է երգի նախատակտի երկու 16-րդականներին:*

Բառերը իրենը չեն: Երգը լեզվախառն է՝ հայ-ադրբեջաներեն:

35. Գնացել ես, եկել ես: *Պարերգ է, «Թամզարա»-ի վարիանտը՝ կրկնակը ադրբեջաներեն է: Նույն՝ «Գնացել ես, եկել ես» բառերով սկսվող երգը տես նույն ժող. № 51, որ դարձյալ վարիանտներից մեկն է: Բնորոշ է, որ այս երկու երգերի կրկնակները ադրբեջաներեն են, իսկ բուն երգի տեքստերը գրեթե նույնանման են՝*

№ 35. Գընացել ես, եկել ես,
Արազին մոտեցել ես,
№ 51. Գընացել ես, եկել ես,
Իմ յարին մոտեցել ես:

Չափը՝ 4/8—5/8*:*

36. Թասն առա գացի աղբուր: *Պարերգ է:*

37. Նեյնիմու, ճեյնիմու: *Պարերգ է:*

38. Բիլբիլի բաղ չան ու յար չան: *Պարերգ է:*

39. Մի լար, մի լար: *Պարերգ է: Սկզբի մասի վարիանտը տես «Շերամ» 93:*

40. Ճերմակ չուրկես, կարմիր յուրկես: *Պարերգ է:*

41. Հո՛պ, յար, չան իլակդ: *Պարերգ է: Ռիթմը բնորոշ է: «Օղ ւկ, կոճակ» են բառերը մեղեդային հետ միահյուսվում են և հեռացնում ուժեղանալով վերջին տակտի մեջ, դարձյալ վերադառնալով բուն մեղեդային, եղրափակում են եղանակը:*

42. Զաղրի միջի գյուղ սիրուն: *Պարերգ է:*

43. Յար չան, արի բան ասեմ: *Պարերգ է:*

44. Ջաղացիս դուռը աաշած: *Պարերգ է:*

45. Գացինք արտեր, բռնինք լոր: *Պարերգ է: Հինգերորդ տակտից («Այ աղջիկ») մինչև վերջը՝ կրկնակ է: Եղանակը բնորոշ է իր ռիթմական փոփոխակներով: Վարիանտը՝ «Շիրակ» № 67, «Երևանի յայլի»:*

46. Քու դարդեն, քու սավդեն, ա՛յ աղա: *Պարերգ է, հարց ու պատասխանի ձևով:*

47. Սարի Մոսկով էր յարս: *Պարերգ է: Նախկին տեքստը փոխված է: Բառերը նոր են: «Էլի խոսքով» պետք է լինի՝ «բարի խոսքով», որպես հանգ՝ «սարի Մոսկով»-ի: Այս եղանակի ա. վարիանտը վերջանում է՝* ռե-մի-դո-ռե *նույն ռիթմաձև նոտաներով: Մյուս վարիանտը՝ «Ես իմ, ես իմ» հանրածանոթ պարերգն է, որ վերջանում է* ռե-դո-ֆա-մի՝ *նույն երգի վերջին տակտի ռիթմով:*

48. Բաց խուրջինդ: *Պարերգ է, վարիանտը խըմբերգ, մշակել է Ռոմ. Մելիքյանը «Հրրես եկան սելերը»: Մյուս վարիանտը տես ԿԱԺ ՄԱ № 84, «Երևան բաղ եմ արել»:*

49. Ման ես գալիս յանա-յանա: *Պարերգ է:*

50. Զարկենք, կոշա դայդեն է: *Պարերգ է, վարիանտը տես ՍՄ I, 93, № 108:*

51. Գնացել ես, եկել ես: *Զափը՝ $^{4}/_{4}$ — $^{5}/_{8}$: «Թամզարա»-ի վարիանտն է: Տես № 35 կոմենտարը:*

52. Եկա երիկ, տափ գնացի: *Պարերգ է, «Զուլո»-ի եղանակի բազմաթիվ վարիանտներից մեկը:*

53. Ալագյազը մեզ մոտիկ: *Պարերգ է: Այս եղանակի մետրուիթմը, բացի Սպ. Մելիքյանի նշած $^{5}/_{4}$-ից, կարող է արտահայտվել՝ $^{6}/_{8}$ և $^{3}/_{4}$ չափերով: Երկու դեպքում փրազներից առաջ՝ $^{1}/_{4}$ պաուզա:*

ա.

բ.

Այս տրանսկրիպցիայի վարիանտներում նրանց ընդհանուր հատկանիշը ա. և գ. տակտերի քառորդ պաուզան է, որպիսին չկա Սպ. Մելիքյանի մոտ: Կարող է ունենալ նաև «Թամզարա»-ի մետրուիթմը, այսինքն՝ $^{4}/_{8}$—$^{5}/_{8}$: Այս դեպքում բ. և դ. տակտերի երկրորդ քառորդների փոխարեն կլինեն ութերորդական նոտաներ (ա. և գ. տակտերը կլինեն առանց պաուզաների):

54. Չիզիկ, դու չալե: *Պարերգ է, վարիանտը՝ «Վան» № 26, «Զարկ բոլոճիկ, զարկ»: Զափը նույնն է: Բացատրությունը տես նույն ժողովածուն:*

55. Համ գյուլ, նամ վարդ: *Պարերգ է: Կրկնակը («Համ գյուլ»): Տես «Վան» № 29:*

56. Դոմբարի չան, դոմբարի: *Պարերգ՝ մեներգ և խմբերգ, լեզվախառը:*

57. Յա՛ր աղչի, էկավ օրերդ: *Պարերգ է, երգը և կրկնակը նույն երկտակտ մոտիվն են, որ կրկնվում են երգի ընթացքում:*

58. Յորը զոր, յորը գիշեր: *Պանդխտության երգերից: Ունի բազմաթիվ վարիանտներ:*

59. Ջաղացպանն ու կինը: *Բովանդակությունը՝ «Ծամթել»-ի նմանությունն է: Եղանակը վարիանտն է «Նախշուն Լիզար»-ի: «Ծամթել»-ը տես ՍՄ I, №№ 4, 56, 72 երգերը: «Նախշուն Լիզար»-ը տես նույն ժողովածու № 34:*

60. Զուլո: *Պարերգ է: «Զուլո»-ի վարիանտներից մեկն է: Տես՝ ՍՄ I, 191, ՍՄ II, 167:*

61. Հո՛պ, զարդեր, զարդեր, զարդալա: *Պարերգ է: Կրկնակը քրդերեն է:*

62. Սարքի, սարքի սամավար: *Վարիանտը՝ ս. ժող. № 15:*

63. Զմփիկ, զմփիկ զարին է: *Պարերգ է, բնորոշ սինկոպաներով: Երգիծական բնույթ ունի:*

64. Յար Տուգի չան: *Պարերգ է: Առաջին տակտում ա. քառորդը երկու վարիանտ ունի, որ և նշված է Ս. Մ-ի կողմից: Բառերը ուշ շըրջանին են պատկանում: Բ. և գ. տողերը կրկնակներ են:*

65. Գյուղերի բնորոշում: *Այս երգը տարբեր վարիանտներով երգել են Հայաստանի գրեթե բոլոր շրջաններում:*

66. Դոլաբ, դոլաբ, դոլաբ է: *Պարերգ է:*

67. Առվե առու եմ բռե: *Պարերգ է:*

68. Հով արեք սարեր: *Վարիանտը՝ ԿԱԺ ՍՄ 259.*

69. Ջաղացս պատիկ-պատիկ: *Չափը, տույգը՝ $^{6}/_{8}$ է։ Լիգաները նշում են առանձին ֆրազները երգի տողերի հետ, որոնք չեն համընկնում տակտերի հետ։ Այսպես՝ ա. տողի վերջին վանկն ընկնում է երկրորդ տակտի սկզբի նոտայի վրա, երրորդ տակտի առաջին նոտան բ. տողի վերջին վանկի ձայնն է և այդպես մինչև վերջ։ Երգի մշակված վարիանտում Թ. Ալթունյանը չորրորդ տակտի առաջին ենթատակտը ընդլայնել է, երկու 16-րդական նոտաներից հետո ավելացնելով* լյա՝ *քառորդ և ութերորդ պաուզա, որպիսի գաղափարը հիմնավորված է երգի իմաստով։ Ըստ Սպ. Մելիքյանի տրանսկրիպցիայի՝ լիգայի տակտի նոտաների տևողության գումարը $^{9}/_{8}$ է, ըստ որում իններորդ $^{9}/_{8}$ նոտան գտնվում է նոր տակտի մեջ։ Դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ սկզբում չի դրված $^{1}/_{8}$-րդ պաուզան, ընդունելով* տողը *որպես տակտային միավոր, իսկ կրկնության նշանը դրված է ոչ թե տողի սկզբում, այլ տողի 2 վանկից հետո։ Նոտաների տակ նշումը Սպ. Մելիքյանինն է։*

7). Բարակ է բաժրդ, կռունկ: *Պարերգ է։ Չափը՝* $^{9}/_{4}$—$^{4}/_{4}$—$^{5}/_{4}$։

71. Ես քեզի սիրեցի: *Վարիանտը՝ ԿԱԺ ՄԱ* II, *№№ 74, 78, 92։ Այս երեք վարիանտներից ամենամոտը № 78 վարիանտն է, որտեղ մոտիվը երեք անգամ է կրկնված, իսկ կրկնակը տարբեր է։ Տեքստի մեջ Կոմիտասի բոլոր երեք վարիանտներում՝ «որ դու ընձի յար ըլնես», կամ «որ ինձ յար ըլնիս» և կամ «...յար ըլնես», այստեղ պետք է լիներ կամ «ըլնիր», «ըլնեիր»-ի կրճատ ձևը, կամ նույնպես՝ «ըլնիս», ինչպես մյուս վարիանտներում է։*

72. Ոլուզ բոլուզով տղա: *Պարերգ է։ Բնորոշ են մեղեդիայի տերցիային և քվարտային ընթացքները (3-րդ և 4-րդ տակտերը)։ Առաջին անգամ գետեղված է ՍՄ «Ուրվագիծ» համեղվածում, № 27։*

73. Հե՛յ, իմ ճազանը յարը: *Վար. ԿԱԺ ՄԱ, էջ 60, № 51։ Տոնայնությունը նույնն է։ Կոմիտասի մոտ ձայնագրման վայրը նշված է՝ Հախվերիս։ 1913 թ. Կոմիտասի ձայնագրած եղանակը կրկնված է երեք անգամ, տարբեր վարիացիաներով։*

74. Թազա մածուն եմ մերել: *Վար. ԿԱԺ ՄԱ, էջ 64, № 57 «Մըտիկ արա էն դըշին», և նույն ժող. № 47։ Չափը՝* $^{6}/_{8}$։

75. Ալագյոզլի: *Վար. ՍՄ* I *ա. 232 («Շիրակ»-ի վարիանտ) և բ. 240 (իբրև Ռստուրի հին պարերգ)։ Առաջինի չափը* $^{3}/_{4}$ *է, երկրորդի չափը՝* $^{5}/_{4}$։

76. Էլլինո յար: *Պարերգ է, վար. ՍՄ* I, *էջ 99, № 124։*

77. Մեր բամբակը: *Պարերգ է։*

78. Ա՜խ, մամա ջան: *Պարերգ է, վար. ՍՄ* I, *№ 125, Աղջի Սաթո։*

79. Սեվին սիրուն ես: *Պարերգային։ Ձայնակազմը մաժոր է. վերջամասում հայտնվում է նոր մոմենտ՝ իջեցված տերցիա* (լյա *բեմոլ), որպիսին հատուկ չէ հայ ժողովրդական եղանակներին և բնորոշ է ադրբեջանական երգերին։ Նույն երգը տարբեր տեքստով տես «Շերամ», էջ 92. «Սեր իմ, սիրուն ես»։ Սկսվում է «Յար ջան յարանիդ մատաղ» բառերով։ Կրկնակը՝ «Սեր իմ սիրուն ես, անուշ գարուն ես» և այլն։*

80. Վանեցոց գյուրճի երգը: *Երգի ձայնաշարը բնորոշ է իր երկլադային կազմով* դո-սոլ *և* ռե, *կառուցված է երկու քառալարերի վրա՝* ռե-մի-ֆա-սոլ *և* սոլ-լյա-սի-դո, *որտեղ* սոլ-*ը շաղկապող ձայնն է։*

81. Դարդերս շատացել ա: *Պարերգ է։ Եղանակը և տեքստը ձևափոխված են։ Երրորդ տակ-*

տից մինչև հինգերորդ տակտը և ութից մինչև վերջին տակտը՝ կրկնակներ են, որ չեն նշված, սակայն ցածը բերված տեքստից այդ պարզ երևում է։ Երգի 8—9 տակտերի բառերը փոխարինել են կրկնակի «գյուլա-գյուլա» բառերին։ Երրորդ տակտը պետք է կրկնվի։ Այսպիսով՝ երգի կրկնակը ճշտելով, կվերականգնվի ամբողջ կառուցվածքի համաչափությունը։

Տեքստ. դիտողութ՝. «էրոմն արի» նշանակում է «այրով արի», այսինքն ձորի միջով, կամ գուցե՝ քարայրով։

82. Լե, լե՛, վա՜յ լե, Մարո։ *Հինգերորդ տակտի 16-րդականները պետք է լինեն 8-րդականներ, նույն տակտի պաուզայի հաշվին։*

83. Յա՛ր, դե՛ գիդի, յա՛ր, դե՛։ *Պարերգ է, երգիծական տեքստով։*

84. Ծովի միջի տաշ քարը (*Բուղալ*)։ *Պարերգ է։ Վարիանտները՝ «կաքավ եմ», «էլլի յարին եմ» կրկնակով։*

85. Ես մի աղջիկ էի։ *Ժողովրդական «խաղերից»։ Պատմողական ձևով է երգվում, երկտողերի վերջում ընդմիջումներով։ Երգողը շունչ է առնում և ապա շարունակում։*

86. Քամին յանա յա՜րս։ *Պարերգ է, վար՝. «Շիրակ» № 56։*

87. Հարսանեկան։ *Վարիանտները՝ «Շիրակ» № 46 ԿԱԺ ՄԱ № 98։*

88. Դարդար անեմ։ *Օրորոցի երգ է. տեքստը՝ կատակային մոմենտներով։ Վար. «Բամբակը բարին», Ն. Բայազետ (№ 122)։ Այնտեղ չափը $^{2}/_{4}$ է։*

89. Սև աչերուդ։ *Բառերը իրենը չեն։ Այդ երևում է առաջին իսկ ֆրազից («սև աչերուդ, աղեղ») որ չի ամբողջանում մեղեդիայի հետ։*

90. Դու ասացիր կերթամ։ *Այս երգի մայր եղանակը հավանաբար հանրածանոթ «Վայ գիդի բըլբուլըս» երգի եղանակն է։ Այստեղ մետրուիթմը $^{6}/_{8}$ է։ Կոմիտասի մոտ՝ $^{4}/_{4}$ է, ԿԱԺ ՄԱ № 91։ Երգի այս վարիանտի $^{6}/_{8}$ չափը առաջ է եկել «Բերդից դուրս ելա» երգի չափից։ (Տես «Շիրակ»)։*

91. Քալա է, քալա է։ *Վար. ԿԱԺ ՄԱ, էջ 66, № 60։ Տեքստ. դիտողութ՝. «քալա» բառը տես նաև նույն շրջանի «Ծիրանների բարը» երգի մեջ՝ «քալ»։ Այդ բառերը չկան Ամատունու, Աճառյանի և Մալխասյանի բառարաններում։*

92. Արի գուրան։ *Վարիանտը երգվում է Հովհ. Թումանյանի բանաստեղծության խոսքերով «Ծախարակ» երգի եղանակով։ Վերջինի լադը հարմոնիկ է, չափը՝ $^{4}/_{4}$ է։*

93. Հոռովել։ *Եղանակը բնորոշ է ա. իր կիսառեչիտատիվ բնույթով և բ. երկլադային։ կառուցվածքով՝ ֆրիգիական և դորիական լադով։*

94. Կոռ՛ւնկ, ծափ տու ու բռի։ *Պարերգ է, վար. ԿԱԺ ՄԱ № 70։*

95. Գեղամի երգը։ *Երգաձևը պատմողական է։ Չափը այստեղ $^{2}/_{4}$ է նշված։ Ստույգը՝ $^{4}/_{8}$ է։*

96. Ծիրանների բարը։ *Պարերգ է։ Լադը բնորոշ է իջեցրած քվինտայով (*ռե *բեմոլ)։ Նույն ձայնաշարն* ռե-դո-սի-լյա-սոլ *ունեն «Շաափուն դուն փուշով աղջիկ»-ը, ԿԱԺ ՄԱ № 107, «Խորոզ»-ի առաջին մասերը («Շիրակ» № 150)։ Ավելի ընդլայնված ձևով հանդիպում ենք «Ուստի գուքաս» Սայաթ-Նովայի խաղի մեջ։*

97. Ես էրաս եմ Սարիղամիշ։ *Երգը կազմված է 2 եղանակից, տարբեր լադերով։ Առաջին մասը «Շախկուռ-շուխկուռ»-ն է։*

98. Մարալ Շուշո, ջեյրան Շուշո։ *Պարերգ է։ Ունի վարիանտ ԿԱԺ ՄԱ № 105։*

99. Քո չինար յարին։ *Պարերգ է, վարիանտը՝ «Թալիշու ճամփեն դուզ ա», ԿԱԺ ՄԱ № 254։*

100. Արևիդ մեռնեմ։ *Պարերգ է։ Վար. հայտնի «Ես պուճուր, յարս պուճուր»-ի եղանակն է։*

ՆՈՐ ԲԱՅԱԶԵՏ

101. Սարո: *Չափը՝ $^{6}/_{8}$: Երգի բ. մասի նոտաները չկան:*

102. Անուշ ջան: *Վարիանտը՝ վրացերեն բառերով երգվում էր Թբիլիսիում («Բալո լամազո, քոշկշի գի խար»):*

103. Տկնոր: *Վարիանտ է: Կատակային երգ է, որտեղ ծաղրվում են հարբեցողներն ու լոդրերը:*

104. Կես-գիշերին: *Վար. 1. Սույն ժողովածու № 111 (հարմոնիկ մինոր). 2. Նույնը՝ դորիական լադով, տարածված եղանակը («Կաքավ եմ»):*

105. Սիրունիկ, սիրունիկ ծաղիկներ: *Երգի 7-րդ տակտի երկրորդ* սի *բեմոլը պետք է լինի* լյա, *ինչպես երգի ա. և գ. տակտերում: «Սիրունիկ, սիրունիկ ծաղիկներ...» կրկնակն է:*

106. Կանչա՛ կռունկ, կանչա՛: *Երգի հիմնական եղանակն իր կրկնակով («Կռունկ ջան») մշակել է Կոմիտասը: Տես Կոմիտաս, «Հայ գեղջուկ երգեր»:*

107. Ծովի ափը վար կանեմ: *Վարիանտը՝ ՍՄ I, էջ 50, № 33, «Լուրի»:*

108. Պատշկամբում կայնել ես: *Այս երգը վերջին շրջանի (քաղաքի ազդեցություն) ստեղծագործություններից է: Բնորոշ է իր երկրորդ՝ վարիացիոն մասով, որտեղ նույն մեղեդին երգվում է կրկնակի մանրացված ռիթմով:*

109. Ոսկե գույակով տղա: *Երգը դիալոգ է՝ տղայի և աղջկա միջև: Վերջին տան տողերը պակասում են և խառնվել են:*

110. Էլի երկինք ամպել է: *Այս երգի հիմնական եղանակը տես «Շերամ», էջ 42. «Էլի երկինքս ամպել է»:*

Սպ. Մելիքյանը երգերի պասպորտիզացիայի բաժնում նշում է, որ երգը ձայնագրված է Նոր Բայազետի Վերին Ղարանլուղում, երգողները երգը սովորել են գյուղում: Երգի ա. տունը ընդհանուր է 2 (Շերամի և Սպ. Մելիքյանի) վարիանտներում, իսկ հետևյալ տների բառերը իրարից միանգամայն տարբեր են: Երկու երգերի առաջին երկու տողերի մեղեդիան հիմնականում նույնն է: Շարունակության մեջ հետագա տողերի մեղեդիները իրարից տարբեր են: Շերամի մոտ կա կրկնակ «Նախշուն հավքեր, անուշ հավքեր», որպիսին չկա այս երգում:

111. Հաբրբան: *Ունի բազմաթիվ վարիանտներ, որոնցից մեկը Կոմիտասի մշակածն է: Տես «Հայ քնար», էջ 10, № 3, չափը նույնպես 4 է: Այդ վարիանտում երգը կառուցված է տղայի և աղջկա միջև դիալոգի ձևով, ըստ որում աղջկա եղանակի մեջ կան վարիացիայի մոմենտներ, որտեղ օգտագործված է «Տան, տան» կամ «Ծափի, ծափի, ծիրանի» երգի սկզբի մասը (տես «Վան» № 45): Մյուս վարիանտները տես ՍՄ I, № 144, «Շիրակ» № 72: Այս վերջինը տարբերվում է մյուսներից իր մետրոռիթմով ($^{6}/_{8}$) և «Անձրևն եկավ» երգի բառերով:*

112. Հելլի յարին եմ, օյ, օյ, օյ: *Պարերգ է:*

113. Թովռալեն գալիս եք: *Ա. մասը վարիանտն է «Կողպա ելան սելերը» (հարմոնիկ մինոր լադ) եղանակի: Տես «Շիրակ», № 87:*

114. Այ տղա, ա՛րի, ջուրն անցու: *Երգի վարիանտը՝ տես սույն ժողովածու № 159, «Ի՞նչ կտաս ջուրն անցում»: Սկզբի երկու վարիանտների տարբերությունը (բացի տոնայնությունից) առաջին տակտի մեջ է: Չափը՝ $^{6}/_{8}$:*

115. Արմենուհին այսօր կորե: *Չափը՝ $^{6}/_{8}$: Տեքստ. դիտողութ.՝ Արմենուհին այս ճուր կորե: Նույն հարցականով է վերջանում չորրորդ տողը:*

116. Շուշան ջան: *Այս երգը հայտնի է «Երթանք սարը վազե-վազ» անունով: Երգի հեղի-*

նակն է Արմեն Տիգրանյանը, որ գրել է երգեցիկ խմբի համար։ Երգը ժողովրդականացել է, ինչպես նույն կոմպոզիտորի «Անուշ»-ի և մյուս երգերը։ Երգի մասին Սպ. Մելիքյանը նշում է, որ երգողը սովորել է գյուղում։ Երգի հորինման տարին մոտավորապես 1914 թիվն է։ Այստեղ առաջ բերված եղանակը, համեմատած Արմեն Տիգրանյանի եղանակի հետ, լրիվ չէ, չկա երգի կրկնության վարիացիան ա. և գ. տակտերի մեջ և երգի ամբողջ երկրորդ մասում։

117. Կուժն առա: *Հեռավոր վար. և գույն նախնական ձևը հանրահայտ երգի «Ջուրն առա» կամ «Կուժն առա»։ Առաջինը տես «Շիրակ» № 88 «Պիլիբի» անվան տակ, երկրորդը ԿԱԺ ՄԱ № 133. ա. և բ վարիանտները։ Միևնույն երգը մշակել են թե՛ Կոմիտասը, և թե՛ Սպ. Մելիքյանը՝ տարբեր վարիանտների տակ և տարբեր կրկնակներով՝ «Պիլիբի—շախկուռ-շուխկուռ» և «Գընա-գընա, հետիդ եմ»։ Չափը՝ $^{6}/_{8}$։ Հաջորդ քառյակների նոտաները Սպ. Մելիքյանի մոտ չկան։*

118. Լուսնակն անուշ: *Վարիանտը տես ԿԱԺ ՍՄ № 256, նույնը մշակված քառաձայն խմբի համար, տես «Հայ քնար» № 11։ Այս վարիանտում բ. և գ. տակտերի մեջ Դ. աստիճանը—լյա-ն բեմոլ չէ, ինչպես Կոմիտասի մոտ։ Կրկնակի մեջ Կոմիտասի մոտ հանդիպում ենք թե* մի *բեկար և թե* մի *բեմոլ։*

119. Եսիմ—եսիմ: *Վարիանտը՝ ԿԱԺ ՄԱ № 47, «Թագա մածուն եմ մերել», $^{3}/_{4}$։ Այստեղ չափը $^{6}/_{8}$ է։ Եղանակը չի համապատասխանում տեքստին։*

120. Կարմիր քարը տաշուկ է: *Վար՝. «Էս ճամփեքը քարոտ ա»։ Տես Ս. Դեմուրյան «Քնար»։ Չափը՝ $^{6}/_{8}$։*

121. Կարքվներ, կարքվներ: *Վարիանտները՝ «Վան» № 32, 33, Կոմիտաս. «Մոկաց հարսներ»։*

122. Բամբակը բարին: *Պարեղանակ։ Չափը՝ Սպ. Մելիքյանը նշել է $^{12}/_{8}$։ Ռիթմական միավորը $^{3}/_{8}$-րդ է, ամեն մեկ $^{3}/_{8}$-ը մեկ բախումով։*

123. Աղչիկ, անունդ ի՞նչ էր: *Պարերգ է։ Չափը՝ $^{6}/_{8}$։*

124. Ծիրան եմ ծառի ծերին: *Պարերգ է։ Բնորոշ մամենուն է՝ երկլադային ձևը։ Եղանակը «անվերջ» է։ Նման ձևին է պատկանում Ա. Բրուտյանի ձայնագրած «Սար, սար» երգը։ (ԳԱ Արվ. պատմ. և տես. սեկտորի ձեռ. ֆոնդ)։*

125. Վայ Նուբար, Նուբար: *Վար. տես ՍՄ* I, *№ 20։*

126. Ջաղչի դռնով: *Պարերգ է։ Չափը՝ $^{6}/_{8}$։*

127. Յա՜ր, արևից մեռնեմ: *Պարերգ է, ունի վարիանտներ։ Տես սույն ժողովածուի հետևյալ երգը։ Չափը՝ $^{6}/_{8}$։ Մի այլ հայտնի վարիանտը «Ես պուճուր, յարս պուճուր» երգն է։ Նա ունի բացի կիսակրկնակներից նաև լրիվ կրկնակ՝ «Արևից մեռնեմ յար ջան, բարևից մեռնեմ յար ջան, սիրել եմ կառնեմ»։*

128. Յա՜ր, արևուդ մեռնեմ: *Պարերգ է, վարիանտները՝ տես նախընթաց երգի կոմենտարը։*

129. Յար ջան էկար գիշերով: *Պարեղանակ է։ Բառերը պատահական, իմպրովիզացիոն բնույթ ունեն։ Վարիանտը՝ Ն. Տիգրանյանի ներդաշնակածն է «Զուռնի տրընգի» անվան տակ։ Այստեղ այդ պարեղանակի առաջին մասն է։*

130. Ըռ յամա՜ն: *Պարերգ է, վարիանտները՝ «Հայկո ջան», «Շիրակ» №№ 60, 61։*

131. Տույ, տույ, լաչին ջան: *Պարերգ է։*

132. Աղչի մարալ, ո՞ւմ անեն ես: *Պարերգ է, կատակային բնույթի։ Չափը՝ $^{6}/_{8}$։ Նույն խոսքերով է № 132-ը։*

133. Խնամ Պոլուզ: *Պարերգ է։ Չափը՝ $^{6}/_{8}$։*

134. Մի նեղացի իմձանից: *Հմմտ. սկզբի մասը «Գընա, գընա, հետիդ եմ» եղանակի հետ։*

135. Խնձոր քցի: *Պարերգ է։*

136. Լուսնիկի լույսը տեսա: *Չափը՝ $^{6}/_{8}$, Պարերգ է։ Եղանակը «չավարավող» եղանակների թվին է պատկանում։ Տես նույն բնույթի № 124 երգը։*

137. Ամպերն ելան կամաց-կամաց: *Վարիանտը՝ ՍՄ* I, *№ 105. «Արևն ելավ կամաց-կամաց»։ Մետրոռիթմը հիմնականում նույնն է։ Լադը տարբեր է (դորիական)։*

138. Գյուլի, գյուլի, գյուլի ջան: *Չափը՝ $^{6}/_{8}$։ Պարերգ է։ Վարիանտը՝ ԿԱԺ ՄԱ № 26։*

139. Տրրինո: *Կատակային բնույթի երգ և պարերգ: Նույն ձևի պարերգ է Լոռվա «Ընդըրը՞նո»: Այս վարիանտի տարբերությունն այն է, որ կրկնակը («ընդըրը՞նոն») սկզբում չի երգվում, այլ տողավերջում. այսպես՝*

—Աղջի Նազո, ընդըրը՞նո,
Մերըդ տանն ա, ընդըրը՞նո և այլն:

Այս պարերգերի մեջ «տրրինո» և «ընդըրը՞նո» բացագանչական բառերը ռիթմական հավելումներ են պարեղանակի մեջ:

140. Կարտոլ կիտամ, տո՛ չառնի: *Բառայակի հանգերը չեն բռնում: Զափը՝* $^{6}/_{8}$:

141. Բաղմ ունեմ շաֆրալի: *Պարերգ է: Զափը՝* $^{6}/_{8}$:

142. Չեմ առնի, ճանա ջան: *Վարիանտները տես № 143 երգի ծանոթագրությունը: Պարերի գային:*

143. Չէ՛, դադո, չէ՛, բաբո: *Վարիանտները՝ «Վան» №№ 16, 78, սույն ժողովածուի №№ 33 142:*

144. Հոլը, ճոլը: *Պարերգ է: Տեմպերի նշումները պարերգերի մեջ վերաբերում են երգի սկզբի մասին: Շարունակությունը հետըզհետե արագանում է: Այդ արագացումը բնորոշ է գրեթե բոլոր պարեղանակներին: Գ. և դ. տողերը կրկնակ են:*

145. Ամաճ, տերտեր, ամոթ ա: *Զափը՝* $^{6}/_{8}$, *երգիծական: Երգի կառուցվածքը ցույց է տալիս, որ այս մեղեդին եղանակի երկրորդ մասն է, որն իր հերթին երգվել է որպես մի ինքնուրույն եղանակ: Տես Ա. Ժողովածուի մեջ № 96 երգը:*

146. Կարմիր վերմակով տղա: *Պարերգ է:*

147. Թարոյի դատեն, Դրուրի ձոր: *Զափը՝* $^{6}/_{8}$: *Երգիծական պարերգ է: Վարիանտը՝ ԿԱԺ ՄԱ № 63:*

148. Հով իճե: *Զափը՝* $^{6}/_{8}$: *Վարիանտը՝ «Հոդալո ջան»:*

149. Սասունա սարեր: *Պարերգ է: Զափը, ստույգը* $^{6}/_{8}$ *պետք է լինի:*

150. Լուսնակն ելավ: *Շերամի երգի ժողովրդականացած վարիանտներից է: Տես «Շերամ», էջ 63:*

151. Դիճ լե, լե, դիճ լե, լե: *Զափը՝* $^{4}/_{8}$: *Պարերգ է, պատմողական բնույթի:*

152. Հրաժեշտի երգ: *Զափը՝* $^{6}/_{8}$:

53. Վո՛ւյ, վո՛ւյ անա: *Երգի ա. մասը կառուցված է պարեղանակի մեղեդիայի վրա, սակայն տեմպը ավելի դանդաղ է: Այս երգի կրկնակը սկսվում է չորրորդ տողից, որով խախտված են բուն երգի և կրկնակի մասերը: Երգի չորրորդ տողը պակաս է:*

154. Թագվորի գովքը: *Հարսանեկան երգերի, պարերգերի և պարեղանակների շարքից: Վարիանտները՝ ՍՄ I, №№ 75, 76, 104, «Շիրակ» №№ 46, 111, 112, ԿԱԺ ՍՄ, №№ 220, էջ 76, №№ 4, 5, 6, ԿԱԺ ՄԱ, №№ 95, 96, 97, 98: Կոմիտասի մշակած հարսանեկան երգերից են՝ «Փեսին արդուզարդը» և «Փեսին գովքը»:*

155. Հարճազ: *Պարերգ է: Վար՝. ՍՄ I, №№ 65, 195:*

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ

(Մանկատուն, 1926 թ.)

156. Կայնել ես վարդի ծովին: *Վարիանտը՝ ԿԱԺ ՄԱ, էջ 26, № 3: Չափը, սուսյը՝ $^3/_4$ է սկզբից $^1/_4$ պաուզա: Նույն պաուզան պետք է լինի երգի երկրորդ մասի ա. տակտում:*

157. Վա՛յ, ճա՛նի, վառա:
(Գյուլվերանից ելանք, հասանք մեր գյուղը) Այս երգի եղանակի, նաև տեքստի շեշտերը սույն տակտավորմամբ ($^5/_4$) չեն համընկնում (ե՛լանք, փոխ. ելա՛նք.— 2-րդ տակտ. հա-սանք փոխ. հասա՛նք—3-րդ տակտ) և այլն: Համանական չափը հիմնականում պետք է լինի $^3/_4$ կամ $^6/_4$: Նման չափ ունեցող երգերի շարքին են պատկանում Կոմիտասի ԿԱԺ ՄԱ №№ 78, 79, 92 երգերը:

Այս երգի չափավորման մեջ Սպ. Մելիքյանը ունի $^6/_4$, սակայն՝ $^5/_4$-ի հետ ըստ որում միևնույն ֆրազը՝ մի դեպքում $^5/_4$-ով է նշում (ա. տակտ), փոխադրելով թույլ վանկը ուժեղ ժամանակի վրա (բ. տակտի առաջին քառորդը), մյուս դեպ-քում $^6/_4$-ով է նշում (1-ին, 3-րդ, 6-րդ, 9-րդ տակտերը):

158. Մարգարի գյուղացի: *Չափը՝ $^6/_8$: Պարերգ է: Երգիծական բովանդակությամբ: Սույն երգը բուն հայ գեղջուկ երգերին չի պատ-կանում, քաղաքի պարեղանակների ազդե-ցության կնիքն է կրում. հարմոնիկ լադին փոխարինել է դորիականը: Գյուղական պարզ տիպի նվագարանի (գարմոնիկա) մեջ ձայնաշարում մեծացրած սեկունդա չի լինում: Դրա ազդեցությամբ լադը փոխվել է և դարձել է դորիական վարիանտ: Նման երևույթի հանդիպում ենք բազմա-թիվ երգերում: (Տես սույն ժող. № 113 երգը:*

159. Ի՞նչ կտաս ջուրն անցում: *Վարիանտը՝ «Այ տըղա, արի ջուրն անցու»:— Սույն ժողո-վածու № 114: Չափը՝ $^6/_8$:*

160. Օսանձա: *Վարիանտը՝ տես Սպ. Մել. I, էջ 36, № 9. «Օսան ջան»: Չափը՝ $^6/_8$: Պարերգ է: Երկու երգերն էլ նույն չափն ունեն, տեմ-պերը տարբեր են (96 և 112):*

161. Ես որ լինեմ: *Վար. տես «Վան» № 32. Չափը $^6/_8$ վերջինում հարմոնիկ մինոր է: Պարերգ-դխալոզ:*

162. Շուտ-շուտ քելա: *Կոմիտաս «Գընա, գընա, հետիդ եմ»:*

163. Կքելա, կցոլա: *Չափը՝ $^6/_8$: Բառերը փո-փոխված են («Սերն անուշ է, յարն անուշ է»):*

164. Յա՛ր գյուլա: *Պարերգ է: Չափը՝ $^6/_8$:*

165. Ավգի շուշան: *Պարերգ է: Չափը՝ $^6/_8$:*

166. Իմ սիրածը սալդաթ էր: *Չափը՝ $^6/_8$: Պարերգ է: Մեներգողը և խումբը երգում են հա-ջորդաբար թե կրկնակը, և թե երկտողի կրկնակի երկրորդ տողերը: Տեքստ. դի-տողութ՝. «Հավայ լուսի» համանական է «Հա, վալլասի»:*

167. Ջուլո: *Երգը խմբի համար մշակել է Անտ: Մայիլյանը: Չափը՝ $^6/_8$: Այլ վարիանտը տես սույն ժողովածու № 5:*

168. Տըր ճինայ, ճինայ: *Վար՝. «Չիմ վզին» ա. մասի եղանակը:*

169. Որբի երգը: *Վարիանտ ժողովրդական երգի: Տեքստի մեջ օգտագործված են ժողովրդա-կան երգերի քառատողերը: («Մեր որբերի սիրտը», նախնական «Ղարիբներու սիրտը»): Սպ. Մելիքյանի գրանցման մեջ բանալին մոտ նշան չկա: Լադը ֆրիգիական է (տո-*
նիկան մի տոնով է) կվինտայի մեջ կադ-
մից է իջեցված (սի բեմոլ):

170. Ջալո՛, զալո՛ ջան, զա՛ր մեյդան: *Պարերգ է: Կրկնակի բառերը պատահական են:*

171. Սամար ամման: *Վարիանտը՝ ՍՄ I, էջ 61, № 51, «Շիրակ» № 10: Սույն երգի 3-րդ և 4-րդ տողերը չեն համընկնում մելոդիային:*

172. Լոյլըմ լոյ: Պարերգ է: Չափը՝ ¢ Վարիանտը՝ ՍՄ I, № 93:

173. Խնամի ջան: Վար՝. «Արագիլ բարով եկար» կամ «Ճակալի»: Պարերգ է: Չափը՝ $^{6}/_{8}$:

174. Խալալե, ջան լե, լե: Պարերգ է: Տեքստ. դիտողութ՝. «Ջան լե, լե» համանական է «Ջալալ է»:

175. Շիրին Թելլո, վա՜յ Թելլո ջան: Վար. տ. Կոմիտաս «Հոդվածներ և ուսումնասիրություններ»-ի ժողովածու, էջ 19: Չափը՝ $^{2}/_{4}$:

176. Գյուլերս թաքացել ա: Չափը՝ $^{2}/_{4}$: Պարերգ է:

177. Սոնենի կողրեցին: Վարիանտ: Այս մելոդիայի այլ՝ Փրիգիական լադը: Վարիանտը տես Արշ. Բրուտյանի ժողովածուի մեջ («Սար, սար»):

178. Ժուլիկ տերտերի գյադեն: Չափը՝ $^{6}/_{8}$: Պարերգ, երգիծական:

179. Հա՜յ, առնում եմ, առնում եմ: Չափը՝ $^{6}/_{8}$: Վարիանտը՝ ՍՄ հատ. I, № 22:

180. Հո՛ Մայրամե, Մայրամե: Չափը՝ $^{6}/_{8}$: Պարերգ է: Վարիանտը՝ ՍՄ I, №№ 80 և 192:

181. Լե, լե գդե, Մայրամե: Չափը՝ $^{6}/_{8}$: Պարերգ է:

182. Ո՞ւր գնացիր, ո՞ւր եկար: Վար՝. ԿԱԺ ՄԱ, էջ 42, № 140: Չափը՝ $^{6}/_{8}$:

183. Մաքրունի ջան, Մաքրունի: Վարիանտը տես «Վան» № 54: Պարերգ է: Չափը՝ $^{6}/_{8}$:

184. Ես մի ծառ եմ ծիրանի: Գուսանական-ժողովրդական: Չափը՝ $^{6}/_{8}$: Տեքստը փոփոխված է:

185. Կորած էշը: Կատակերգ է, գուսանական-ժողովրդական: Չափը՝ $^{6}/_{8}$:

186. Ո՞ւր գնացիր: Պարերգ է: Չափը՝ $^{6}/_{8}$: Երգը լեզվախառն է հայ-ադրբեջանական: Կրկնակները ադրբեջաներեն են:

187. Ջանըմ լոքի յար ջան: Պարերգ է:

188. Յա՜ր Սոնա: Չափը՝ Սպ. Մելիքյանի մոտ $^{9}/_{8}$ է՝ 2—2—3—2, առանց ենթատակտերի բաժանման: Այստեղ մետրուիթմը ճշտել ենք և դարձրել $^{4}/_{8}$, $^{5}/_{8}$: Պարերգ է: Պատկանում է չվերջավորված պարերգերի թվին:

189. Զմփիկ, զմփիկ զարին ա: Պարերգ է, վարիանտը տես նույն ժողովածու № 63:

190. Երգիս գլուխ մի սաս: Պարերգ է: Կրկնակը ադրբեջաներեն է:

191. Թուրունի դաստա: Պարերգ է: Առաջին և երրորդ տողերի երկրորդ մասերը, նաև երկրորդ և չորրորդ տողերը ամբողջապես կրկնակներ են: Վարիանտներից մեկը Կոմիտասի ձայնագրածն է «Զինար, արի բան սաեմ»: ԳԱ Արվեստի. պատմ. և տես. սեկտոր, Կոմիտասի ձեռագրային ֆոնդ, տետր 10, էջեր՝ 1ա—2:

192. Խանիմո, ջանիմո: Պարերգ է:

193. Հե՜յ, վա՜խ, զուլում է: Չափը, ստույգը՝ $^{4}/_{8}$ է:

194. Ա՜յ Նուբար, զալում Նուբար: Պարերգ է, վարիանտը՝ «Էսօր նորը նորել է», «Ճիրակ» № 64: Լադը տարբեր է: Կան նաև «Նուբար»-ի այլ վարիանտները:

195. Սարո ջան: Պարերգ է:

196. Երանի՜ ձեզ, բարձր սարեր: Դուբեիթ *(2 բեյթ)։ Տողերը ութ վանկանի են, 3-ից 5 տուն, տունը՝ 4 տող։ Գուսանական տաղաչափության ամենապարզ և գործածական ձևն է։ Չափը՝ $^4/_4$ է, առանց ենթատակտերի բաժանման։ Բնորոշ է իր ասերգային ձևով (բեչխատատիվով)։*

197. Որբնավի հողբաժանությունը: *Դուբեիթ է (տես նախորդ երգը)։ Բացի այդ, այս խաղը* դաստան *է կոչվում, պատմողական է, նկարագրում է մայր անցյալի խեղճ, իրավազուրկ գյուղացու վիճակը։ Հեղինակն է Սրապիոնը, որն իր անունը հիշատակում է վերջին տան տողերում։*

198. Սիրո գերի, ո՞ւրտեղ ես: *Ջիվանի, «Բո փափագով» երգի փոփոխված վարիանտն է։ Փոփոխված են՝ եղանակը և խոսքերը, բացի «ո՞ւրտեղ ես» բառից, որով վերջանում է տողը։ Տես «Ջիվանի» ժողովածու, էջ 338։ Վերնագրված է «Թոփխանա դիվանի», որ գուսանական ձևերից մեկն է։ Ոտանավորը բաղկացած է 3 տնից, ամեն տունը 4 տողից, տողը 15 վանկից։ Մյուս հանգավորման և տաղաչափական ձևերի մանրամասնությունները ինչպես այս, նույնպես և գուսանական այլ խաղերի վերաբերյալ տես Գ. Լևոնյանի «Աշուղները և նրանց արվեստը» աշխատությունը։ Երևան, Հայպետհրատ, 1944 թ.։*

199. Սմբատի ճեքիարից: *Եղանակի վարիանտը՝ Պայծառի «Խոսեք Հայաստանի լեռներ»։*

200. Լսիր աղերսանքս: *Ամրոյի հեքիաթից։ Ձեր՝ դաստան։ Տողը 11 վանկ է՝ 2 մասից 6 և 5։ Երգի ա. մասը գեղջուկ ժողովրդական եղանակներից է։ Տես «Շիրակ» № 149։*

201. Ամրոյի խաղը: *Նույն։*

202. Մուշտազադ: *Տողերը միատեսակ չեն, ունի երկար և կարճ տողեր, որոնք իրար են հաջորդում՝ երկարը՝ 14 վանկ է, կարճը՝ 6 վանկ։ Նման ձևին է պատկանում Ջիվանու «Տրտում ու տխուր շրջապայող» ոտանավորը (Ջիվան, էջ 257)։ Սույն տեքստի 2-րդ և 3-րդ տները վերականգնել ենք։ Չափը 12 է։ Սկզբի նոտան նախատակտի մեջ պետք է լինի։ Երկրորդ տողի «պես» վանկի նոտան ընկնում է չորրորդ տակտի մեջ։ Վերջին* դո *նոտան պետք է ունենա 2 տարբեր տևողություն՝ ա. կրկնության դեպքում $^6/_8$ և բ. վերջավորության դեպքում՝ $^9/_8$ կամ ֆերմատա։*

203. Քյարամից: *Դաստան է։ Սպ. Մելիքյանի մոտ երեք ենթատակտ է (3+2+3)։ Ավելի նպատակահարմար է երկու ենթատակտ ($^5/_4+^3/_4$)։ Այս տակտավորմամբ հեշտանում է ընթերցումը և պարզվում է եղանակի մետրոռիթմական նկարը։ Երաժշտության վարիանտը՝ տես ՍՄ I, № 115։*

204. Էդ ոսկերել մազերդ: *Շերամի երգն է։ Տեքստը թերի է։ Թե՛ եղանակը և թե՛ բառերը փոփոխված են։ Տես «Շերամ», էջ 82, «Էդ ոսկեթել մազերդ»։*

205. Ո՛վ անճանգիստ անճար ոտքեր: *Հեղինակը կին գուսան Արաքսին է, «Քյոռօղլի դուբեիթ»-ի հորինողը։ Խաղը կառուցված է հայ ժողովրդական գեղջուկ երգերի եղանակով։*

206. Զմռան ու գարնան վեճը: *Նման է գուսան Հավասու ամիսների վեճին, որ ասերգային կառուցվածք ունի։*

207. Շատ ման գալող կնկա բանը: *«Քյոռօղլու» վարիանտն է, դուբեիթ։ Խոսքերը Մահուրի աշուղ Գևորգինն են։*

208. Քյոռօղլի դուբեիթ: *Երգի վերջավորությունը ամբողջացած չէ։ Տեքստը նոր է։ Հեղինակն է՝ Արաքսին։ Չափը, առույգը՝ $^6/_8$ է։ Երկրորդ տակտի վերջին նոտան պետք է լինի նոր տակտի մեջ և տևողությունը ոչ թե $^3/_8$, այլ $^6/_8$, այսինքն մեկ ամբողջ նոր տակտ ($^6/_8$-ով հաշված)։ Ամենավեր-*

ջին նոտան՝ ֆա-ն եւ պետք է լինի նոր տակտի մեջ և տակտը պետք է լինի 6/8, ըստ որում ֆա-ից հետո պետք է լինի մի 1/8, իսկ դրանից առաջ՝ դարձյալ ֆա 1/4 լիգայով միացված իր նախորդ ֆա 3/8-ին։ Այդ բոլորից հետո պետք է լինի երգի վերջավորությունը՝ «այսպես բան է, հայ» ֆրազի կրկնությամբ։ Առաջ ենք բերում երգի լրացված մասի երաժշտական պատկերը։

209. Օտար երկրից: *Դուրեկիթ և դաստան։ «Ուստի գուքաս գարիբ բըլբուլ»-ի վարիանտը։ Եղանակի ա. մասն է «Աշուղ Ղարիբ»-ից։*

210. Քյարամի գյոզալլամա: *Դաստան, միաժամանակ դուրեկիթ է, (տողերը 8-ական վանկից են)։ Չափը՝ 3/8—4/8 է։ Ա. տակտի մեջ «ըն-կա» բառի նոտաներն են, ա. վանկի վրա՝ 1/8-ը, և բ. վանկի վրա՝ 1/4։ Երկրորդ տակտում «ջը» վանկերը պետք է փոխադրել նույն տակտի լյա 1/4 նոտայի տակ։ Խաղի եղանակը «Քյոռօղլին վաճառական» էպիզոդի եղանակն է։*

211. Վառվում եմ Ասլի, վառվում եմ: *«Ասլի և Քյարամ»-ից։ Երգը սկսվում է «Ով նազելի մի լար բամ է» տողով։ Վարիանտները տես «Շիրակ» №№ 126, 127։ Ամենից շատ տարածված վարիանտը № 126-ն է, աննշան փոփոխությամբ։*

212. Ոչխարն ու գելը: *Չափը՝ պարզ 2/4 է, ա. քառորդ մասը նախատակտ է, երկրորդը* սոլ *նոտայից սկսվում է նոր տակտ և այլն մինչև վերջին* սի *բեմոլը, որ առանձին տակտի մեջ պետք է առնվի։ Այդ վերջին քառորդ նոտան մնում է նախատակտին։ Հեղինակը չի պարզվել։ Կա վարիանտ Սայաթ-Նովայի մոտ՝ «Գելն ու չոբանը»։*

